



Հ Ա Գ Ի Ն

Զ. ՏՄԸԻ, 1967, 80ԵԼԻԾ
digitised by A.R.A.R. ©

ԹԻԻ 7

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد اوتين كارنيك فزانجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

բ Ա գ ի ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ՊԵՆԱՆՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐԻՏՈՍԹԻ

ԷԱՐՁ ԽՄԱԳԻՐ
 Զ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՄԱԳԻՐ
 Դ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՄԱԳՐ ՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Ե. ԳԵՂԱՐԴ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ԿՈՓԱԶԵԱՆ
 Վ. ՇԱԿԱՆ
 Ժ. ԱԹՅՈՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐ
 Ժ ԵՂ. ՊՅՅԱԶԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԻ
G. SASSOUNI
 Rue Sélim Boustany, Beyrouth - Liban

Հեռագրային թիվ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- ԱՐՄԱՆՏ
- Հ. ՅՈՎՍԷՓԵԱՆ
- Ս. ԲԵՒՈՒԻՆ
- ԱՐՇԻ
- ՀԱՅ-ԳԱԼ
- Ռ. ԳԱՌՕՆԷ
- Մ. ԱՐՓԻ
- Զ. ՈՐՐՈՒՆԻ
- Ս. ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ
- Գ. ԱՅՆՄԵԱՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Գ. ԳԵՂԱԿ
- Լ. ԳԱՐՄԷՆ
- ՇԱՀՊԱՆ
- Ա. ՍԵՒՈՒՄԵԱՆ
- Լ. ՄԿՐՏԻԶԵԱՆ
- Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
- Պ. ՍՆԱՊԵԱՆ
-
- ՆՇՄԱՐՆԵՐ

(X)

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍԻ

Ձ. ՅԱՐԻ, ԹԻՐ 7

ՅՈՒՆԻՍԿՍ 1987

ԴԷՇՈՒԹ

Պարսկական մեր դաշուժին մէջ, «Բազմ» ունի աշխատակիցներու եւ բաժանորդներու շանք ցանց մը, որ օրըսօրէն կը նուազի եւ աւելի կ'արժատանայ: Եւ աշխատակիցները եւ բաժանորդները պարզ թերթի մը վրայ ինկող պարզ ուղղով չեն նայիր անոր, այլ դաս կը նկատեն Սփիւքի գրականութեան արժանապատուութիւնը բարձր պահելու կոչուած վերջին փորձը եւ այդ առաջնութեան կամար, իրենց կարգին, չեն խընայիր ոչ մէկ ջանք:

Այսպէս կը մտածեն ամէնքն ալ, սկսած Արամ Գառնեկէն մինչեւ իր առաջին փորձերը կատարող խանդավառ տղան, եւ, ինչպէս ասկէ առաջ, նաեւ աշուհներու, կը խոստանան իրենց լուսադրոյնով մասնակցիլ մեր ճիւղին:

Ծանօթ դէմքերու եւ բուրբոյն ետք առնենք առաջադրութեամբ, մեր արամադրութեան ասի ունինք շարք մը բանաստեղծութիւններ, որոնցմէ փունջ մը կը հրատարակենք ստորեւ:

ՈՂՋՈ՛ՅՆ ՔԵՁ ԵՐԿԻՆՔ

Ողջոյն քեզ երկինք...
Իրաւունք ունես ինձ վերից նայել.
Նոյնիսկ՝ չտեսնել ինձ այս ծմակում, -
Իրաւունք ունես:
Ամբողջ ամիս է ես քեզ չեմ նայել,

✱

լուսնիդ՝ ոսկեհեր
Ու ամպիդ գահել...
Եւ այս իմ ցածում
Ես աստղ ու լուսին ու ամպ եմ դառնի,
Կրժ քիս տակ վառնի՝ մի կրճատ արեւ, -
Իրաւունք ունես ինձ վերից նայել:

ԱՆՆՈՍ ՔԱՐԸ

Ես սիրում եմ անխօս քարը,
Որ կրում է գաղտնիքն իր մէջ
Սարի, դարի.
Ու անտարբեր՝ ժամանակի
մտրակի տակ՝

Տոկում է յար,
Դիտում է սառն,
Ու հեզմում դառն՝
Սփինճայից մի լաւթեամբ,
Համբերութեամբ ու լրջութեամբ՝
Ժամանակի վազքն անտանձ...

Ես սիրում եմ անխօս քարը,
Որ կրում է բեռն իր մէջ,
Մեծ լեռների սերն իր մէջ,
Ու լեռների լեռն իր մէջ՝
Մասիս Սարը...
Ես սիրում եմ անխօս քարը:

ԱՐՄԱՆՏ

ՍՈՆԵՏՆԵՐ

1.

Անխոնց համբարդ՝ խաւժուժ գետ,
Ջրերով պաղ ու արծաթ,
Ո՛ւր եւ վազում որպէս մետ -
Թեքեւ հեւեով սրբնթաց:

Յատկութեով դար ու փոս,
Հագարալար բարի պէս,
Քանի՞ մահ եւ դու տեսի,
Քանի՞ ծնունդ յաղթերգի:

2.

Ո՛չ մի ծաղիկ աշխարհում
Շաղ ու ըսյրով չի մնում.
Ո՛չ մի կազմի հաստարուն
Դարեր փարթամ չի մնում:

Ո՛չ մի արեայ յաղթապանծ
Փառք ու գործով չի մնում.
Ո՛չ մի օրէնք յաղթերգած,
Անշեղ, անեղծ չի՛ մնում:

3.

Սիրայ սասուածն երբ հայեց,
Մեր վառ սրտերը կիսեց.
Զայգ կէտերը՝ իմ ու էռ,
Իբար սուլեց, միացրեց:

Դրանից է որ անհում՝
Ինձ եւ սիրում, կարտում,
Դրանից է՝ խենթի պէս
Քե՛զ եմ տեսնում, երազում:

4.

Օ՛, այս բերբին սպիտակ,
Շա՛տ ենք անկեղծ վառասել.
Այս տառերին՝ անսպակ,
Շատ ենք շաայլ գործածել:

Ա՛խ, բէ բուզբը կարեկից,
Ու գրերն էլ չիմեր,
Կը մեռնէինք ծով վտից՝
Թէ՛ բուզբ ու գիր չիմեր:

ՀԱՅԿ ԵՐԿՐԱՒԵԱՆ

ՁԵՄ ԹՈՂՆԻ ՈՐ ՀԵՌԱՆԱՍ

Մենուքեանս մէջ, ուր բանձր ու անբախանց խաւարն էր պարուրել ինձ՝ դռն, որպէս մի ջահ, մի երկնային փարոս, լոյս տարածեցիր իմ յուսարեկ սրտում:

Դռն, որպէս մի փերի բարի ու հեզ, անմեղ ժպիտը դէմքիդ, ինչպէս ճանաչները ոսկի արեւի, անբիծ լոյս տարածեցիր կեանքիս սեւակնած խաւարում եւ գուրգուրացիր մեզմօրէն տանջուած ու տառապած հագուս:

Ինձ ոչ ոք է հասկացել, ինձ ոչ ոք է ճանաչել, ես մենակ եմ, ի՛մ սէր, ես չեմ բողբի դու հեռանաս:

Միշտ ինձ-ինձի, միշտ միասին, աշխարհի այս հեռուոր անկիւնում, բոլորից հեռու կը լինենք ես ու դու, բոլորից անյայտ, բոլորին անտես: Քո խօսքերը սպեղանի են վերքերիս ու երգերդ նոր յայտի երփնեբանգ շաղիներ են կերտում խորտակուած յայտերիս ճամբէքի վրայ:

Կեղծ ու ճանիք խօսքեր ու խառնումներ ես շատ լսեցի, իսկ իմ անկեղծ ու անտուտ լեզուն ոչ ոք հասկացաւ եւ բոլորը հեռացան ու մոռացան ինձ:

Ես շատ փնտռեցի գտնել մէկին, որ ինձ հասկանար այնպէս՝ ինչպէս կամ ես:

Անկեղծութիւնս արհամարհեցին, պարզ ու վնաս էին խօսքերն իմ, իսկ նրանք ցանկանում էին կեղծ ու պատիւր, շողշողուն խօսքեր, որ իմ լեզուն երբեք չկարողացաւ արտայայտել:

Իսկ դռն, դու, ա՛՛վ երեշտակաման գեղեցկութիւն, մրայօն աչերդ անմեղութեան ճառագայթներ են արտացոլում ու դէմքիդ վրայ արդարութեան գեղատեսիլ ժպիտներն են շողշողում. ա՛՛վ ես դու, ես չեմ տեսել Քեզ ոչ մի տեղ այս աշխարհում, ո՞վ է ուզարկել Քեզ, ինձ մտտ:

ՍԻՐԱՑ ԲԵԴՈՒՆ

Թեհրան

200-ԱԿ

ԻՄ ՀՈԳՈՒ ԴՈՒ ԿԷՍ...

Այդ դա՛նես, դա՛նես -
 Ի՛մ արիւնակէզ,
 Որ սրտիդ խորում
 Արդար խօսքերդ աստուածայեզու
 Կեփտար են ծորում,
 Ու գովացնում են հոգիներ տաչար,
 Ինչպէս արիւրներ նոր կաթնափրփուր,
 Հոսում ձորէ-ձոր,
 Գոռում են քեզ հետ՝
 Պահում արահես... -
 Այդ դա՛նես, դա՛նես,
 Իմ հոգու դու կէս:

Այդ դա՛նես, դա՛նես,
 Իմ բարի՛, իմ հե՛զ -
 Որ սրտումդ բոցեդ
 Դրել ես կնդրուկ՝
 Ծխում ծփանում յոյզերդ անմեզ,
 Ու ծուխն է բռնում երկինքներ անհաս,
 Միշտ անհաս պահած
 Լեզուդ արեւհաս... -
 Այդ դա՛նես, դա՛նես,
 Իմ հոգու դու կէս:

Այդ դա՛նես, դա՛նես՝
 Քո գրչով բեհեզ,
 Եւ փաթարկատաղ -
 Որ Արարատը սեղմել ես սրտիդ,
 Քեզ ընկեր, քեզ խաղ...
 Քո «եօթ բաւ» մայրից եօթը արծուանիտ
 Ամբոց ես կերտում շանթերի դէմ խիտ -
 Այդ նոր կառոյցում՝
 Արդա՛ր հատուցում... -
 Այդ դա՛նես, դա՛նես,
 Իմ հոգու դու կէս...

ԱՐՇԻ

Քեչբան

Ա Ն Պ Ի Ր Ա Ն Ի Կ

Սուրբ քո, Անդրանիկ, մասունքի պէս անգին,
 Թանգարանն եմ դրել ապական տակ անշունչ,
 Նա որ կեանք էր փրկում օրհասի պահերին,
 Հիմա ինքն է պառկել դարակում անտրտունջ:

Ո՛վ ըմբոստ դու արծիւ նայիրեան աշխարհի,
 Անարգար օրերի անվրէպ Նեմեզիս,
 Քեզ գուշումն է ծնել բովերում անմահի,
 Որ յազբես հեղեղին ինչպէս Նոյն ու Մասիս:

Ո՛վ դու սեծ գորավար, արիւնքս մեր դարի,
 Ո՛ր մնաց այրուձին քո անյաղք ու հզօր,
 Քո մէջ կար հայգուկի խիզախ սիրտ մի արի
 Ու սիրով աւլցուն կար ազբիւր անտուգ:

Դու զարձել ես արդէն առասպելի եւ գրոյց,
 Ոնց հայոց լեռների լեռնացած մի բողոք,
 Դու արզար մեր դատի շշեղուղ ուղեցոյց,
 Կրակին դիմացող փաստաբուղբ անաղոք:

Սուրբ քո, Անդրանիկ, մասունքի պէս անգին,
 Թանգարանն եմ դրել ապական տակ անշունչ,
 Բայց ինչո՞ւ, ա՛հ, ինչո՞ւ յոգնատունջ սուրբ քո դին
 Դեռ քալածում է օտար ափերում սառնաշունչ:

ՀԱՅ-ԳԱԼ

Քաւրիզ

ԳԱՐՆԱՆ ՄԷՁ ՁԻՒՆ

Ձնծաղիկներն անտեցին
 Թէ ուր որ է գարուն կը գայ .
 Կը կարկաչեն առուակ, գետակ,
 Նարից կ'երգեն գետ ու աղբուր
 Եւ կը ծաղկեն ծաղիկները
 Ծաղիկները՝ հագարաբայր :
 Կը զան շուած բռչուններն հա,
 Հաւք ու ծիծառ ու սարեակներն
 Այցի կը զան նոր գարնան հետ :
 Սակայն դարձեալ ցուրտ է ու ձիւն,
 Ձիւն է մաղում սրտիս խորքում,
 Անպ ու անձրեւ, տեղատարափ,
 Փոքօրիկ է այնտեղ ու ցուրտ :
 Այնտեղ կարծես ժամանակն էլ չի փոխում
 Ցուրտ է ձմեռ սրտիս խորքում,
 Մռայլ մի ամպ կախ է ընկել այնտեղ հիմա
 Ու անգաղար անձրեւում է,
 Արտիս մէջ ցուրտ ու փոքօրիկ, տեղատարափ :

ԹԵՄԱ ԳԱՌՕՆԷ

ՍԵՒ ԱԶԵՐԻՒԴ ՄԷՁ

ԳլՎճդ մռայլ էր՝	Շուրքերդ սիրավառ
Հանդիպեցի Քեզ .	Ձրուցում էին .
Արցունքն էր խուժել	Բայց ազերս չկար
Սեւ աչերիդ մէջ . . .	Սեւ աչերիդ մէջ . . .
Կարօտի շիթ չէր ,	Յուզումնքն էր անբառ
Ոչ էլ մի խնդրանք .-	Կոկորդդ սեղմում .
Այլ՝ մեղմ մեղանչում	Մի քախժուտ երգ կար
Սեւ աչերիդ մէջ :	Սեւ աչերիդ մէջ . . .

Գաղտնիք կար խորքում
 Ու կարօտի կանչ .
 Պատկերս էր լռում
 Սեւ աչերիդ մէջ :

ՄՈՒԹ-ԱՐՓԻ

ԹԵՂՐԱՆ

2. ՈՐՐՈՒՆԻ

Մ Տ Ա Ծ Ո Ւ Մ Ն Ե Ր

Կը նախանձիմ ձեզի, ընկերներ, ձերգ-
մէճեան, Կոստանդեան, կը նախանձիմ
ձեզի: Այս ի՞նչ համայնատարած անտար-
բերութիւն: Այս ի՞նչ աստուածային ար-
համարհանք: Կը զրէք, լա՛ւ, կը զրէք
ինչպէս կը խմեն ատուպանքը, ինչպէս
կը խմեն ալբոլը, ումպ առ ումպ, լեզուն
չփշփոցնելով զիմ զին վրայ: Յետոյ կը
չպրտէք թուղթի թերթիկները հոս հոն,
անկիւնէ անկիւն, իբրեւ թէ անոնք ըլլա-
յին իրենց պարունակութենէն պարպուած
թուղթէ տարտակներ, անպէտ:

Եւ դեռ եթէ աղբանոց չէք նետեր:
Կը զրէք, բայց ձեր դրածին շեղքը
չկայ:

- Հոս է կարծեմ, չէ հոս ըլլալու է,
կ'ըսէք երբ ձեզմէ քան մը կ'ուզուի, օ՛հ,
միայն կարդալու համար:

- Ձեմ գիտեր ուր է, փնտռէ, կ'ըլ-
լայ վերջին խօսքը:

Իսկ ես, մարդ՝ կարգ ու կանոնի,
կարգապահութեան, կ'ուզեմ որ գիրերս
հազնին իրենց տօնական պատմուճանը
ու կանգնին գրադարանիս մէջ ուրիշ
գիրքերու կողքին, քով քովի, բարեւի
կեցած, որպէսզի ամէն անգամ անոնց
առջեւէն անցած ատենս, ըսեմ ես ինքս
ինծի:

- Ահա ստիկ տառապանքիս եւ ու-
րախութիւններու վկաները:



Գիրքերս՝ ապացոյց որ ապրեցայ:
Հեռուցայ ժամանակին տապալէն, որ աջ

ու ձախ հարուածելով կեանքը՝ կը յանձ-
նէ մոռացութեան:

Ա՛հ, երանի թէ կարելի ըլլար միայն
մէկ դիրք աւալ, ինծի համար, կեանքիս
իմաստը:

Այդ մարդը աղահ է: Մէկ թէ հա-
զար մէկ գին է: Այն ատեն... այն ատեն
կ'իյնա ամօթին ծոցը:



Ես կը ճանչնամ մէկը, որ փոխանակ
հանրահառքէն ցատկելու, ճիշդ իր ասանը
առջեւ, մինչեւ կայան կ'երթար, յիսուն
քայլ ետ դալու ստիպուած:

- Մինչեւ հոն վճարած եմ, - կ'ըսէր:



- Բայց սիրտս ուզում է, - ըսաւ
կին մը:

Կոտրէ՛ սիրտդ եթէ կ'ուզես ապրիլ:
Բայց ինչպէ՞ս ապրիլ առանց սրտի:



Այպէս Կոսն, ոտքը զրան սեմէն
դուրս նետելէ առաջ, խորհուրդ կու տայ
ինքն իրեն:

- Ձգո՛յլ, Այպէս, սիրտդ մի ձգել
իբր տեղը, ձեռքիդ մէջ առ եւ, ի հարկին,
լաւ մը սեղմէ:

և

Կը նախանձիմ նաեւ հրէշիկն՝ որ նախանձորդն է: Իր շարչարանքներուն եւ իր անկումներուն: Կրակին համար որ կը մըկէ, կը մոխրացնէ զինքը ու կը վերածընի ինքն իր մոխիրէն, փինիկ թռչունին պէս:

Մինչդեռ իր գոհը կը գալարի գետնաքորչ, կը տուայախ աչքերը ուղղած զէպի երկինք, աղիողորմ, ինքը՝ նախանձորդը, հրէշը, կը սաւառնի դժոխքի իր գրախտին մէջ:

և

Ձարմանալի է, որ երաժշտութիւնը արուեստներու արքան նկատուած է, երբ ան ամէնէն հասարակն է, վասնզի, եթէ արարչութեան ամենակատարեալ գործը մարդն է, մարդը իր լեզուով կը գրուէ այդ ստորոգելին: Գի՛րը:

Կը հասկնաք Հիմա, որ զբողբ աստուածութեան պէս բան մը եղած ըլլայ: Կամ սասանան, եթէ կ'ուզէք, միեւնոյնն է, մինչդեռ երաժիշտները հարստիքի ու Քէյֆի օրերու գունաքիներ: Ձայնը: Կենդանական աշխարհը վերէն մինչեւ վարի յարկը ծայն ունի: Ատոր համար զգայուն են նուազին: Ձայնարանական արուեստ մը: Սձը պարել կը սկսի:

Ձայնը, երբ մաթեմատիկական զգեստ կը հագնի, հաճելի է: Նուազը կը վայփայտէ ականջը, կը շողջորթէ, կը շողջործէ: Ատոր համար կը սիրուի ականջ ունեցողներէն: Տուէք զիբ մը, բերաննիս բաց պիտի մնայ: Գիրը, նախ պէտք է սերտել, անցնել խմայականութեան երկինքէն:

Հասկնալի է, որ Մէթերլինկ մերժած ըլլայ Տըպիտի միջնորդութիւնը: Մէթերլինկ սպասուորի պէտք չէր գգար:

Թոշուններն ալ նուազ ունին, իրենց զեղծարարները:

Երաժշտութի՞ւնը, քանի մը հնչիւն,

քիչ մը մաթեմատիկ, Եւ եղաւ նուազ:

Պէթովէնի մը պարագային, օրինակի համար, աւելի մարդն է որ մեղ կ'անինքնէ, մինչդեռ Տանդէ՛ մարդը կը նետէ երկրորդական գծի վրայ:

Հոս քերթուածը արքայ է:

Քերթուածը, ահա՛ բառը, գերագրուկանը:

Մէսիտ, ռասի լը բուա:

Բառը ինքնին լուծումն է մարդեղէնութեան: Եթէ գիտակցութիւնը, այս միածինը յիշողութեան սահմանը հաստատոյն է անասնականին եւ մարդկայինին միջեւ, ապա ուրեմն լեզուն դիտակցութեան գործիքն է: Առաջինը զոր ստեղծած ըլլար մարդ բա՛ն ու բրիչէն առաջ:

Ո՛ր, գիտակցութեան այս աստուածային գործը իր գործիքը ստեղծելու կիրքին մէջ: Քերթելով, քերթելով բըջիջներուն կողքերը, կազմակերպելով բըջիջները գործարաններու, ուղեղը, գործարաններուն գործարանը, իրարու կապելով, կապկպելով կառուցանել միութիւնը, որ իր արտայայտուելու անկերելի, անմերժելի տուայանքին մէջ եղաւ, ի վերջոյ, աղաղակը, բառին նախասկզբը: Արդէն ամէն ծնունդ աղաղակ է: Ձայնը՝ սպասուորը բառին՝ որ քերթուածն է գիտակցութեան, քանզի տեղի ունեցաւ քերթուելով, քերթուելով:

Կ'ուզէ՞ք զտեկ զաղանիքը, բանային մարդուն մարդեղէնութեան, պէտք է լուծել, վերլուծել, պեղել ու դեռ փրկորել ընդերկար յեղուն՝ որ քերթուածն է գիտակցութեան: Քերթուածը...

Բայց պէտք է սորվիլ հայերէն: Աշխարհի բոլոր փիլիսոփաները դեռ կը փնտռեն, որովհետեւ կ'անպիտանան հայերէնը:

Բանաստեղծութի՞ւնը: Բայց բանաստեղծութիւնը քերթուածը չէ՞ դեռ: Բանաստեղծութիւնը քերթելով յառաջ կը բերուի քերթուածը, բանաստեղծութեան բանաստեղծութիւնը: Բոլոր լեզուները կանց արած են բանաստեղծութեան սեմին վրայ, չունենալով քերթուածը բառը:

•

Իրաւ է, ընտրեալն մէջ ազեղութիւն չկայ: Եթէ ըլլայ իսկ, անմիջապէս կը թազէ, թաղածը յարութեամբ զեղեցկացնելու նպատակով:

Միայն մարդն է, որ մասնաւոր հոգածութեամբ մը կը խնամէ իր ազեղութիւնները, դուրսդուրով անոնց վրայ, հրահրելով ու հուրհրայով: Իսկ եթէ մեանելու վրայ ալ ըլլան անոնք, ան իր կեանքը վրայ կու տայ փրկելու համար գաննիք:

Կը փնտռեմ, կը պրպտեմ: Անկարելի է, չեմ գտներ: Կը տեսնեմ ոտքեր, ձեռքեր, թեւեր, խոշոր կամ մանր մարմիններ: Բայց դէ՞մքը: Ա՛հ, կարելի ըլլար դէ՞մք մը դնել իրանի մը վրայ ու ըսել իրենս:

— Հրամմէ՛, բարեկամ, նստէ ստիկնաթոռին վրայ որ տեսնեմ դէ՞մքդ, որ անծանօթը ըլլայ ծանօթ: Անկէ ետք, սո մնացածն ալ, ա՛ռ, տա՛ր:

Ու դեռ ձեռքն ալ կը պահենք յանուն հոգիիս խաղաղութեան:

•

•

Գագանը եւ իր թաթերով քղկտած որբը զեղեցկութիւն մը ունին: Մարդը իր զսհին հետ, երկուքն ալ՝ ազեղութիւն:

Ձէ՛, խելքիս չի պառկիր: Ինչպէ՞ս ամբողջ ժողովուրդ մը կրնայ ազրիւ սեղանի մը շուրջ եւ բանահիւսել:

«Ժողովրդական բանահիւսութիւն» սարազը փրոֆեսօրներու հետքածն է: «Սասունական»ը, ինչպէս ամէն անանուն գործ, խենթի մը, եթէ կը նախընտրէ՞ ծուռի մը գործն է, որ գրեմէ բերան, կ'ըլլայ զերան»:

•

Սէրը այն ատեն է, երբ ազեղութիւնը չենք տեսներ: Այն ատեն որ ազեղութեան ամենափոքր բիծ մը կը նշմարենք, ըսել է որ սէրը հոգեվարքի մէջ է: Հապա եթէ ազեղութիւնը տեսնենք հոն՝ ուր ազեղութիւն չկայ, կրնաս սէրդ թաղել, աչքերդ ձեռքերուդ մէջ ծածկել ու լալ:

•

•

Երջանկութի՛ւնը: Ամենուրեք փնտռել զեղեցկութիւն:

Ահաւասիկ, նստիր եմ ու կը դրեմ: Միեակ չեմ: Ծուրջս կը դառնայ ժողովուրդը, մարդկութիւնը: Ինչ որ ալ դրեմ, ինչ որ ալ երգեմ, հասկնայ կամ չհասկնայ, ընդունի կամ մերժէ, իմ գործս իր գործն է՝ որուն վրայ կը դնեմ իմ անունս կամ չեմ դնեմ: Երանի անոր որ կը ստորագրէ «մի ոմն»:

•

•

Գողը, խորհուրդին այս կաւատը, անցաւ տունէս: Այս քիչ տանջանք մըտքի: Այս քիչ անհանդատութիւն ուղեղի, բորբոքումի:

Տուէք ինծի պուտ մը արգարութիւն, ես ձեզի պիտի տամ բոլոր ճշմարտութիւնը:

Ճշմարտութիւնը ժողովուրդին չեմ գիտեր ինչն է:

Ճ

Բանախօսին.
Եթէ կ'ուզես քնացնել ունկնդիրներդ,
ճշմարտութեան վրայ խօսէ:
Խօսէ՛ արդարութեան մասին, պիտի
տեսնես, թէ ինչպէս սրահը կը սկսի եփ
գալ:

Իսկ երկրորդին՝ գլուխը կը ցցէ ու
բարեւի կը կենայ՝ երբ կ'անցնի Մատամ
լա Փեմերայ:

Ճ

Մարդը ոճրագործ է, երբ սպաննածը
չ'ուտեր, ոճրագործ չէ, երբ սպաննածը
կ'ուտէ: Ոճրագործ չէ՛ հաւ մը սպաննո-
ղը: Պէ՛տք է հետեւցնել որ մարդակեր-
ներու մօտ ոճիքի գաղափարը գոյութիւն
չունի:

Ճ

Ամէն քան կատար մը ունի՛ գլուխը:
Արդարութիւնը գլուխն է ճշմար-
տութեան, ազատութեան, դժութեան եւ
դեռ ինչերու:
Բնութիւնը՝ որ սատանան է, յաճախ
կը խարէ գլուխը՝ պահուած բառերու
կոյս անտառին մէջ:
Արդարութիւնը մերկութիւն է:

Հերոսութիւն ու ոճիքը մէջտեղէն
վերցնելու համար օրինականացնել մար-
դակերութիւնը:

Ճ

Ու մէկէն շատ հարցեր կը լուծուին:
Օրինակի համար պատերազմը: Պատե-
րազմը կը դառնայ ցորեն քաղելու պէս
բան մը: Պայմանաւ որ աճէն զինուոր
իր սպաննած զինուորը ուտէ, մինչեւ որ
ուտելով, ուտելով սատկի:

Ճ

Ջարմանալի գործարան, սա խոզո-
վակը, սփռուած կրկնակ պաշտօնով:
Երբ կը դործէ առաջինով, դունչը
միշտ կախ է:

Չ. ՈՐԲՈՒՆԻ



Սիրվա Կապուտիկանցի «Եստ Ժողովրդիս» խորագրուած այս քերականը, իր այս ձևով, լոյս տեսած է բանաստեղծուհիին վերջեւ երաժարակամ «Վօրը կայտառներ» անուն հատորին մէջ: Գերբուածք ծանօթ էր ասկէ առաջ ևս ունէր երկու Ֆրակմենտներ ևս. Ֆրակմենտ մը սփիզքը, Ֆրակմենտ մը վերջաւորութիւն: Հոս գեղարուած այդ Ֆրակմենտները տեսնել մեր նշանակութեամբ բաժնին մէջ:

Ես սիրում եմ քեզ՝ քեզնով հպարտ,
 Քեզնով, որ մեծ ես եղի իրօք,
 Մեծ, ո՛չ բէ բուով ու գործերով,
 Այլ մեծ՝ քո սգով ամենայադ:
 Ոգի, որ դարեր տանի է քեզ
 Թշնամու դէմ ուժ, որ մաքանա,
 Որ անբեղի է հուրը կամփոյ,
 Որ քեզ կոչի է նարից կեանքի,
 Որ մերք խամրի է, բայց չի՛ մարել,
 Որ մերք լռել է, բայց չի՛ մեռել,
 Ու մնալով միշտ անյաղքելի,
 Գոռ՝ վախարկուել է հազար ձեւի՝
 Մտել քարի մէջ՝ քարը վախել,
 Դարձել նա՛ւ, խաղա՛ղ, ծաղի՛կ, բաղե՛ղ.
 Դարձել է արծի՛ւ՝ քարին գամուած,
 Դարձել զուարթնոց երկնասլաց,
 Դարձել ե՛րգ, երա՛գ ու սիրոյ գո՛վք,
 Դարձել Մեծի ազնիւ խռովք,
 Եւ տարիներում երեք հազար
 Ներարկուել քո մէջ, որպէս ասիշ,
 Ու խաւարում իսկ քարանձաւի
 Քեզ պահել է միշտ երիտասարդ...

ԽՕՍՔ ԺՈՂՈՎՐԴԻՍ

(ՖՐԱԿՄԵՆՏՆԵՐ)

Իմ Հայաստանը...
 Եւ ինչպէս որ
 Աւելի խո՛րն ես սիրում մէկին,
 Ում ի՛նքն ես փրկել մտնուան ճեղքից
 Այնպէս էլ մե՛նք ենք սիրում այսօր,
 Մենք, որ հա՛յ ենք, եւ կոտորուած,
 Մեր Հայաստանը, որ նոյն պահին
 Եւ մա՛յր է, որ մեզ տուել է կեա՛նք,
 Եւ որդի՛, կեա՛նք ենք ստուել որին:

Իմ հա՛յ ժողովուրդ, ի՛մ մեծամայր,
 Ես սիրում եմ քեզ, ի՛մ կեանասու,
 Բայց ո՛չ բէ սիրով քշուառ որդու,
 Որ լսկ լալ գիտէ վերջիդ համար, -

Իմ հա՛յ ժողովուրդ, ի՛մ բարձրաման,
 Ես սիրում եմ քեզ նրա՛ համար,
 Որ դու խաժամուժ այս աշխարհում
 Ազնի՛ւ ես ապրել կեանքիդ դժուար.
 Որ ստիճանիդ դէմ յանդիման,
 Կանգնել ես շիտակ՝ քեղուց պարտուող,
 Եւ բուռ արի՛ւնդ ես քափել պատուով
 Յանապարհներին ազատութեան.
 Որ քրտինքով ես հացդ քամել,
 Որ վաստակել ես, չե՛ս քալանել,
 Որ ազատել ես, որ չե՛ս գերել,
 Որ կռուցել ես, չե՛ս ասերել,
 Որ դարերից դար, վանքերից վանք
 Փախցրել ես ո՛չ ոսկի ու կայք,
 Այլ գրքերդ, որ ամուր գրկել,
 Ինքդ խոցուե՛լ ես՝ նրանց փրկելի...

ՍԻՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԱՆՑ

1951

ԳԵՈՐԳ ԱՃԵՄԵԱՆ

ԻՆԶՊԷՍ ԶՍՊԵՄ ՍԱ ԱՐԵԻԸ

Սիրեմ, սիրե՛մ ծաղիկները:

Մանաւանդ շնչոզ ծաղիկները:

Գարունը, որ բանաստեղծութիւն մըն է, կը գրէ, կը պարտադրէ այս տաղերը: Եւ ես՝ հլու, հնագանգ որդիքն բնութեան, կ'ենթարկուիմ ու քայլ կու տամ, որ գարունը գրէ այս բանաստեղծութիւնը:

Պէ՛տք է գրուի բանաստեղծութիւնը,

Որ վերջ չունի,

Սկիզբ չունի եւ ոչ ալ դադար:

Արդարեւ, կարելի չէ գսպել կամ սանձել բնութիւնը:

Կարելի չէ բանտարկել արեւը, գարունը, ծաղիկները, ազգիկները:

Կամ՝ շնչոզ ծաղիկները:

Եւ պիտի բռնու՛ ազգիկները:

Որպէսզի կարենամ մտնուլ պատերազմները, մտեր, ամբողջարաւթիւնը, քշուտութիւնը, տառապանքը, եւ բոլոր այն երեւոյթները, որ կը հակասեն բնութիւնը, կը ժխտեն գայն, կ'անդամահատեն, կը ազնոզեն:

Որպէսզի կարենամ ապրիլ միայն գարունը:

Որովհետեւ ծախով ու ծիծաղով եկած է ան, եւ չ'ուզեր մեկնիլ կամ վերադառնալ: Յամաւորէն կը պարէ դուրսը, ու կը սպասէ, որ ե՛ս վերադառնամ իրեն, ու պտուս, պտուս՝ ուրախութենէս: Պարեմ իրեն հետ փողոցներուն մէջ, սիրեմ, գգուեմ ծաղիկները, ու համբուրեմ ազգիկները:

Եւ ինչպէ՞ս գսպեմ օս արեւը, որ յանկարծ փողոց իջած, կը հալածէ մարդ արարածը, ու կը յամառի տաքցնել անոր հոգիքն, աւորեանքն, ներկանքն, ապագանքն:

Ու յետոյ, ըսէ՛ք, եւ ինչպէ՞ս գսպեմ Արեւելքը:

Անոր հազար ու մէկ գիշերները: Կամ՝ հազար գիշերներէն մէկը:

Ինչպէ՞ս եւ ինչո՞ւ լռեցնեմ անոր երգերը, երբ գարունն է, որ կ'երգէ դուրսը ու միաժամանակ կը գրէ այս բանաստեղծութիւնը:

Դէ՛հ, ըսէ՛ք, դուք պիտի ուզէ՞ք լռեցնել բնութիւնը:

Գարունը, արեւը, երգը, երգերը, գիշերները, ծաղիկներն ու ազգիկները:

Մանաւանդ՝ ազգիկները:

Բայց ո՞վ կրնայ լռեցնել ազգիկները:

Անոնց պարը, ճազը, ժպիտը:

Ո՞վ կրնայ լռեցնել անոնց աչքերը, ձեռքերը, գիտերն ու կոնքերը, կարծեքն ու վարդ միսերը:

Մանաւանդ գարնան, երբ սլայծառ եւ ուրախ է արեւը:

Բայց առայժմ մտնամք ազգիկները:

Ըստ երեւոյթիմ կարելի չէ, որովհետեւ կը շարունակեն միջամտել,

խանգարել եւ նոյնիսկ վարագործել արեւը: Ինչպէս սա Արփիկը, որ կը յայտնուի յանկարծ հետաւոր սնցեալէն ու կը յայտարարէ.

- Ես եմ արեւը:

Կը նայիմ իրեն զարմացումով կամ կարօտով (չեմ գիտեր) ու կը յիշեմ, կը յիշեմ երբեմնի երազ աղջիկը, որ նոյնիսկ սիրուիլ չգիտցաւ: Ու կը ցաւիմ, կը գբամ իրեն, Արփիկին, որ զրկուեցաւ կեանքի սրբագնացոյն իրաւունքէն:

- Դուք երազ էիր եւ երազ պէտք է մնաս, - կ'ըսեմ ու կը փնտռեմ արեւը:

- Բայց ներկայ եմ սեռասիկ, իրական, կենդանի՝ նոյն Արփիկը:

- Քսան տարին երկար ժամանակ է սակայն:

Բայց ինքն է, զարմանալի, նոյն Արփիկը՝ տակաւին եպիստասարդ ու գեղեցիկ: Կը նայիմ քերահատուութեամբ: Միթէ կարելի՞ է: Այսքան տարի ետք...

- Իսկ ո՞ր էիր այսքան ժամանակ:

- Քիչ մը ամէն տեղ, - կը պատասխանէ իր հին ճագանքով, որ կը վերաւարէ քսան տարիներու յիշատակը:

- Ինձի ալ քիչ մը ամէն բան պատահած է այդ միջոցին: Քսան տարի նտրորդած եմ անորոշութեան ուղիներով, նանչցած եմ գրկանքը, աֆֆօսութիւնը, անգործութիւնը, անարգանքը, վիրաւորանքը, տառապանքը, յուսահատութիւնը, ատելութիւնը, վրէժը, պայքարը, կիրքը, յագնութիւնը, յամառութիւնը, բայց յուսահատութիւնը դարձեալ, հիւանդութիւնը, մահը, որու հետ կատակած եմ յաճախ, ու վերջապէս աշխատանքը եւ արեւը:

- Իսկ սէ՞րը, - կը հարցնէ ան:

- Սէրը նանչնալու պէտք չունիմ, - կ'ըսեմ ես, - որովհետեւ միշտ սիրահարուած եմ:

- Որո՞ւ:

- Արեւին եւ աշխատանքին: Արեւը կեանքն է, իսկ աշխատանքը՝ ապրիլը:

- Այս էր ուրեմն քու սէրդ, - կը տուայտի սա աղջիկը հին երազներով, - կեղծ, խաբարայ սէր մը:

- Սէրը տիեզերական է. եւ այն որ տիեզերական է, նշմարիտ է եւ անազարտ: Ես քու մէջդ սիրած եմ բնութիւնը, բնութեան իրականութիւնը, արեւը, կեանքը: Սիրելի միայն քեզ, այսօր, անկարելի է, աններելի: Մանաւանդ՝ ուշ, գիտե՛ս: Պէտք է անազարտ մնայ սէրը: Այս պարագային՝ մեր հին սէրը:

Բայց վերադառնամ զարման եւ արեւին, որոնք ինձի կը սպասեն դուրսը:

Եւ մտնում ազգիկները:

Հին եւ նոր ազգիկները:

Որպէսզի ներքէ ինձի բնութիւնը,

Ու ժպտի գարունը,

Եւ մանաւանդ՝ չղազրի, չկենայ կեանքը:

Փողոցին մէջ գարունը յոյս է հիմա: Եւ յոյսը՝ ուրախութիւն:

Որովհետեւ ստապանքն ու երջանկութիւնը քեանցուկ կը քալեն փողոցին մէջ, ու հաշտ են անոնք, համերաշխ: Տարին մէկ անգամ, գարնան, կը հաշտուին ու կը մտնան իրենց շխերը: Կը քալեն անոնք հիմա

կողմ կազմի, նոյն փողոցին մէջ, նոյն արեւին տակ՝ որպէս թէ ոչինչ պատահած ըլլար պատմութեան ընթացքին: Ու գարմանալիօրէն տխուր են երկուսն ալ: Ինչո՞ւ:

Արդեօք որովհետեւ գարունը յո՞յս է այսօր,
Թէ՛ որովհետեւ յոյսն է ուրախութիւն:

Բայց թերեւս ուրախութիւնը ինքն է, որ կը տխրի այն գիտակցութեամբ, թէ պիտի չմնայ այսպէս. ու պիտի մեռնի դարձեալ մարդոց հոգիներուն մէջ:

Պիտի մեռնի՛ վերածնելու համար,
Ու վերածնի՛ մեռնելու համար,
Եւ այսպէս՝ դարեր շարունակ,
Որպէսզի գրուի բանաստեղծութիւնը,
Յուրձանայ գարունը,
Եւ կատարուի բնութեան կամօր:

Երգեն ծաղիկները,
Պարեն աղջիկները,
Բայց ոչ՝ երգեն աղջիկները, ու չլսեն երգե՛ք,
Զլռեն անոնց աչքերը, ձեռքերը, գիտտերն ու կռնքերը, կուրծքերն

ու վարդ միսերը,

Ու մանուանո՞ չլռէ անոնց պարը. նազը. ժպիտը:

Իսկ արդէն ո՞վ կրնայ լռեցնել աղջիկները:

Ու յետոյ՝ ո՞վ կ'ուզէ լռեցնել այդ շնչոգ ծաղիկները, որոնք ազէտ են եւ խնդութիւն:

Երբեմն ծիծաղ, երբեմն՝ արցունք,
Բայց միշտ արեւ, ու միշտ գարուն,
Ազիտալի աղջիկները:

Դէ՛հ, ըսէ՛ք, ես ինչպէ՞ս զսպեմ սա արեւը, որ փողոց իջած կը հալածէ մարդ արարածը:

Ինչպէ՞ս զսպեմ ես զիս, բարեկամներս, գաւակներս, ընկերներս, ուրախութիւնս, ու սա բերկրանքը, որ կը պատկանի մարդուն:

Դաշտերուն մէջ ծաղիկները կը ժպտին բնութեան, մարդոց եւ արեւին ու կը սպասեն, որ մարդիկ վերադառնան իրենց, ու մոռնան պատերազմները, ատելութիւնը, մահն ու քափուտը արեան արեւափրօքը:

Արդարեւ գարունը բերկրանք է հիմա, եւ յո՞յս, եւ երա՛զ: Խնդութիւն է եւ հաշտութիւն:

Գարունը աղջիկ մըն է, նախանձախնդիր, պահանջկոտ աղջիկ մը. որ ուշադրութիւն եւ սէր կը պահանջէ: Ու չի ներքեր, չի հանդարտիր՝ մինչեւ կատարուի իր կամօրը:

Գարունը խենթութիւն է, եւ ես՝ դաշտերուն մէջ խելագարած ծաղիկ, որ գիճով է արեւով, կեանքով ու բնութեամբ:

Գարունը աղջիկ է,

Գարունը ծաղիկ՝

Որ դաշտերուն մէջ արեւ ըմպելով,

Արեւ սիրելով՝

Գիճով է ընդմիջտ:

Դէ՛հ, ըսէ՛ք, ես ինչպէ՞ս, ինչպէ՞ս զսպեմ սա արեւը:

Փ. Ա.

Ապրիլ 1967, Պէյրուք

ՏԱՂ ԳԻՇԵՐԱԿԱՆ

Ողջո՞յն, գիշեր, կառարակապ, խորունկ մեհեան,
Ուր կը ծագիլի հյւնդէն արիւնը կոյսերուն:
Փու սրբատաշ մարմարներուդ վրայ կայտառն
Կը պարէ սերը խորհուրդին հետ մերկութեան:

Ողջո՞յն, բերեալ վերջին կոհակն է խաւարին՝
Ուր կը ծածկէ տեսողութեան հոսքն յարձանուտ՝
Ու վերադարձն յանբժուութեան է մտալուտ
Ամէն ցոլի՝ որուն հոգիս էր հայելին:

Գիշե՞ր, սրտիս վերքն անո՞քնդ ջինջ բալասան,
Հողէ նըրագ, որուն լոյսովը գրուեցան
Խօսքն Ատաւծոյ եւ սուրբերուն նահատակուած:

Գիշե՞ր, ողբիւր յանբժահոս, ոսկերեքան
Ողջո՞յն անվերջ, անհուն պատանգ արիւնով թաց,
Անլոյս գիշեր, անյիշատակ իմ գերեզման...

ԱՆՅԻՇԱՏԱԿ

Օր մը, եթէ վերադարձիդ հանդիպիս դուն
Տնակն այս փոքր՝ նամբուն եզերքն անտառախիտ,
Պիտի գանե՞ս յուսամուտները զըւարթուն,
Եւ պարտեղին մէջ աղբերակն սկանակիտ...

Երբք ստեմես որ հիւսուած է քաղեղներով
Դուռը խարխուլ եւ փեթակն է վաղուց լճուած,
Եւ թռչնատան մէջ՝ արեւին սրտէն գինով
Գորշ մողէտներ ազատօրէն բոյն են դըրած,

Ի զուր պիտի շրջագայիս անտառին մօտ,
Երագելով օրերն անցեալ, հեռակարօտ,
Յուսալով որ թերեւս մէկուն կը հարցընես
Թէ ո՞ւր է ան՝ որ ատեճօք կը բնակէր

Խրճեքճ այս էին: Բայց նոճիի մը շուփն տակ
Տրտում այժմեդ պիտի տեսնեմ Քար մ'ըսպիտակ՝
Ուր անձրեւէն դեռ բաբախում սիրտ մ'է փորուեր...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ

ՄԱՍՆ Ե.

ԳԼՈՒԽ Բ.

ԹՈՒՐ ԿԵՍԱԿԻՆ ՄՇՈՅ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ

Ու եկան Մովսարէն Մակարն ու Գալէն, Մանուկ Շէնիկի, Չօլոն ու Կարօն, Էկան դաշտէն Մօսոն ու Մջօն, Մանուկ Փետարին ու Ախօն, Իրենց ձիաւորներով, անցան անյայտ ճամբաներէն ու Բերդակի ստորոտը, ճամբուն եզերքը՝ ծառատանին մէջ, շարժուն շուքեր դարձան:

Գէա գիշեր էր:

Ձիերու խրիինջ լուռեցաւ:

Մշոյ դաշտը համակ տրոփիւն դարձաւ:

Սարհաս իր սասնեւէինդ գինակիցներուն, որոնք ձիերը զսպած՝ կը սպասէին լիազօր խմբապետի հրահանգին, պատուիրեց.

— Խոհեմութիւնը սիրան ու Հոգին կոտորեց մեր ժողովուրդին: Այժմ կայծակնային հարուածի ժամանակն է: Թշնամին մինչեւ ուղն ու ծուծը վախի պիտի ժատնենք: Մենք մահէն չենք վախնար, իսկ նոսնք մահէն կը սարսափին: Սարսափը միայն կրնայ զսպել թուրք աւ քիւրա դազանները:

— Փա՛ռք Աստուծոյ... — Իրենց հոգիին մէջ ինքնազուսպ համբերութենէն տառապող Ֆետայիներու քայքայանչութիւնն էր:

— Այս անօրինական արշաւանքը պիտի կատարենք աշարլուփեամբ, ճկունութեամբ եւ միեւնոյն ատեն՝ խորտակիչ հարուածներով: Բոլորդ ալ փորձառու մարտիկներ էք: Նախաձեռնութիւնը եւ հնարամտութիւնը ամէն մէկուդ ե՛ւ իրաւունքն է ե՛ւ պարտաւորութիւնը, երբ միեակ էք: Երբ հաւաքական քայլ մը պիտի առնենք, հրկաթեայ կարգապահութիւնը ու անձանց ջանքերը տունեակ տարիներու մեր կեանքի բնական օրէնքն է:

— Յեղափոխական օրէնքը՝ օրէ՛նք է... — ըսին Ֆետայիները, — հիմա ձիաւոր խումբն ալ օրէնք դարձաւ:

— Ձիերու գլուխը դարձուցէք գէպի Օրկնոց, — ըսաւ Սարհաս, — եթէ ճամբու ընթացքին դէպք պատահի, ամէն մէկը իր բռնած ճամբով՝

աբշարյալ չըստուած՝ Օրկնոց պիտի ըլլայ: Պահակները դիւղին շորս
անկիւններուն վրայ ձեր նշանին պիտի սպասեն: Նշանախօսքը չմոռնաք:

Ինչ պիտի ձայնէ՞ք Մովսաար, անոնք պիտի պատասխանեն Մեղրագետ...
Խումբը թափով անցաւ դիւղերու աջն ու ձախէն դէպի նշանակէտը:

Մշոյ դաշտը կը թնդար ձիերու սմբակներուն տակ, ու այս անգամ, դաշտը
կարծես թէ կ'երգէր արթուն պահակներու ականջին տակ:

Յառաջապահները մօտեցան գեղի մարտդներուն:

- Մովսաար...
Խոտերու մէջէն քանի մը գլուխներ մէկէն բարձրացան, ու մեղրի
պէս հնչեց.

- Մեղրագետ...
Յառաջապահները Մեղրագետը փոխանցեցին խումբին, որ համա-
խումբ դիւղ մտնէ:

Գիւղի կոմիտէն ու տեղական մարմինները որքի վրայ՝ արթուն
կը հսկէին ճամբաներուն ու կարօտով կը սպասէին Մարհատի երեսուսին:

Զբահապատ այրուածին այժմ դիւղի դրկին մէջն էր: Ու անշափելի
ուրախութիւնը ալիք կու տար դիւղական բազմութեան սրտին մէջ, կար-
ծես երազած ազատութիւնը գտած ըլլային:

Ու ահա, երկու խոյր բերին Մարհատին առջեւ: Պմբայետը, քիչ
մը աղ ափին, մօտեցաւ Մարերու Առջանին.

- Պարոն Մարհատ, խոյրը պիտի մատղենք մեր Ֆետայիներու յա-
շտութեան ի խնդիր: Այս աղը մատաղներուն քո՞ ձեռքով առւր, որպէսզի
մեր ուխտը ընդունակ ըլլայ:

Մարհատ աղն առաւ եւ մօտեցուց խոյրերու գունչին, ու անոնք լըն-
ցին Մարհատի ափը:

- Ձեր մատաղները ընդունելի ըլլան, - ըսաւ Մարհատ, ականյայտ
յուզումով:

- Մեր դիւղն ամբողջ ձեզի թող մատաղ ըլլայ, պարոն Մարհատ, -
ըսաւ կոմիտէի ներկայացուցիչը, - միայն ձեր գլուխը ողջ մնայ:

- Գիւղը կանգուն թող մնայ: Յեղափոխական պայքարը անոնց ա-
պատուութեան համար է: Մատաղներ շատ տուինք, - ըսաւ Մարհատ:

Գիւղն արթուն էր, մեծով ու պղտիկով, հոն համախմբուած անձնու-
բացներուն շուրջ: Հիացում ու գուրգուրանք, սրտազեղ խօսք եւ հսպէական
անխօս զեղում՝ բոլորի աչքերէն:

- Ինոնց եկած ճամբուն խուրպան ըլլանք, - հարսներու եւ կիներու
մրմունջն էր անկիւններէն:

- Թուրքի ստեղծ տակ մեր մարմինը եւ հողին մեռել դարձաւ: Քա-
նի որ մեռնել կայ, մենք բոլորս մեր սուրբ Գէորգին կողքին կուտինք, կամ
կ'աղատինք եւ կամ պատուով կը նահապետուինք:

Ֆետայիները կ'ըմպէին այս խօսքերն ու մրմունջները, ու իրենց
անձնագործութիւնը ո՛չ միայն վարձատրուած կը նկատէին, այլ խորապէս
պարտական կը դրային ինքզինքնին այս հերոսական ժողովուրդին:

Խորոված ու մատաղ միւր կ'եփէր: Ֆետայիները, աբշարյալ չըստ-
ուած՝ ճաշը վերջացուցած պիտի ըլլային:

Մարհատի նշանին վրայ դիւղի երգիչը ձայնը ձգեց, ու սիրտերը ծով
դարձան: Արիւնայի կեանքը մոռցած էր ժողովուրդը, անշափելի, երա-
զային ազատութիւնը կը վայելէին:

Քանի մը Ֆետայիներ պարի ելանք զբաւն էր որ կը շարժէր ծնծղա-

153-2000

226

ներով, ու երկաթէ մարդիկ՝ այժմամբ ծուփերով՝ կ'անցնէին ժողովուրդի հոգիէն:

Սարճատ կարգադրեց որ հացի նստին եւ անմիջապէս քաշուին այն տուները, ուր իրենց ձիերը պատրաստ կը պահուէին:

— Լուսաստղը ելած է, քիչ ետք լոյսը կ'իջնէ մշուշոտ դաշտին վըրայ, — ըսաւ Սարճատ, — մութին պիտի պատստանիք եւ հանգստանաք, մինչեւ նոր կարգադրութիւն:

Ճետայիները տօնական ճաշ մը կը վայելէին:

Գիւղը հողեպէս կուշտ էր ու արի: Սարճատի նշանին՝ խմբայեա Զօրիկը անոր քով վազեց:

— Զօրիկ, լոյսը բացուելուն պէս զիւղական խումբը ոտքի վրայ կը պահես: Գիշերուն այս սպեւորութիւնը հանդարտ լուսթեան կը վերածէք: Անցնող ու դարձող որիւէ ճամբորդ բան պէտք չէ իմանայ ժողովուրդի դէմքէն: Ու ժողովուրդը անմեղապէս կ'ըմբռնէ, երբ ամէն կողմ, մատը ձեր շրթունքին՝ լուսթեան նշանը տաք:

— Հրաման է, պարո՛ն Սարճատ, ցերեկը մեր ժողովուրդի զլուխը կախ կ'ըլլայ, իսկ մեր զինուորներուն աչքը բաց պիտի պահենք:

Գիւղացիները ակնթարթի մը պէս իրենց տուները քաշուեցան: Ճետայիները մտան իրենց հանգստարանները:

Գիւղը մնաց Զօրիկի հսկիչ խումբին:



Ցերեկը խաղաղութեամբ կը բացուէր Դիրքեվանքի վրայ: Թոնիրները կը վառէին ժողովուրդի բռնկուն հոգիին պէս: Ու գիւղացիները արձանացած էին ներքին հրճուանքի դապումով:

Թուրք զօրքեր եկան ու անցան: Ոստիկանները գիւղը մտան, կերան ու ձիերուն կեր տուին եւ անցան ուրիշ գիւղերը: Գիւղացիներու զլուխը կտրի, դէմքերը պաղ ու զուսպ, ինչ որ վախի նշան նկատեցին անցնող թուրքերը:

Ուժանակուած Դիրքեվանքը այդ կլիմային պէտք ունէր:

Դիրքեվանքը խաղաղ էր ու զլուխը կտրի: Բայց շրջակայ գիւղերը տաք հոյի մը անցքը դժբախտ էին:

Սարեբու Սալանը լեռներէն վար իջած էր:

Ոգեւորութեան ալիք մը կ'անցնէր գիւղէ գիւղ: Յուսահատութեան պաղ քամին, կարծես, դողահար գիւղերու փողոցներէն հեռացած կը թուէր:

Երեկոյեան մուշը իջած էր Մշոյ դաշտին: Անցորդներ չկային ճամբաներուն վրայ: Գիշերն անողոր էր այդ օրերուն: Ոնիրն ու ազատութիւնը երբ իրարու հանդիպէին մութ անցքերուն վրայ, կայծակը կը պայթէր, ու սփռազործ թուրքն էր, որ կ'իջնար ազատութեան հարուածին տակ:

Սարճատի խումբը արդէն ձիերուն վրայ էր: Զօրիկը Սարճատի ձիուն սանձը բռնած, կախուած էր անոր շրթունքներէն:

— Գիւղին սիրտ տուէ՛ք, գիւղերները հերթով պահակ կեցէ՛ք: Դուք բան չէք տեսած ու բան չէք լսած:

Սարճատի ձիուորները խաւարի մէջ անհետացան: Միայն ձիերու սմբակներու տրոփիւնն էր, որ հեռուները կ'արձագանգէր:

Ջօրիկ էր հետեւորդներով վերադարձաւ գիւղը: Պահակները արթուն էին, ու բոլորն ալ կը դպային մօտալուս փոթորիկի մը սուսանումը դաշտին վրայէն:

Ճ

Սարհատի խումբը կ'անցնէր մեծ թափով, կը կտրէր ոլոր-մոլոր ճամբաները ու կը մտնէր Յունան գիւղը:

Պահակները աղականչանք պիտէին: Մօտեցան Սարհատին:

- Գիւղին մէջ օտար չկայ, պարո՛ն Սարհատ: Կոմիտէն եւ մարտական խումբերը ոտքի վրայ են:

- Մեզ առաջնորդեցէք գիւղի կեդրոնը, - ըսաւ Սարհատ:

Ու խումբի մուտքը զգրգեց ամբողջ գիւղը:

Եկեղեցիին հրապարակը ձիերու խրխինջով կը թրթռար: Հոն էին գիւղապետը, կոմիտէն եւ մարտական խումբերը: Լոյս էջած էր գիւղին վրայ:

- Դուք բարո՛վ եկաք, մեր աչքին վրայ եկաք: Աստուած կեա՛նք տայ ձեզ, որ մեզի կեանք կու տաք...

Անհատական ու խմբային մաղթանքները կը շարունակուէին գինա՝ վառ ճեղքներու ներկայութեան:

Այս ու այն անկունէն ձէթի ճրագներ վառեցան: Յունան գիւղի խմբապետը վայրկեան մը հեռացաւ բազմութենէն եւ վերադարձաւ ցուլ մը հետը: Մատաղը Սարհատի ոտքերուն առջեւ զոհեցին ու Սարհատ ատեն շունչեաւ արգիւիշու:

- Ամա՛ր տղա՛ք, մենք ճամբորդ ենք, ինչո՞ւ այսպիսի բաներ կ'ընէք:

- Մենք ալ, մեր ունեցածն ալ ձեզի մատաղ, պարո՛ն Սարհատ: Այսօր աօն է մեր գիւղին համար, - բացազանչեցին Յունանցիները: Ու մատաղած ցուլը թոնիրներուն յանձնեցին:

Բազմութիւնը կը խտանար ճեղքներուն շուրջ: Հարսներն ու կիները անձնագրահներուն արեւատութեան մաղթանքներ կ'ընէին, ու անոնց գէմքին վրայ ուրախութեան արցունք կար, աչքերնուն մէջ սէր ու գուրգուրանք կը փայլէր:

- Ամա՛ր կեցէք, - Սարհատն էր խօսողը, ու բազմութիւնը աղօթողի պէս լռեց, - մեծ է հայուն Աստուածը... Թէեւ մեզի օգնութեան չի գար, բայց մեր բազուկներուն ուժ տուած է: Եղէք խոհեմ եւ խուփ բերան, բայց պարկէ՛ք առանց խնայելու, երբ առիթը ներկայանայ: Մեր ժողովուրդը ճգմող պէկերուն եւ իշխանաւորներուն գլուխը պիտի ճզմենք, շատ են լրբացած: Մենք գործ ունինք: Հիմա ձեր տուները քաշուեցէք: Բան մը չտեսաք, բան մը չլսեցիք: Լուս մնացէ՛ք:

Քահանայի եւ գիւղապետի ազդարար նշանը բաւական եղաւ, որ գիւղացիները մութ փողոցներուն մէջ անհետանան:

- Ձիերը լաւ կերակրեցէք, այս գիշեր շատ ճամբայ պիտի կտրենք, - ըսաւ Սարհատ, ու դառնալով գիւղի խմբապետին, - Մարտական խումբն ու ձիերը գիւղի եզերքի տուններուն մէջ տեղաւորեցէք: Հոն պատառ մը կ'ուտենք Յունանի մատաղէն: Գիւղի միւս ճամբաներուն վրայ պահակներ անպակաս ըլլան:

- Անո՛րք եղէք, պարո՛ն Սարհատ, տեղական մարտիկները ամէն գործի կը հասնին: Այսօր գիւղն ամբողջ պողպատ դարձած է:

Խմբապետ Արշակը դործի անցաւ: Կարճ պահէ մը ետք, Ֆետային-
բը Հանգիստ կ'ընէին ու արդէն սկսած էին կատակել ու իրար հրժշտակել:
Զիւրու փնչոցը կը լսուէր քովի ախոռներէն:

Պահակներուն հետ ներս մտաւ Ալատենցի Միսաքը, Սարհատի սի-
րած երգիչը, որ նոր Հասած էր Յունան:

- Բարով տեսնե՞ք քեզ, պարո՛ն Սարհատ, աչքերնիս շուր կտրեցան
ձեր ճամբուն ապաստելով: Այլ Համբերութիւն չունինք: Առանց մեր Ֆետա-
յիներուն, մեր ժողովուրդի մէջքը կը կտորի:

- Միտա՛ք, մենք ալ բու երգիչ կարօտը կը քաշենք, նստէ՛ եւ օրհնած
ձայնը ձգէ: Առանց երգի՛ կռիւը անհամ է, - ըսաւ Սարհատ ու աչքը դար-
ձուց Ֆետայիներուն, որոնք շունչը կտրած՝ Միսաքի բերնէն կախուած էին:

Միսաքի քաղցր ու հղօր ձայնը գիւցազնապատում երգերը կը մաղէր
կռուի տենդէն բռնուած անձնուրացներուն սրտին: Անոնք բառ առ բառ,
վանկ առ վանկ կ'ապրէին Հերոսական այն յուզմունքները, որ երգը կ'ոյր-
էէր իր ելեւէջներուն մէջ:

Ալատենցի Միսաքը դիտէր Հոգիները փոթորկել:

Ֆետայիները Հոգեպէս դիւցազնական խոյանքներու մէջ էին, երբ
գիւղական մարտիկները ներս մտան եւ սփռոց բացին ընթրիքի:

Սարհատ երգի ուրտոններուն մէջ էր, հետուսը լեռնային կիրճերուն
վրայ: Մթափեցաւ.

- Զայնդ անսպառ, Միտա՛ք, թոյլ տուր որ տղաք պատառ մը բան
ուտեն:

Սարհատ դարձաւ մարտիկներուն.

- Գործերնիդ վերջացուցէք որքան կարելի է շուտ:

Ֆետայիները գիտէին, թէ ուտելէն ետք անմիջապէս ճամբայ պիտի
կլլէին: Ֆետայիին Համար ուտելը ջրազարքի ալիւր աղալու պէս բան մըն
էր: Ոմանք նստած, շատերը ուղի վրայ, մեծ տխրութակով մատաղի միտը
կը վայելէին՝ թարմ լուռալ հացի մէջ պլլած:

Գիւղը լուռ էր, բայց արթուն, ու Հոգիները գիւղի թոնիրներուն
պէս բռնկուէն: Կը լսէին Ֆետայիներուն խօսքը, կը տեսնէին անոնց շար-
ժումները, իրենց Հոգիի աչքին առջեւն էր Սարերու Աւրանը, երկաթէ մար-
դու կերպարով:

- Մատա՛ղ անոնց աչքերուն, մատա՛ղ անոնց բազուկին... - Հար-
սերն ու կիներն էին, որոնք կը մրմնջային թոնիրներու անկիւնէն:

Լուռ ու հոգեյոյզ այդ պահուն, տուներու հաստ պատերէն ներս ար-
ձազանգեց ձիերու խրիւիւիւն ու տրոփիւնը:

Սարհատի այրուձին էր, որ ճամբայ ելած էր խաւարի մթնոլորտը
դղրղելու:

Պահակները ականջ կտրած՝ կ'ուզէին գիտնալ Ֆետայիներու բռնած
ուղղութիւնը:

Մշոյ դաշտը գիւղերուան մութ ստուերներուն մէջ կը հեւար: Գետակ-
ներու ու ատուակներու խոխոջիւնին կը միանար տրոփիւնը ձիերու անց-
քին, ու դաշտը կը լեցնէր խուլ թնդոցով:



Օրկնոց գիւղը, Մեղրադեանի եզերքին՝ կը տեքար Միրզա պէկի կը-
րունկներուն տակ:

Ալալի պէկի արշաւախումբերը հայ ժողովուրդը հզմելու ելած էին ու անոնք պէնքերը կը հաւաքէին աներեւակայիլի ասնջանքներով: Թուրք եւ քիւրա պէյերն ու աղաները տէր ու տիրական դարձած էին շարք մը հայ գիւղերուն: Քէօշք ունէին, ձիաւոր բանակ մը անոնց կը հետեւէր՝ երբ շարժէին: Իսկ գիւղը, ուր կը բնակէր պէկը, շունչը կտրած՝ կծկած էր իր ողնայարին վրայ:

Գիւղի հաշուին բացուած խնջոյքի սեղանը վերջացած էր: Պէկի խաժամուսը պահելու համար Օրկնոցն ամէն օր կը հալէր:

Միրզա պէկը կանչեց գիւղապետն ու անոր հետեւորդները, որոնք ոտքի՝ ծառայութիւն կ'ընէին:

— Ձոր դուրս հայի՛ր, ձեր գէնքերը պէտք է յանձնէք, թէ ոչ գիւղը կրակի պիտի տամ: Ես չընեմ, Ալալի պէկը պիտի բնէ: Զեզի երկու օր ժամանակ, վաղ առաւօտուն ձիերուն զարի, պահակներուն մասցուններ պատրաստ ըլլան: Հիմա ձեր տունե՛րը դացէք:

Գիւղացիները կորաքածակ հեռացան:

Պէկը բարձրացաւ իր կանանցը:

Սանձարձակ ու արիւնարբու այս հետեւորդներէն ոմանք քովի շէնքերուն մէջ քաշուցան հանգիտաի, իսկ տասնեակ մը բակին մէջ պահակ կեցաւ:

Տիրապետողի, անասնձ բռնակալի, մարդասպանի՝ բխացած խիղճով, քէօշքը կը հեւար Մարայ Մեյիքի խոմփոցով...



Թանձրացած խաւարը կը տարածուէր Մշոյ դաշտի բլրանման գիւղերուն վրայ:

Կէս գիւղեր էր, ու բնութիւնը խորհրդաւոր կը հեւար:

Զիաւորներու անցքի դղրդիւնը լսուեցաւ խոտառատ դաշտէն, գիւղին ճիւղ մօտիկը:

Յառաջապահ երկու Ֆետայիները ձիերու վրայէն ձայնեցին.

— Մովսաա՛ր...

Մարդու հասակ խոտերու եւ կղզիներու մէջէն երեք գլուխներ բարձրացան.

— Մեղրապէ՛տ...

Գիւղի մարտիկները հոն կը սպասէին Սարհատի երեւումին:

Զիաւոր խումբը, գիւղի երեք առաջնորդներուն հետ, տուներու պատերուն հասած էր:

Երեք տասնեակ Ֆետայիներ գիւղի կարեւոր անցքերը բռնեցին, պէկի Քէօշքէն երեսուն մեթր հեռաւորութեան վրայ:

Սարհատ տասնեակով մը յառաջացաւ դէպի Միրզա պէկի քէօշքը: Քառասորո՞ւ մտան բակը: Եւ դուռը բախեցին: Թուրք պահակները շքոթում՝ ոտքի ելան: Սպառազէն տասնեակը ձիերը զսպած, ձեռքերը տասնոց ատրճանակներուն վրայ պահեցին: Պէկի պահակները ստուար բանակ մը կը տեսնէին իրենց դիմաց:

Սարհատի ձայնը հնչեց.

— Միրզա՛ պէկ, դուռը բացէք, զնած է՛ք, թէ մեռած, որ Գէորդ Զափուլը այսօրն կը սպասցնէք:

Մերզա պէկը, այլայլած, պատուհանէն դուրս նայեցու: Սպառազէն բանակ մը տեսաւ բակին մէջ, ու վերէն խեղդուկ ձայնով.

— Հրամմեցէ՛ք, հրամմեցէ՛ք, — խօսք ուղղելով պահակներուն, — էֆէնտին... փաշան... վեր հրաւիրեցէք:

Երկու պահակներ զողողալով դուռը բացին եւ Սարհատը վեր տառնորդեցին, միշտ քովնոր քալուածքով, որպէսզի իրենց կռնակը Սարհատի դէմ չզայ: Գալէն եւ Մանուկ Փեթարին հետեւեցան Սարհատին:

Ընդունարանի դուռը բաց էր եւ Մերզա պէկը, շուարած, դիմաւորեց Սարհատը եւ ձեռքի լայն շարժումով, թրքական կեղծաւորութեամբ բարեւեց: Պահակները դրան մէկ կողմը կանգնեցան, դուռինը կախ: Միւս կողմը կեցած էին Գալէն եւ Մանուկ, բերդի նման:

— Մերզա՛ պէկ, այս տեղերէն կ'անցնէինք, ուզեցի բարեւ մը տալ ձեզի, — ըսաւ Սարհատ: — Մեր աշխարհը խռովեալ վիճակ մը ունի: Այս դիւզացիներուն հետ լաւ վարուեցէք, մինչեւ մէջտեղը խաղաղի:

Պէկը ահ ու սարսափի մէջ էր: Զիեբու վրնջէնէն եւ սմախներու դոփիւնէն բանակ մը կը պատկերացնէր ան Քէօշի շրջապատին մէջ: Պէկին կը մնար կեղծաւորութեան զէնքին դիմել, դուռը ուսերուն վրայ պահելու համար:

— Մեր դիմուն վրայ, մենք դրացի ենք: Գէորդ Չավուշի անունը աշխարհը բռնած է: Անտառած տալ որ խաղաղի այս երկիրը:

Սուրճը եկաւ: Մերզա պէկը հրամայեց որ սլխար մօրթեն եւ կերակուր պատրաստեն:

Սարհատ անոր խօսքը կտրեց.

— Մենք ճամբորդ ենք, սուրճը բաւական է. չէն մնաք: Անտառած տալ որ բարեկամութիւնը խօսի բոլորի սրտին:

Սարհատ ոտքի ելաւ: Մերզա պէկը եւ երկու պահակները հետեւեցան Սարհատին, իսկ Գալէն ու Մանուկը անոնց կռնակէն:

Վարը, պահակները զողահար էին: Կծկուած վիճակ ունէր Մերզա պէկը:

Սարհատ արագ շարժումով ցատկեց թամբին, նոյնը ըրին Գալէն ու Մանուկը:

Սարհատ մնաք բարովի շարժում մը ըրաւ ձեռքով ու Ֆետայիները քառատրոփ հեռացան: Զիեբու տրոփիւնը շատցաւ: Ստուար բանակի մը անցքը կը լսուէր զիւղէն դէպի դուրս:

Մերզա պէկը ցնցուած էր: Գիշերը շքնացաւ: Պահակները բակը համախմբուեցան: Կամաց կամաց լեզուները բացուեցան.

— Նամուսով մարդ էր, եթէ ուզէր՝ բոլորս կը կոտորէր: Ի՞նչ ատաւար մարդիկ էին:

Վախն ու չափազանցուած պատմութիւնները իրար հելուուած, սրթուն պահեցին Մերզա պէկի տան պահակները:

Սարհատի այրումին թափով ու համարձակ ճամբան ոլորեց ու ուղղուեցաւ Մկրազով:



Մկրազովի մութ զանգուածը, Օրկիոցի դիմացը, հինգ քիւրմեր հեռաւորութեան վրայ, տառապանքի օրեր կ'ապրէր:

Գիշերը սուգի քող մը դարձած էր այդ օրերուն: Մկրազոմը սուրին տակն ինկած էր Հասան աղայի ցեղախումբին:

Քաջալերուած թրքական նիխաւէն, Հասան աղան լեռներէն իջած՝ դարձած էր Մկրազոմը: Բարձրադիր տուն մը բերդի վերածած՝ զինեալ ստուար հեռեւորդներով՝ գիւղը կը կողոպտէր եւ կալուածները իր պապե- նական սեփականութիւնը կը նկատէր:

Ճգմուած գիւղացիներուն օրտաճաք ճիչը հասած էր Սարհատին:

Ու Սարհատի խումբը երկաթեայ ծանրութեամբ, վճռական բազու- կով, գիշերուան տիրուր խաղաղութիւնը կը փոթորկէր Մկրազոմի գոմե- րուն մօտիկ:

Յառաջապահները ձայնեցին.

- Մովասա՛ր...

Գոմերուն մօտիկ, խոտերը շարժեցան.

- Մեզրազե՛տ...

Ու երեք մարտիկներ, անվախ քայլերով մօտեցան յառաջապահ Ֆե- տայիներուն: Սարհատի ձիաւորները հասան:

- Պարո՛ն Սարհատ, ձեր ոտքերուն խուրպան, դուք կրկին երեւցաք, Հիմա կրնանք հանդիստ մեռնիլ, - Հին ընկերներ էին խօսողները, յաճախ պատասխանատու դեր կատարող, ու Հիմա միերու սանձը բռնած՝ անհուն հզարտանքով կը նայէին Ֆետայիներուն, որոնք կսթորուած էին ձիերուն, ինչպէս լեռ մը լեռան վրայ:

- Հասան աղայի տօն մօտերը առաջնորդեցէք մեզ, ու դուք ձեր տունները քաշուեցէք: Բան չտեսաք, ու բան մը չլսեցիք: Հասան աղան վա- դը ձեզի սմէն բան կր պատմէ, - ըսաւ Սարհատ:

Ու ձիաւոր խումբը երկու թեւի բաժնուած՝ մտան Մկրազոմի կեդ- րունը, երկրաշարժի ցնցումով:

Տասնեակ մը՝ տան ալ կողմը՝ ջսան մեթիւ հեռաւորութեան վրայ կեցած, տասնեակ մըն ալ ձախ կողմը հսկողութեան տակ առաւ:

Սարհատի հետ մնացին ջսանէ աւելի ձիաւորներ, որոնք անոր կտե- լէն զառարարօք բակը մտան: Պատերուն տակ ու բակին մէջ երեսուն գինե- կալ ծառաներ ընդոսա ոտքի ելան:

- Հասան աղային լուր տուէք որ Գէորգ Չափուչ իբրն կը սպասէ, Թո՛ղ վար իջնէ, - Սարհատի ձայնը մուրճի հարուածներու հնչիւն ունէր: Գէորգ Չափուչի անունը եւ Ֆետայիներու սպառազէն կեցուածքը դողահար բրին պահակները: Տակաւին անոնք շարժած, Հասան աղան պա- տուհանէն նայեցաւ: Գէորգ Չափուչի անունը լսած էր: Չկրցաւ խօսիլ:

Վարէն ծառայ մը.

- Աղա՛, Գէորգ Չափուչ կ'ուղէ որ վար իջնէք, ձեզի հետ խօսելիք ունի:

- Սար սարա՛ն, սար զավա՛ն...

(Գլխուս եւ աչքին վրայ):

Ու սպան հազուած՝ բակ իջաւ: Պա՛հ մը շշմած՝ շուրջը նայեցաւ: Ֆետայիներու սպառազէն կեցուածքը ուղիւն կ'այս ցեղապետին սրբ- տին թելը կտրեց.

- Բարո՛վ եկաք, Գէորգ փաշա, վեր հրամմեցէք, հանդիստ ջրէք:

Յեղապետական հիւրասիրութեան խօսքը չէր պակսէր Հասան աղային:

- Հասա՛ն աղա, փաշան թուրքերուն մօտ փնտռէ, մենք լսեցինք որ ձեր շրջանը թողած՝ փոխադրուած էք Մկրազոմ: Այս կողմէն կ'անցնէինք,

ուզեցի բարեւ մը առաւ: Քեզի յայտնի է որ ցերեկը թուրքին կը պատկանի, գիշերն ալ մեր ցերեկն է: Այս գիւղացիներուն լաւ նայէ, թուրքերու ըրածը արդէն շատ է: Մինք կ'երթանք, խօսքս շտապանս...

- Գէորդ Չամուշ, - սկսաւ Հասան աղան ինքզինքը գտած, - կը խնդրեմ որ ձեզն իջնես եւ իմ աղն ու հացը ընդունես: Եթէ այսպէս պիտի հեռանաս այս տեղէն, կը հաշուեմ որ զնդակ մը տուիր սրտիս:

Սարհատ զգաց որ Հասան աղան հողեկան բեկում մը ունէր: Վար իջաւ ձեզն: Քիւրտ ծառաները վազեցին եւ ձիուն սանձը բռնեցին:

Հասան աղան մօտեցաւ Սարհատին, ձեռքի լայն շարժումով բարեկեց եւ հրաւիրեց ընդունարան: Չորս ծառաներ եւ երեք Ֆետայիներ հետեւեցան Սարհատին:

Անգղառ ու լայն բակը ձիերու խրխիւնով կը թրթաւ: Ֆետայիներու ձեռքեր տասնոց ատրճանակին, հարուածելու պատրաստ, դաժան բերդի մը մթաստուեր զանգուածին տպաւորութիւնը կը ձգէին: Քիւրտերը իրենց զէնքերուն տակ կ'երեւային: Ֆետայիներուն այսքան մօտիկ, այսքան կուրծք կուրծքի, իրենց մտածողութեան մէջ փրկութեան ոչ մէկ յոյս կ'ըրնային ունենալ:

Ֆետային պայթուցիկ կրակ մըն էր անոնց աչքին:

Սարհատ յենուած բարձին, սուրբը ընդունեց: Հասան աղան իբր ձեռքով աղ ու հաց բերաւ եւ խնդրեց որ Սարհատ իր օճախը պատուէ:

- Հասան աղա, եթէ հալալ սրտով է աղ ու հացդ, մենք եղբայր կը դառնանք, իսկ եթէ թուրքերէն սորված խարդախութիւն դուրս գայ՝ ինքզինքը կը լուծուի գիւղով: Փափաքս է որ այս ժողովուրդին լաւ նայես: Մենք թուրքին հետ ալիսու շենք կ'ընար հաշտուիլ, արեան փոխարէն արեւն պիտի թափուի: Այս երկրի մէջ Հայն ու Քիւրտը պէտք է եղբոր պէս ըլլան:

- Գէորդ Չամուշ, չես ուզեր որ քեզի փաշա ըսեմ, քայց զիտցիր որ այս օրէն անդէն իմ եղբայրս ես, իմ փաշան ես: Դուն Քէօթօղլուին պէս իկիտ (հերոս) մըն ես: Այսօր եթէ ուզէիր մեզ բուրս կրնայիր կոտորել, բայց գուն հերոսի վեհանձնութիւն ունիս: Մենք կարիճը, հերոսը, վեհանձնը կը պաշտենք, այս խոստումիս ձայնը գուն պիտի լսես, ո՛ր ալ երթաս:

- Տունդ չէն, աղն ու հացդ անպակաս ըլլայ: Սիրտս հանգիստ կը հեռանամ, - եզրակացուց Սարհատ ու ոտքի ելաւ:

Հասան աղան խնդրեց որ ճամբորդի ճաշ մը ընեն:

- Մենք ճամբորդ ենք, Հասան աղա, ու դուն լաւ գիտես, թէ Ֆետայիին ճամբան գիշերուան մէջէն կ'անցնի, մենք բանի մը պէտք չունինք, չէն մնաս:

Սարհատ ձին խթանեց ու բուրն անոր հետեւեցան:

Զիւտր խուճրը արագ հեռացաւ:

Հասան աղան նայեցաւ իր գիւնեալ ծառաներուն, ականջ դրաւ ձիերու աղմուկին: Ու երբ միւր պիտի ելլէր, դարձաւ իր հետեւորդներուն:

- Գէորդ Չամուշ այս երկրի Քէօթօղլին է. վեհանձն հերոս է: Ասկէ ետք Ֆետայիներուն ծառ աչքով չնայիք:

- Աղա՛, մենք քեզի ծառայ, ճիշդ կ'ըսես: Եթէ ուզէին մեզ բուրս կը կոտորէին, - ըսին քիւրտերը եւ աւելցուցին, - Դուրսն ալ ձիւտները կային պատրաստ, մատները զէնքի բլթակին:

Միջազգային հայերը լուռ ու մտահոգ գիշեր մը կ'ապրէին, բայց յոյ՛սի նշոյն ալ կը պլպլար իրենց հոգիին մէջ:

Սարգստի գոյրգագին անցքը զգացած էին:

Առաւօտը բացուեցաւ խորհրդաւոր վարադոյրի մը պէս: Գիւղացիները իրարու կը նայէին հարցական, բայց անխօս:

Քիւրտերը նշանակալից ժպիտ մը ունէին: Երէկուան դատանութիւնը շկար անոնց դէմքին:

Գիւղապետը քանի մը համարաներու հետ Հասան աղային ներկայացաւ.

- Այա՛, այս գիշեր կոտաւարական ձիւտը բանակ մը անցաւ գիւղէն: Ի՛նչ կայ, շէնք գիտեր: Աշնան ցանքը երեսի միայ մնաց, այս ժողովուրդը ինչպէ՞ս պիտի ապրի...

- Ձեր դործերուն նայեցէք, կոտաւարական զօրքերը կ'անցնին ու կը դառնան: Խառնակ ժամանակ է, ձեր գլուխը պահեցէք, - քսաւ Հասան աղան սրտացաւութեամբ, - որքան ձեռքէս կու գայ, գիւղը եւ գիւղացիները պիտի պաշտպանեմ:

Այլափոխուած էր Հասան աղան:



Արեւը ծագած էր, երբ Միրզա պէկը վատ երազէ մ'արթնցածի պէս վերի պատուհանէն պահակներուն կը նայէր, կը դառնար գիւղի տուներուն՝ խուլարկու հայեացքով: Գիշերուան մղձաւորնը խաւարին հետ կը չքանար կամաց կամաց: Այս գիւղը իրն էր, կըրն ու գետնատարած: Այս պահակները, շրջակայ գիւղերը կոտորելու եւ կողոպտելու անզուպ կերբը ունէին եւ իր հրամանին կը նայէին:

Մտածեց.

- Օտանեան բանակէն հալածական Գէորգ Զաւուչը ո՛ւր կը ցուցնէ ինծի... Ես հիմա այս գիւղացիներուն ցոյց կու տամ, թէ ո՞վ է սէրը այս տեղերուն:

Միրզա պէկը երկու ձիւտը ճամբեց Մուշ, նահանգապետին ու զօրահրամանատարին լուր տալու Սարգստի արշաւախումբի մասին:

Իր դործակատարը զրկեց մօտակայ գիւղը եւ ժանտարմաներու ջուկաւոր Օրկինոց հրաւերեց:

Օրն հազիւ կէսօր եղած՝ զօրքերն ու ժանտարմները բռնած էին Օրկինոցի, Յունանի, Քրտագոմի շրջակայքը: Այդ շրջանը կը հասնէին ջրտական ցեղախումբերը գիւտոյն անգղներու թեթափով:

Ճեւտայիներու համարձակ ու սպառնալից անցքը ցնցած էր բոլորին:

Միրզա պէկը կատղած՝ Սալալար կը կանչէր...

- Հասէ՛ք, հա՛ հասէ՛ք, պատերազմ է: Ճեւտայիներու ձիւտը քանակ մը երեւցած է դաշտի այս կողմերը:

Կարծես Մարայ Մելիքի կանչն էր, որ հրաբխային խառնարանի մը կը վերածէր Մշոյ դաշտի արեւելքը:

Գիւղերը կը խուլարկէին, գիւղապետները մարտկններու տակ արիւնլուայ կ'իյնային, գիւղերու ունեցածը կեր կը դառնար հազարներու հասնող այս արշաւախումբերուն:

- Գէորգ Զաւուչը ո՛ւր պահած էք, անիծուած կեանքներ, բռնե-

ցէք եւ կառավարութեան յանձնեցէք, թէ ոչ այս զիւղերը բոլորը կ'այր-
բենք ձեր կիներու եւ երեխաներու վրտունս :

Գիւղացիները, վիղերը ծոած՝ անխօս ու անճար, կէս մեռելի պէս կը
կենային, թփրտուն ներաշխարհով : Մարդիկ յոյս ունէին, աներեր յոյսը,
թէ Սարհատ պիտի յայտնուէր... Իր թուր կեծակով :

Կէսօրին ձիաւորներու շոկատ մը քառասորոփ կը մտնէր Մկրազոմ,
խուզարկու հայեացքով : Բախումի մը հաւանականութիւնը կար Մշոյ դաշ-
տի գիւղական այս շրջանին մէջ :

Հասան ազան իր հետեւորդներով դիմաւորեց թրջական շոկատը :

- Հասան ազա, այս զիւղեր գէպէր պատահած են Յունանի եւ Օրկ-
նոցի մէջ : Հասած լուրերուն համաձայն Տեսայիները ձիաւոր ստուար
խումբով մը այս կողմերէն անցած են : Ի՞նչ տեղեկութիւն ունիս :

- Էֆէնտի, այս զիւղեր մարդ շանցաւ այս կողմերէն, իմ պահակնե-
րը մինչեւ լոյս արթուն հոկած են ճամբաներուն վրայ :

Ազան պահ մը մտածեց եւ աւելցուց .

- Հասան ազա, այս քեաֆիրները դիւղին մէջ պահած չըլլան Տե-
տայիները :

- Մեր աչքերուն տակ, մարդ կրնա՞յ մտնել Մկրազոմ : Գանի մը
ձիաւոր անցնին հեռաւոր ճանապարհներէն, հոս կը լսենք... :

Թրջական շոկատը ձիերուն զլուխը դարձուց դէպի Օրկնոց, ու ա-
նոնց անցքը ճնշիչ սպաւորութիւն թողուց ինքնիր վրայ կծկած Մկրա-
զոմին :

Հասան ազան տեղի ունեցող գէպէրու ծանրն ու թեթեւը կրուց :
Մաւաներու աչքը յառած կը մնար աղային :

Գարձաւ անոնց .

- Մահձո՛, երեսուն ձիաւոր հետդ առ, եւ բռնէ մեր գիւղին ճամ-
բան : Տասը ձիաւոր Օսմանին հետ կը մնան քովս : Գիւղէն դաշտ մի իջնէք :
Դէպէրբը վատ կը տեսնեմ : Ապասենք մինչեւ ձիւնը ծածկէ մեր շորս կողմը :

Դառնալով գիւղապետին եւ անոր հետեւորդներուն .

- Ձեր տունները քաշուեցէք եւ զոոյշ եղէք սր ոտքի տակ չեքթաք :
Անցուդարձերը լաւ չեմ տեսներ :

Օրկնոցի Միլզա պէկը, թիկունքը բանակին եւ ոստիկանական ըն-
կառններուն, կատրած գազան մը դարձած էր : Վճռած էր Օրկնոցի հայե-
րուն մէջքի օսկորը կրտրել :

- Գէորդ Չավուշը, զիւղերանց, ի՛մ զէօջի վրայ կը բերէք, ձեր կա-
շին պիտի հանեմ : Դէ, թո՛ղ հիմա ձեր Տեսայիները երեւին այս կողմերը :

Ու ծեծը կը շարունակուէր : Գիւղապետն ու գիւղի երեւելիները ա-
խոռի մը մէջ բանտարկած էր, որպէսզի անոնք, ծեծի տակ, յայտնեն թէ
Սարհատ ո՛ր գիւղը ապաստան դասած է :

Այդ օր, մինչեւ երեկոյ, Մեղրադետի երկու եզերքներուն վրայ ե-
ղած գիւղերը հրդեհի ու տանջանքի մէջ էին :

Գիւղերը կլանած էր Տեսայական այրումներն... :

Ո՞վ կրնար գիտնալ թէ անոնք ո՛ւր են :

Սակայն մարտական խումբերն ու փորձառու սուրհանդակները խա-
ւարի մէջ լողալով, թումբէ թումբ խաղալով, Սարհատին կը հասցնէին
գեկուցում մը, ու հրահանգ ստացած՝ կը դառնային իրենց գիւղերը, սիրտ
կու տային ժողովուրդին, ու երբ թշնամիին գէմ դանուէին, բազմութեան
պէս կըուն դիրք մը կ'առնէին, վիղերը ծոած, մինչ յուսահատ բազմու-

Թեան աչքը անոնց դէմքը կը խուզարկէր, յոյսի նշոյլ մը գողնալու համար :
- Ո՛ւր են ձեր Ծեսայիները, կեալուրներ, չէ՞ք խօսիր, Հա՛, դուք
բռնորդ օսմանեան բանակի կրօնկներուն տակ պիտի ճզմուիք...

Մերգա պէկը փրփրած՝ կը խօսէր, երբ ոստիկանները մարակի տակ
տոած էին հաւաքած տղամարդիկը :

Այդ պահուն Օրկնոց հասան քանի մը ձիաւորներ, քրտինքին փրփու-
րին մէջ կորած : Մուշի նահանգապետի ու զօրաց հրամանատարին հրահան-
քը բերած էին արշաւի ելած զօրամասին :

Մերգա պէկը մօտեցաւ սպային հարցական դէմքով :

Հրամանը ստիպողական ու կարուկ էր :

- Ծեսայիները ձիաւոր ստուար խումբով մը, Գէորդ Զավուշի գլը-
խաւորութեամբ, այսօր Արտիսնք գլուղը կըլած են : Զօրամասերը տասնյ
վայրկեան կորսնցնելու՝ դաշտի արեւմուտքը պիտի շարժին եւ Արտիսնքէն
մինչեւ Զանկիլի Քիլիսէ (Ս. Կարապետ) երկարող ճանապարհները կարեն :

Յոխորտացող զօրքերու եւ ոստիկաններու թեւերը թուլցան : Մեղ-
բապետի այդ շրջանին մէջ Ծեսայիներ չկային, ու հրամանատարի հրա-
հանգը կարուկ էր : Անմիջապէս ճամբայ պիտի ելլէին եւ շոքս ժամուայ
տարածութիւն պիտի կտրէին, հրամանատարի նշանակէտերուն հասնելու :

Քէօտէ պինպաշիին խիստ բնաւորութիւնը պիտէին : Զօրամասերը
ճամբայ ելան մութը դեռ չկոխած : Ոստիկանական ֆոկասները անոնց հե-
տեւեցան, մութ գիշերի վախը սիրտերնուն մէջ :

Մերգա պէկը իր գինեալ վոհմաններով տէրը կը մնար Օրկնոցին :
Աչքը վախցած գիւղացիները իր բռնութեանը տակ պահելու անձնավտա-
հութիւնը ունէր : Մուշի ազդեցիկ թուրքերէն էր ու միշտ վստահ էր թէ
նահանգապետը օգնական ուժ պիտի գրկէր, եթէ ատոր կարիքը զգար :

Օրկնոցի մարտական խումբը գիշերը պահակ կեցած էր գիւղի այն
երկու տնակներուն շուրջ, ուր զէնքերը պահուած էին :

Յմբապետին շուրջն էին երկու տասնետիկ մարտիկներ :

- Տղա՛ք, այս շունը կատողած է, կրնայ քերտ ցեղախումբերը մեր
վրայ թափել : ձեռքերնիս զէնքին վրայ պահենք : Սարհատ մեզի ըսաւ՝
զգոյ՛լ ըլլա՛ք, բայց երբ հարկադրուիք, զարկէ՛ք կեծակի պէս :

- Դանակը սակորին հասաւ, - ըսին մարտականները, - արշալոյսին
մեր սուրհանգակը պիտի վերադառնայ, տեսնե՛ք արեւը ինչպէ՞ս պիտի
ծագի մեր գիւղին վրայ :

- Սարհատի գէմքին վրայ փոթորիկ մը կար. վստահ եմ, թէ վիշա-
պի դուրսը պիտի ջախջախէ, - ըսաւ խմբապետը :

Ու խումբը կենդանիներու շունչէն տաքցած, կծկած էին երկու ա-
խոռներու մէջ, զէն ի ձեռին :

»

- Ո՛ւր է Գէորդ Զավուշը...

Հարցումը պաշտօնական ու անպաշտօն թուրքերու շրթունքին էր :
Նոյն հարցումը Մշոյ դաշտը ճնշող պէկերուն եւ ազաններուն ականջներուն
մէջ կ'արձագանդէր :

Սարհատ, սակայն, հոն էր, հայ ժողովուրդի որտին մէջ, ամէն
տեղ : Տարօնցիները անոր ճերմայուրութիւնը կը զգային, իրարու երես կը

նայելին անխօս, եւ ամուր քայլերով կը կրէին բռնութեան երկաթէ լուծը։
 Ու Սարգստ երեւցաւ Մշոյ դաշտի արեւելքը, Արտիսնք զիւղի տանիքներուն վրայ։ Երեւցաւ Սարգստ, ցնցող Համարձակութեամբ, ձիաւոր, ժողովուրդի մեծի եւ պզտիկի աչքերուն առջեւ, կարծես Հայոց ազատութեան դրօշը պարզուած էր ամբողջ դաշտին վրայ, ու Հայ բանակն էր, որ կ'անցնէր զէն ու դրահով։

- Բարո՛վ տեսանք, բարո՛վ տեսանք, Սարգստ սիրական, մեր տուն ու տեղը, կին ու ճիծը ձեր ճամբուն խուրպան...։

Ժողովուրդի հոգեկան պոթիումն էր, որ կը թնշար Արտիսնքի տանիքներուն վրայ։ Ֆետայիները, օր ցերեկով, ձիաւոր, սպառազէն ու անբռնաման, զիրենք պաշտող ժողովուրդի գրկին մէջ։ Ազատութեան խելայիզ հրաշք...։

Ժողովուրդը վարժուած էր զգալ Ֆետայիներու ներկայութիւնը, դիտէր անոնց հերոսական թոխչեները, իր երեւակայութեան մէջ կազմած էր անոնց դիմագիծը, Հասակը, զինուելու կերպը՝ Անվեհեր կանգնած քըշ-նամուս առաջ...։ Հիմա, անոնք շօշափելի էին իր աչքին, անոնց ձայնը կը լսէր, անոնց ասիւծային ճեմումը կը տեսնէր։ Ու անոնք կը բազմանային ժողովուրդի աչքին, կը բարձրանային լեռնացումով, անպարտելի երկաթեայ բանակ մը կը դառնային։ Ս'հ, այս անձնուէրները, որոնց նահատակութիւնն իսկ յաղթանակ կը թուէր Հաւատաւոր այս բազմութեան աչքին։

Սարգստ իր գոթորկալի կեանքի տարերային թափին մէջն էր։ Տարօնի ժողովուրդի անձնագուհ զգացումներու բռնկուն արտայայտութիւնները եւ ազատագրական պայքարին բոլորանուէր պատրաստակամութիւնը կը պողպատէր անոր կամքը եւ աւելի քան մղիչ ազդակ մը կը դառնար, աներեւակայելի խիզախումներու։

Ճամբայ ելած էր կայծակնային արշաւի մը ու մրրիկի պէս անցած էր Մեղրագետի դիւղերէն։ Երկաթէ լուծին տակ տնջացող զիւղերը անոր անցքէն շունչ ու կորով կը ստանային, իսկ պէկերու եւ աղաներու սիրտէն սարսուռ կ'անցնէր։

Մկրտումի Հասան աղային բաժնուած՝ խաւարը կը Հալածէին եւ ճամբան շեղելով՝ սրնթաց արեւելքէն արեւմուտք կը դառնային։

Դղրդապին անոնց անցքը թրքական պահակներ Հաննց անոնց դէմ. Տեղ մը Դէնրպ Զափուշի անունը բաւական եղաւ որ պահակները լռեն, ուրիշ տեղ մը՝ կրակ բացող յամառ զինուորները շանթաւար ինկան։

Ու Ֆետայիները, արշայոյսը հագիւ բացուած, արդէն Արտիսնքի պատերուն տակն էին։

Արթուն պահակները հրճուանքով լսեցին ազդանշանը.

- Մովասա՛ր...։

- Մուրատ զե՛տ...։

Ու վազեցին ընդառաջ։

Ֆետայիները տեղաւորեցին որ հանդատանան քանի մը ժամ։

Կոմիտէն եւ մարտական խումբը միայն տեղեակ էին որ այդ օր, արեւը բացուած էր Արտիսնքի վրայ, ազատագրական բանակը իր ծոցին մէջ։

Ու ահա, Հիմա, քանի մը ժամուան հոնգիստէն ետք, Սարգստ Արլանը, իր թիկնեզ անձնուրացներուն հետ, զիւղին կեղրոնն է, շրջապատուած ամբողջ ժողովուրդով։

Երբն՞ մը եւ երկու խոյեր մատաղ եղած են անոնց հաբերուն առջեւ :
Գիւղը անօրինակ ուրախութենէն կը խեղդուէր : Կարուած իրենց վի-
ճակուած ճնշիչ իրականութենէն, ազատութեան ցնծատօն մը կ'ապրէին :
Կը շարժէին, կ'երթային ու կու գային : Կիներուն արցունքով օծուն դէմ-
քին վրայ անհուն ժպիտ մը կը խաղար :

Գիւղի մարտիկներն ու երեւելիները, քահանայի գլխաւորութեամբ
Ֆետայինները շրջապատած՝ կարուած էին Սարհաթի շրթունքներէն :

- Պարոն Սարհաթ, ո՞յս խաւար երկրի վրայ լոյս մը պիտի ծագի՞, -
քահանան էր որ տառապած հայութեան համար լոյս ու յոյս մը կ'որոնէր
Սարհաթի աչքերուն մէջ, - ձեր վերադարձը մեր ժողովուրդը սուգէն հա-
նեց, դուն բարո՞վ դարձար մեր գիրիը :

- Թուրքը լոյսին ու ազատութեան թշնամի է, - քսաւ Սարհաթ, -
միայն մեր ժողովուրդի հրացանի կրակէն լոյս մը կրնայ ծագիլ :

Ու դառնալով գիւղապետին .
- Ռէ'ս Պետրոս, դուն անմիջապէս ձի' նստէ եւ Մուշ գնա' : Նահան-
գապետին կը յայտնես, որ Գէորգ Չավուշ, իր Ֆետայիններով, Արտիսնք
նստած է :

Պաղ հով մը անցու բոլորի վրայէն .
- Ի՞նչ կ'ըսես, պարոն Գէորգ, ես մատի՞չ եմ որ այդ բանը ընեմ :
Եթէ կասկած մը ունիք, տեղն ու տեղը գնդակ մը տուէք սրտիս : Մահը ա-
ւելի լաւ է, քան Մուրք գործին դաւաճանիլը :

Սարհաթ լսած էր որ գիւղապետ Պետրոսը թույլ բերան է : Արիթը
օգտագործեց երկու նպատակով, նախ որ այդ տիպի մարդիկ սարսափին
եւ կրկորդէ՝ որպէսզի թրջական բանակը գէպի արեւմտաք բաշէ :

Սարհաթ, չի՞լ մը սիրտ աւրով գիւղապետին, շեշտեց .
- Պետրոս, դուն մատնիչ չես, բայց մեր գործին կու գայ որ դուն
հիմա երթաս եւ մատնես մեզ նահանգապետին : Այս ալ յեզափոխական գործ
է, քանի որ քու ըրածիդ պատասխանատուն ես եմ :

Անճրկած միճակ մը ունէր գիւղապետը .
- Պարոն Գէորգ, Աստուած կը ներէ՞ որ ես այդ քայլը առնեմ :
- Աստուածն ալ կը ներէ, ես ալ կը ներեմ, ժամանակ չկայ կորսըն-
ցընելու, անմիջապէս ճամբան բռնէ' :

Գիւղապետ Պետրոս, սիրտը դող, հալածականի պէս ճամբայ ելաւ
ու կէսօր չեղած՝ կառավարութեան կեդրոնը հասաւ :

- Փաշան կ'ուզեմ տեսնել, էֆէնտի, շատ կարեւոր տեղեկութիւն
մը անոր պիտի յայտնեմ, - ու սկսաւ շուրջը նայիլ : Վախ կար անոր աչ-
քերուն մէջ, կարծես թէ մէկը ատրճանակը գանկին ուղղած էր :

Ներս առաջնորդեցին :
Փաշան ամպամած դէմքով ընդունեց երբեմնի տեղեկատուն :

Գիւղապետը, միշտ շուրջը նայելով, սարսափի ամբողջական արտա-
յայտութիւնը դէմքին, մինչեւ գետին խոնարհած .

- Փաշա', գիւղերնին քանդուեցաւ... Գէորգ Չավուշ 20-30 Ֆետա-
յիններով մեր գիւղը մտաւ : Օր ցերեկով գիւղին կեդրոնը նստած է ատուը-
նէ սկսած, դէպք պիտի պատահի եւ գիւղը պիտի աւերուի : Ի սէր Աստու-
ծոյ, զո՞րք հասցուցէք այդ կողմ : Փաշա', եթէ գիտնան որ Մուշ եկած եմ,
չլուխս պիտի կտրեն :

- Պետրոս, տղա'ս, դուն քու պարտականութիւնը կը կատարես պե-

սուսթեան Հանդէպ, դուն կառավարութեան պաշտօնեայ ես եւ մեր պաշտպանութիւնը կը վայելես: Շուտ դիւզ վերադարձիր եւ չորս կողմդ նայէ, որ այդ շարագործներուն դէպի ուր շարժիլը գիտնաս:

Այս լուրն էր որ տակնուվրայ ըրաւ նահանգապետի ծրագիրը:

Քանի մը ոստիկաններ ալ դաշտէն Մուշ կը հասնէին եւ շունչ կ'առնէին զօրքերու հրամանատարին եւ նահանգապետին քով:

Ասոնց զնկուցումը աւելի տարօրինակ պատկեր մը կ'աւելցնէր ճամուռիչի արագապատում տեղիկութեանց վրայ:

- Փաշա', մենք մեր աչքով տեսանք որ Ֆետայիները թմբուկի եւ զուռնայի տակ պար բռնած էին Արտիսնքի բակերուն եւ տանիքներուն վրայ: Անշուշտ անցանք ու անոնք նոյնիսկ ուշագրութիւն չդարձուցին մեր կողմը:

Դէպքերու արագութիւնը, Օրկինոցի եւ Յունանի ձիաւոր արշաւանքը, զօրքերու շարժումները նահանգապետն ու հրամանատարը լուրջ մտահոգութեան մատնած էին:

Ու հիմա որ Գէորգ Զաւուշի խումբը դաշտի արեւմուտքը մտած էր, անոնք ծրագրեցին զինուորական օդակի մէջ առնել Ֆետայիները, եւ ոչընչացնել դանոնք: Արդէն Ս. Կարապետի եւ Ս. Յովհաննէսի վանքերուն մէջ դորամասեր կային: Արեւելքէն ուժերը արագօրէն պիտի փոխադրէին Մուրատ գետի շրջանը:

Խոտազոյն հրամանը արդէն հասած էր Օրկինոց: Ահագանդը տրուած էր դորամասերուն, ու զօրքերը կը շարժէին դէպի Արտիսնք եւ Մուրատ գետի եզերքները:

Եւ սակայն Սարհատի կայծակնային խումբը մարտական պարը կը պրկէր Արտիսնքի մէջ: Ժողովուրդը անհունօրէն խանդավառ էր ու մէկ օրուան սպաս կեանքին համար՝ պատրաստ էր սուսնով տեղով սրբազան ուխտին զոհարեռուելու:

Անտուանայի օր մըն էր: Օ՞ր էր թէ քանի մը ժամ. ով հաշուի կ'առնէր: Ժողովուրդին համար սրտայոյզ ապրումը կը լեցնէր մթնոլորտը:

Սպասուղէն Ֆետայիներու պարը, երկաթեայ զնդոցով, դիւղը հնչեղ տիեզերքի մը վերածած էր:

Երագային Հեթիաթ, թէ՞ ողելուն: Իրականութիւն:

Երէկ, Ֆետայիները գոմերուն մէջ զաղտաղոցի կը մտնէին, այսօր դիւղին կեղերնը պարի կանգնած են:

Երէկ, աչքէ հեռու, ստքով, մութ ձորերէն կ'անցնէին, այսօր ձիաւոր, դաշար իրենց տրոփին տակ առած էին:

Մահը արհամարհող ժողովուրդին համար մէկ քանի ժամուան ազատութիւնը գերազանց երջանկութիւն մըն էր:

Ազատութեան պայթար, արիւնոտ երջանկութիւն...



Սարհատի ձիաւոր խումբը Արտիսնքէն մեկնեցաւ արեւմուտէն առաջ: Գիւղտպետին.
- Քիչ ետք, թրջական զօրքերը մեր դիւղը պիտի մտնեն: Թողքեցէք մեր դէմ ու հայհոյեցէ՛ք մեզի:

- Մեր բերանը կը կոտրի, այգպէս բան չենք ընէր, - ժողովուրդէն ձայն բարձրացաւ:

- Պօսք մտիկ ըրէ՛ք, զուք մեր վիզը կը ծռէք, իսկ Պետրոսը մեր բուրբի կողմէ ամէն բան կ'ըսէ:

- Աստուծոյ կրակին մէջ կ'այրես դիտ, պարոն Սարգսա, բուրբի աչքին դաւաճան դարձանք:

Գիւղացեալը իրական տառապանք մը կ'տպէր:

- Մի մտահոգուիր, Պետրո՛ս, քու ըրածը մեր գործին կ'օգնէ, - քսաւ Սարգսա, եւ միտուն գլուխը դարձուց դէպի Սաննոյ բարձունքները, իսկ խումբի մէկ մասը ուղղուեցաւ դէպի Ս. Կարապետ:

Արեւի վերջին ճառագայթները լիտնեցու դազաթներէն կը քաղուէին, երբ թրքական զօրքը Արտիսոնք հասաւ:

Ճիշդ այդ պահուն, երկու խումբի բաժնուած Ֆետայիները իրար կը դռնէին Մեղրապետի եւ Արածանի խառնուրդին անկիւնը, ու դէմքերնին կը դարձնէին գէպի արեւելք, Ալի՛ւանի եւ Օրկնոցի շրջանը:

Գիշերը համատարած էր, ու դաշտը կը մնար Ֆետայիներու տիրապետութեան տակ:



Անային դիշերը կը թանձրանար Ալի՛ւանի վրայ, որ տարօրինակ ու խորհրդաւոր գիւղն էր Մշոյ դաշտին: Մարտական ուժեր ունէր անձնուրացներուն կողքին, ու մարտական ուժեր կը պահէր իր ծոցին մէջ:

Պրկած շիղերով գիւղը ինքն իր վրայ կը գալարուէր:

Քերիմ պէկը, արիւնի հոտ տոտծ գազան մը, եկած ու տեղաւորուած էր Ալի՛ւան, աէր ու տիրական դառնալով գիւղին: Սուլթանի հրամանն էր...

Ու այդ գիշերուան կէսին, Ալի՛ւանի թաքստոցները Սարհատի շունչէն սուգարուն, գէնք ու դրահի արձագանգներով կը զնգային:

- Դուն բարո՛ւ վ եկար, Սարհատ սիրելի, մեր սրտին մէջ եկար, մահն այլեւս արժէք չունի մեր աչքին, - մարտիկներու սրտաքուխ կանչն էր, որ գիւղի ներքնուղիներուն մէջ կը լսուէր:

Գիւղին յատակը ուրիշ գիւղ մը, ներքնուղիներով իրարու միացած, մէկ ծայրէն միւսը: Ու այս զնտաններէն վեր, Քերիմ պէկի երկաթէ կրունկները, անտեղեակ թէ հրարութի վրայ կը քալէին:

- Այրեցին մեզ, պարո՛ն Սարհատ, Սուլթանի հրամանն ունին, ու վրան ալ աւելցուցած են նաեւ իրենց Ալլահին հրամանը:

Ջեկուցումները իրարու կը յաջորդէին: Հոն հասած էին Օրկնոցի, Մկրազոմի եւ այլ շրջաններու սուրհանդակները: Գիշերն էր իրենց ցերեկը, ու մութին մէջ անոնք կը շարժէին արագ ու յանդուգն:

Կեսիքի եւ մահուան պատերազմ էր:

Օրկնոցի սուրհանդակի երեսնն տիրութիւնը կը կաթէր:

- Մի՛րգա պէկը կատղած շուն դարձած է, գիւղը մոխիր պիտի դարձնէ: Ի՞նչ ընենք, պարո՛ն Սարհատ:

Ու Սարհատ Ասլանը կը լսէր չորս կողմէ հասած տեղեկութիւնները, երբ յոգնարեկ Ֆետայիները կը հանդստանային: Սուրհանդակները լուսաստղը չծագած՝ ճամբայ պիտի ելլէին:

- Ժողովուրդը իր ցաւերը ժողացած է, - ըսաւ Ալի՛ւանցի մարտական

մը, - Տեստայիններու դաշտ իջնելը յուսաւատ ժողովուրդին յոյս ներշնչեց: Թուրքը միայն գնդակէն խօսք կը հասկնայ:

- Փառք Աստուծոյ, Հասան աղան պոչը իր ոտքերուն մէջ առած է, պարոն Սարհատ, ձեր անունով կ'երդնու. գիւղը շունչ առաւ...-

- Կը Հաւտտամ Հասան աղայի խօսքին, - ըսաւ Սարհատ ու դարձաւ Ալիջանի խմբապետին:

- Զեր Գերիմ պէկին նամակ գրած էի որ գիւղին լաւ նայի, ի՞նչ ընթացք բռնած է այս մարդը:

- Աւելի կատաղի դարձած է, պարոն Սարհատ: Իր քով կանչեց գիւղապետը եւ երեսելիները եւ մտրակի ու աքացիի տակ առաւ գանձնք, միշտ կրկնելով.

- Գուք Գէորգ Չամո՞ւշի վրայ յոյս դրած էք: Զեր կաշին պիտի հանեմ, թո՛ղ Տեստայինները գան եւ ձեզ պաշտպանեն:

- Լաւ, կը տեսնենք: Գիւղական խումբը զէնքին կառչած պիտի մընայ: Քերիմը յանդուպն է եւ հետը լաւ կուտղներ ունի, եթէ գործը զէնքին հասնի, գարկէ՛ք:

Սարհատ դարձաւ սուրհանդակներուն:

- Այս նամակները տեղ կը հասցնէք: Կոմիտէն ու մարտական խումբերը արթուն պիտի մնան, եւ եղած հրահանգները վայրկեան վայրկեանի շործադրեն: Քանի մը նամակներ կարգ մը Պէկերուն եւ Աղաներուն ուղղւած են: Քիւրտերու կամ Հայերու միջոցաւ անոնց ձեռքը կը հասցնէք: Թող ըսեն, - ճամբան բռնեց մեզ եւ պատուիրեց որ այս նամակը ձեզի բերեմ... քիւրտերուն նուէք տուէք:

Սուրհանդակները ճամբայ Լյան:

Սարհատ իր թաշտոցը քառուկցաւ: Արթուն պահակները միշտ իրար պիտի փոխարինէին: Քերիմ պէկը կասկածամիտ եւ արթուն հակառակորդ մըն էր:

Ալիջան գիւղը երկու օրէ ի վեր լուռ էր ու կրուն: Քերիմի պահակները ժողովուրդը ընկճուած կը տեսնէին ու աւելի համարձակ կը գործէին:

Գիշերուան լուսթեան մէջ, նկուղէ նկուղ կ'անցնէր ժողովուրդը: Ուրախութեան ու յոյսի ճառագայթում կար բոլորի դէմքին: Այս ստորերկրեայ նկուղներուն եւ անոնց կից սենեակներուն մէջ Հայ մարտական ընտրանին, ձեռքը զէնքին, աշխատաւոր բազմութեան ազատութեան Համար իր արիւնը դրած էր զոհողութեան սեղանին:



Մշոյ դաշտի արեւմտեան գիւղերը շրջապատուած էին: Թրքական վաշտերը Արտիտնքէն Ս. Կարապետ եւ Ղէպի Սասնոյ լեռները՝ Ս. Յովհաննու վանքի ճամբաները կտրած՝ գիւղերը կը խուզարկէին եւ մտրակի տակ շատերու ոտերները կը փշրէին:

- Ո՞ր է Գէորգ Չամուշը... Կեանքուն'ը, ձեր գիւղերը ժողովրդի պիտի վերածենք ու ձեր Տեստայինները ծուխերուն մէջ պիտի խեղդենք:

Գիւղական բազմութիւնը, սիրաբ լեցուն ազատութեան յոյսով, Սարհատի փոթորկալի աջլաւանքէն գինով, կը տանէր բռնութիւնը: Անաստան Հաւատք ունէր Տեստայիններու քաջութեան եւ յանդանութեան վրայ: Բռնա-

կային առջեւ, կը ներկայանար վիզը ծռած, կքուն, անմեղ... սակայն սիրտը ամուր:

- Գնավուրնե՛ր, անմեղ ձեւեր կ'աննէք, բայց երբ Գէորգ Չավուչը Երեւի, մտտադէմը կը մորթէք անոր ոտքերուն առջեւ: Ձեզ բոլորը պիտի մատդնէք որ երթաք Հասկնաք ձեր փնտռած ազատութեան արժէքը:

Կրակ կարած էին թրքական Հրամանատարները, ստիկանապետները ու Ալույի պէկը իր մտրդասպան զորամասերով:

- Ո՛ւր է Գէորգ Չավուչը...-

Հարցումին պատասխանը կը լսուէր Հեռուն, դաշտի տրեւելիան շրջանէն, սուսքի մը ուժղնութեամբ.

- Միրզա պէկը դաշունահար ինկած է իր բերդին մէջ...-

- Տեսույիները ձիարշաւ կը խաղուն Օրկնոցի, Ալիջանի, Քրասաղսի եւ Յրանքի շրջաններուն մէջ:

- Քերիմ պէկը, շրջապատուած իր զինուորներով, սրտէն զնդակ մը ստացած է գիշերը, ճաշկերոյթի պահուն:

Տարօրինակ եւ պայթուցիկ լուրերը զինուորականներուն եւ ստիկանապետներուն շրթունքին վրայ էր, ու այդ լուրերու արձագանգը կը հնչէր Տարօնցիներու ներքնախարհին մէջ, աւելի խորունկ, աւելի յուսադրիչ:

Մարերու Ալուան էր, որ կ'անցնէր Մշոյ դաշակն, ու անոր անցքը կը պողպատէր յեղափոխութեան ելած այս աշխատաւոր ժողովուրդի Հոգին:



Այդ իրիկուն Տեսույիներուն Հանդիսի վերջին պահը եղաւ: Անոնք պատրաստուած էին խաւարը ճեղգելու:

Պարտականութիւնները ճշդուած էին: Մարհատ ծանօթ էր անոնց ուժէն մէկուն յանդգնութեան ու պաղարիւնութեան, ու զիտէր թէ անոնք գնդակին դէմ աչք չեն թարթեր:

Նշանուոր այդ երեկոն տօնախմբութիւն կար Քերիմ պէկի քէօջքին մէջ: Հոն Հաւաքուած էին շրջակայ ազաներն ու զինեալ Հետեւորդները, պէկին տօնը շնորհաւորելու:

Ալիջանի գիւղապետը քանի մը երեւելիներուն հետ, կքուն, Հոն էին, բնդունելութեան սրահին դռներուն առջեւ, պատրաստ ծառայելու:

Մարհատի պողպատեայ դէմքը փոխուած էր: Ժպիտ կար դէմքին ու կատակի սկսած էր այս ու այն խմբապետին հետ:

Բոլորն ալ գիտէին թէ գործի ժամը հնչած է: Մարհատ ժպիտով ու կատակով կռիւր կը գիծաւորէր:

Մարհատի խումբը գիւղին եզերքի երկու տուներէն լոյս աշխարհ եկաւ: Գիւղի մարտականները ձիերը պատրաստ կը պահէին տուներու երկայնքին:

- Տիգրան, այս քիւրտերը ա՛ւ եւ գիւղը մտի՛ք, հինգ Հոգի է՞ք, Համբոնքը չկորսնցնէք, - ըսաւ Մարհատ եւ ձիերը քնցին դէպի Օրկնոց:

Տիգրան, քաջամարտիկ Ալիջանցին էր, որ շոք տարիներէ ի վեր անձնուրացներու շարքին մէջ՝ լեռները ոտքի տակ կու տար: Ձեռնարկի վարիչն էր, ու առանց վայրկեան կորսնցնելու, գիւղական կարած վերաբերու մը հոգաւ, հինգստ արադչի մը գլուխը, անձանաչիկի դարձած՝

ժիւրտերուն հետ ուղղուեցաւ Քերիմ պէկը քէօշքը: Երկու մարտականներ հետուէն իրենց պիտի հետեւէին. միւսները գիւղին այդ անկիւնը պիտի պահէին, սպասելով դործի ելքին:

Եւ սակայն ժիւրտերը իրարու հետ հայերէն կը խօսէին: Անոնք ծըլպտըւած Ճետայիներ էին: Մօտիկ եւ Մկրօն կրակը նետուող հին մարտիկներ էին, բայց դիւղէն անցած պահուն ոչ ոք կրնար զանոնք զանազան, զբտական աղայէ մը կամ զինակիրէ մը:

Տիգրան, վիզը ծռած, դիւղի երեւելիներէն քիչ մը անդին կծկեցաւ: Պետիկն ալ իր կողքին: Ոչ ոք անոնց ուշադրութիւն դարձուց, Իսկ ժիւրտերը, հիւր եկողի մը համարձակութեամբ լիցուն սրահը մտան:

- Ալլա՛մ Ալլա՛մ...
- Ալլա՛մ Ալլա՛մ:

Ու այս նշանաւոր ժիւրտերը դրան ըով տեղ բռնեցին, զինեալ բազմութեան շարքին:

Քերիմ պէկը սրահի վերին ճակատը բազմած էր, աղաներ եւ հիւրերը առած էր իր շուրջը: Հետեւորդները պատերուն տակ շարուած էին, իրենց զէնքերով:

Քերիմ պէկը նորեկներուն ուշադրութիւն դարձուց, աւելի զննեց, ու ձեռքը տարաւ զնքին: Ճիշդ նոյն վայրկեանին երկու Ճետայիներու տասնոցները դործեցին: Քերիմ պէկը կուրծքէն վիբուտը ինկաւ: Լոյսերը ծարեցան եւ վիբուտըներուն հոնդիւնը սրահը լիցուց:

Պէկը վիբուտը, օգնութիւն կը պոտար: Ձէնքերու կրակոցը կը շարունակուէր: Ով որո՞ւ դէմ կը կրակէր, մթութեան մէջ անորոշ կը մնար: Ներս եղողները զուրս կը խուժէին խուճապահար: Տիգրան ու իր ընկերները դռնէն ելլողներուն վրայ կեղքոնացուցած էին իրենց համազարկերը: Քերիմ պէկը դռնէն զուրս կ'ելլէր երեքայով, եւ միշտ օգնութիւն կ'աղաղակէր: Տիգրան օգնութեան կը հասնէր... զնպակով մը: Պէկը սանդուխներէն վար կ'իյնար թուալգլոր: Ուրիշ դիակներ ալ կային տապալած սանդուխներուն առջեւ:

Տիգրան իր հետեւորդներով զուրս ելաւ քէօշքէն, յոյս ունենալով որ խուճապահար ժիւրտերուն մէջ իր ընկերները պիտի գտնէր:

Անոնք չերեւացին...

Դրան եւ սրահին մէջ տասնընթաս դիակներ ինկած էին անշունչ: Ետտեւր կային վիբուտը:

Անոնք որ իրենց կիսները դրած էին զէնքին վրայ, հոն նահատակուած էին: Մութին մէջ փոխանակուած զնդակներէ՞ն թէ Տիգրանի համազարկերէն ինկան անոնք, իրենց պարտականութիւնը լրիւ կատարած, մարդ չգիտցաւ:

Սարսափի գիշերը կը ծանրանար Ալիշանի վրայ: Գիւղացիները ներքնուղիները մտած էին: Գիւղի մարտականները քանի մը անկիւններ բռնած՝ ժողովուրդի ապահովութեան վրայ կը հսկէին:

Քէօշքի շրջապատը մահուան սարսափը կար: Հիւրերէն ով ոք ազատուած էր, կը հետանար Ալիշանէն, հալածականի պէս, առանց շուրջը նայելու:

Մտեւալին լուսութեան մէջ, նուազուն վայրիւններ միայն կը լսուէին:
 Քերիմ պէկը եւ անոր արիւնկալ յետազակները խորտակուած էին:
 Այդ երեկոն անոնք մահուան սոսկումը լրիւ ապրեցան, ու նոր հասկըցան թէ մահ կայ իրենց համար ալ այդ աշխարհին մէջ:



Գիշերուան կէսն էր, երբ Սարգստի ձիաւորները հասան Օրկնոցի մարազներուն:

- Մովսաւ'բ...

- Մեղքապետ:

Պահակներն արթուն էին...

Սարգստ ձիաւորներու մեծ մասը իր հետ առաւ եւ գլխաւոր ճամբան կտրեց, Միրզա պէկի բարձրադիր բնակորանէն հարիւր մեթր հեռաւորութեան վրայ: Գիւղի մարտիկներուն պատուիրեց որ իրենց տուները դառնան:

- Մարդ չե'նք տեսած, բան չե'նք լսած, - պատուէրը լաւ գիտէին: Միւս ձիաւորները դիւղին եղերքը, Մկրտումի ճամբան բոց պիտի պահէին: Հինգ երիտասարդ ու իրիզուի Ֆետայիներ, ձիերը յանձնեցին ընկերներուն ու նայեցան Սարգստին:

- Արագ շարժեցէ՛ք: Հոս մեզի կը սպասենք: Միայն դաշոյն պիտի պործածէք: Եթէ պէտք եղաւ, կրակը մեզմէ պիտի բացուի:

Ու անոնք մտիկն մէջ անհետացան:

Լուսթիւն ամէն կողմ, որ կ'ընդհատուէր, երբեմն, շունչերու հաղորով:

Կէս ժամէն Ֆետայիները վերադարձան, քրտինքի մէջ կորած:

Չեկուցումը կարճ էր:

- Պարտն Սարգստ, Միրզա պէկը վերջին բարեւը դրկեց քեզի, եւ տնդիի աշխարհը գնաց: Մենք ալ քու նամակը անոր սրտին վրայ դրինք, ու դարձանք:

- Ապրի՛ք, դուք հինգ դասիք, հինգ ալ դարձաք: Տեսնենք Տիգրանի հինդ ընկերները ինչպէ՛ս պիտի դառնան:

Ու հարուածող խումբը քառասորով անցաւ դէպի Մկրտում, ուր պահակները արթուն էին, եւ հարցական կը նայէին Սարգստին:

- Միրզա պէկը մեր մեռած պապերուն քովը դնաց, - ըսաւ Սարգստ, - վաղը առաւօտուն հանդիպեցէք Հասան աղային, եւ հաղորդեցէք անոր իմ բարեկեանքը, բո՛ւք որ այս կողմերէն անցաւ գիշերը, բայց ժամանակ չունէր հիւր դալու իրեն:

Բարեկամութեան հետ, սարսափի զգացումը մթնոլորտին մէջ կը մնար:

- Ձեր բազուկին մտտաղ, մեր սիրտը դովացաւ: Վե՛րջը... Յեղափոխութեան Աստուածը ողորմած է, - Մկրտումցիներու գոհունակութեան մրմունջներ:

Արդէն Ֆետայիները հեռացած էին անորոշ ուղղութեամբ, ու հորէն ձիերու սմբակներու խուլ ձայնը կը լսուէր:

Մկրտումը հրճուանքի մէջ էր ու անհամբեր կը սպասէր արեւի ծագումին:



Քրտազոմի մարազներուն քով իրենց պիտի միանայ Տիգրանի խումբը: Գիւղին հաղիւ մօտեցած, կոմիտէն եւ մարտականները ազդանշանը տուին եւ դիմաւորեցին Սարգստը:

- Մեր պիտուի եւ աչքին վրայ եկաք, մեր տուն ու տեղը ձեր ոտքերուն փոշի դառնան...

- Ձեր տուն ու տեղը Հայոց ազգին, դուք ալ, այս լայն դաշտը շալկած, ձեր պապերու ճամբով: Ի՞նչ կայ-չկայ:

- Պարոն Սարգստ, ձիւրէն իջէք, իրարու երես տեսնենք, մեր ցուկերը կը լսես:

Մարգարէ նշանին վրայ, Ֆետայիները հանդիստ ըրին:

Գիւղի տղաք գործի անցան: Փանի ժր վայրկեան ետք, Հացը, սելի ու պանիրը կը հասնէին:

Մարգարու պատերու տակ դիւերային խնճոյք էր:

- Ո՞վ կայ ձեր գիւղին մէջ, - Հարցուց Սարգստ:

- Երեք ոստիկաններ եւ Մուշէն Հինգ դիմուած թուրքեր Հոս նստած են Այայի պէկի Հրամանով եւ ուզածը կ'ընեն: Հրաման տուր, ասոնց վիրա կտրենք, ա՛լ չենք գիժանար, - գիւղապետն էր, որ արիւն կու լար:

- Լաւ, անոնց Հետ կը տեսնուինք: Գիւղի զէնքերը ապահո՞վ են:

- Աչքի լոյսի պէս կը պահենք, պարոն Սարգստ, յոյսերնիս այլ զէնքերուն վրայ է:

Սարգստը կարճ կապեց եւ անունը Հարցուց ոստիկանապետին:

Դարձաւ իր գինակիցներուն:

- Դուք պատրաստ եղէք եւ ուշադիր՝ որ Տիրանը ժամադրութեան տեղը չկորնցնէ: Տասը Հողի ալ ինծի հետեւեցէք Գալէին եւ Մանուկին Հետ:

Սարգստ ձիուն պուխը դարձուց զէպի դիւղամէջ: Տասնեակը անոր Հետեւեցաւ: Գիւղապետը Սարգստի ձիուն կողքէն կը քալէր:

Երբ ոստիկաններու բնակած տունը Հասան, Սարգստ դիւղապետին Հրահանեց.

- Դուն Հետացի՛ր եւ ալ մի՛ երեւիր:

Ու ձիաւոր խումբը թափով մտաւ բակը:

- Մէհմէտ էֆէնախ, դուրը բացէ՛ք, - կանչեց Սարգստ, թրքերէն ու պաշտօնական:

Ձիերու աղմուկէն արդէն արթնցած էին: Պաշտօնական Հրամանը որ դուրսէն կը լսուէր, Այայի պէկի կողմէ կրնար ըլլալ:

Դուռը բացին ու իրենց զէմ Ֆետայիներու տասնոցներն գտան:

Դողահար եղան բոլորն ալ: Ոչ մէկը անոնցմէ ձեռք չերկարեց զէնքին: Ատեն ալ շունչէին: Անոնց աչքերը յառած կը մնային տասնոցներուն:

- Ի՞նչ կ'ուզէք այս խեղճ ժողովուրդէն: Մենք ալ ձեզի պէս վարուի՞նք, - Սարգստի երկաթեայ ձայնն էր որ թրքերէն կը հնչէր անոնց ա- կանջներուն:

- Փաշա՛, մենք ի՞նչ ընենք, պաշտօնեայ ենք, մեզի Հրամայած են որ այս գիւղի պահակութիւն ընենք, կնո՞ղ-զաւակի տէր ենք, մեզի խնա- յեցէք:

- Ձեզ Հետ խօսողը փաշա չէ, պարզ Գէորգ Զափուլ մըն է...

Գէորդի անունը երբ լսեցին, աւելի դող առաւ անոնց սիրտը: Գլուխները կախ, մահապարտի պէս կայնած մնացին:

- Մենք Հիմա ձեզ բոլորը կրնանք կոտորել, բայց մենք մարդասպան չենք: Գիտցէ՛ք, ով որ Հայու անմեղ արիւնը կը թափէ, արիւնով պիտի խոսոյ:

Մոտոն եւ քանի մը Ֆետայիներ արդէն զէնքերնին Հուաքած էին:

Տղաք անհամբեր էին, ու կ'ուզէին համազարկով մը գետին փռել այս ննիչէրիները:

Բայց Սարհատա կարուկ սաստեց:

— Ոչ մէկ գնդակ: Մեր շարձակած գնդակէն աւելի պիտի ուրաւփին ասոնց նմանները:

Դարձաւ թուրքերուն.

— Այս անգամ ձեզի կը խնայեմ: Հուսաբեցէք ձեր իրերը եւ սրչալոյսը բացուելուն պէս, Մուշ գացէ՛ք: Ըսէ՛ք ձեր փաշաներուն որ հայրս արեան փոխարէն ձեր մեծերուն գլուխը պիտի երթայ:

— Ենորհակալ ենք, — մինչև գետին խոնարհելով, — շնորհակալութիւն... Դողահար մընջեցին այս կախ պլուխները, որոնք անգէն ժողովուրդին դէմ՝ առիւծ կը դառնային:

Նոյն պահուն հոն հասան միւս Ֆետայիները, Տիգրան ալ իրենց հետ: Ու Ֆետայիները, ստուար զանգուածով, ճամբան բռնեցին, զբաւած ութը զէնքերն ալ իրենց հետ:

— Արա՛մ, Տիգրանը հասա՞ւ:

— Քովէզ ձին կը քշէ, պարո՛ն Սարհատ:

Սարհատ դարձաւ Տիգրանին որ կորստած արաղչին պիտուն պահած էր:

— Ա՛յ տղայ, լեզուդ բռնուա՞ծ է, ի՞նչ եղաւ, տղա՛յ է թէ աղջիկ...

— Տղայ է... պարո՛ն Սարհատ, բայց սիրտս սգաւոր դարձուց: — Ու պատեց Այիջանի արիւնստ հարուածը:

Սարհատ մտայլեցաւ եւ լուռ՝ ճամբան շարունակեցին:

Զիւտորներու նոր խուժումը աւելի սարսափահար բրտծ էր թուրքերը: Բայց անոնց քառատրոփ մեկնումէն շու՛նջ առին եւ անմիջապէս ներս փակուեցան: Փոռք տուին Ալլահին որ իրենց դուխը կը մտար ուսերուն վրայ:

Թուր կեծակի կայծկտում կար զաշտի մէկ ծայրէն միւսը:

Սարհատի փոթորկալի անցքէն երկինքն ալ մտայլեցաւ, որոտաց, ու աշնանային անձրեւի համանուազը բռնեց ամէն կողմ:

Այս ալ երկինքի արցունքն էր Մօսիկի եւ Մկրոյի վէրքերով լի ժարմիներուն վրայ...



Լոյսը բացուեցաւ այդ ահագոյս գիշերէն:

Ցնցող լուրերը կը հասնէին Մուշ: Բռնակալութեան հաշիւները օդը կը ցնդէին, ու զարհուրի զգացում մը կը թափանցէր թուրք եւ քիւրա վարիչներուն հոգիէն ներս:

Ո՛ւր է Գէորգ Չավուշը...

Գէորգ ամէն տեղ էր, հոգիներէն ներս, երկաթեայ կամքով:

Ու զիտակներ ինկած էին ոչ ոքի սրտերէն մէջ, անփառունակ: Ու բռնակալ պէկերը վտանգուած կը տեսնէին իրենց դուխը:

Միւրգա պէկի դաշունահար սրտին վրայ դրուած թուղթին մէջ գըրուած էր:

Ով որ անմեղ հայերու արիւնը թափէ, արիւնով պիտի վնասէ:

Սարհատի վճռական պատգամը տրդէն դորմադրութեան դրուած էր: Ակն ընդ ազան...

Թրքական զորամասերը, ժանտարմներն ու Ալաշի պէկէի վոհմակները Գէորգ Չավուչը կ'որոնէին ամէն կողմ, ցեխի եւ անձրեւի մէջ խրած, սարսափը սրտերուն: Ու ամէն տեղ կայծակնային հարուածի կը հանդիպէին, աներեւոյթ ուժէ մը, որ Գէորգ Չավուչի երկաթեայ բազուկէն կու գար. Ալիջանէն, Օրկնոցէն եւ ռազմաթիւ գիւղերէն ցեղապետները կը հեռանային իրենց շեռտերով, դիակներու սուգն ալ հեռանին:

— Ո՛ր է Գէորգ Չավուչը...

Քրտական տարագով Մասիկն ու Մկրտն, նահատակներ սրբացած, Մուշ տարին ցուցադրելու ի մխիթարութիւն Քուրթիուն:

Ձիւնախառն անձրեւները սկսած էին: Լեռները ձիւնապատ էին որդէն, ու ձիւնին մէջ խրած զորամասերը անզորութեան մատնուած:

Եւ սակայն, Գէորգ Չավուչի կեծակաւ խումբը ամէն տեղ էր, գաշտի մէջ ծայրէն միւսը: Անոնք գիկզակ ու արագ կը տեղափոխուէին: Օր մը պէկ մը կամ աղա մը կը շահեցնէին, իրենց ձածքուն վրայ սմանց շանթահարելով: Օր մը պէկերու շատը հիւրասիրութիւնը կ'ընդունէր Մարհատ, ու աղ ու հացով՝ բարեկամութեան դաշինք կը կնքէր անոնց հետ: Ուրիշ օր մը, հայ գիւղ մը կ'այցելէր ցերեկ ատեն: Գիւղը ազատութեան հրճուանքէն, մատաղներ կը նուիրարերէր խումբին, կերութեամ կ'ըլլար ու պարն ալ կը տաքնար բակերուն մէջ: Ի՞նչ յուսահատ արհամարհանք ցեղասպան թրքութեան դէմ:

Ու զօրքերն ու ժանտարմները կ'արշաւէին այս ու այն շրջանը, նահանգապետ փաշայի խտտապահանջ հրամանով, որ ամէն գետով Գէորգ Չավուչի կտրուած գլուխը կը պահանջէր:

Մարհատ, այս վճռական հարուածները տալէն ետք, լեռները ապաստանեցաւ ու կուտակուած ձիւներուն ապաւինեցաւ:

Կատաղած բռնակալութիւնը ցեխի ու ձիւնի մէջ խրած՝ կ'ոռնար.

— Ո՛ր է Գէորգ Չավուչը...

Մարտական ոգին սրողատած էր աշխատաւոր բազմութեան սիրտը, ու Մարհատ դարձած էր անոնց աննման դիւցազնը, անպարտելի կոստաւածը:

Սարեբու առիւծն էր որ կ'արթննար արիւնաքամ ժողովուրդի սըրտին մէջ:

(Շար.)

Կ. Ս.

Ը Լ Լ Ա ՚ Յ Ի Ր

Ըլլա՛յիր դուն գմբուխտ սազմը խագողին,
 Իյնայիր ծոցն իմ սանձակած խոհերուն,
 Հասուննայիր ու ողկոյզներդ կախուէին
 Առաստաղէմ իմ անյագուրդ տենչերուն...:

Կարմիր գինու գետ մ'ըլլայիր այսօր, դուն,
 Յանկայարոյց կարկաչներովդ գայիր վար,
 Ոռգէլիք երաշտ հանդերն իմ հագւայն,
 Հոն քափէլիք գմբուխտ, յակինք ու գօհար:

Ըլլա՛յիր դուն սրեան երակ մարքիս տակ,
 Խրինցէլիք գերք երիվար սամձակած,
 Պայտերը քու ցայտեցնէին բոց-կայծակ,
 Արեցնէին հոգիս սիրովդ ալեկած...:

Ծաղկածիծաղ դաշտ մ'ըլլայիր կրծքիս տակ,
 Մէջը դաշտին՝ չքնազ լինը Սեւանայ,
 Մասսի ծիրէն ծոցդ կարէր արեգակ
 Ու ցոլանար մինչեւ լեռները վանայ...:

Կայծակնացայտ ակն ըլլայիր երգերուս,
 Անծիր զվկիան՝ մ'իմ խոհերուն դեռ անգիր,
 Կեանքիս ճամբուն տայիր յաւտ պայծառ լոյս,
 Որ տուն դառնար իմ այս հոգին տարագիր...:

Գ Ե Ղ Ա Ա Ր - Գ Ե Ն Ղ Ա Ա Կ

Հ ա յ ի Վ ու ս

ԼԵՒՈՆ ԳԱՐՄԷՆ

Լ Ե Ր Ա Ն Շ Ո Ւ Ք Ը

(Կ Է Պ)

3.

Ժամը 350 մղոն կամ աւելի արագութեամբ՝ կեանքը կանգ առած էր՝ Տոբանի կիրճին ու Ջալալ գետի ափերուն վրայ:

Արեւածաղէն մինչեւ արեւմար տաժանելի պայտար մը կը մղուէր բնութեան դէմ - փոխելու ընթացքը կատաղի Ջալալին:

Պիտի քաղաքակրթուէր զևար: Տոբանի անդնդախոր կիրճին շնորհիւ: Սեւ ժայռերուն վրայ, սեւ ժայռերուն տակը հարիւրաւոր մարդիկ լծուած էին աշխատանքի: 500 մեթր արամազիծ ունեցող քարատաշին ընդմէջէն արդէն բացած էին ստալիի փապուղիին ու զետին վայրագ հոսանքը կրցած էին մասամբ շեղել՝ բարձրաւանդակէն դէպի կիրճը:

Փխոր, փոշի... ու մեքենաներու վիշապային ձայները, քարատաշերուն ընդմէջէն արձագանգելով կը վերածուէին բարբարոս համերգի մը: Մարդիկ արեւախանձ գէմքերով, իրենց քրտինքը, մկաններուն ուժը եւ ուղեղի պրկումներն ու թոքիչօնները միախառնած էին պայթուցիկներուն, երկաթէ ինքնագործ փոքիչներուն եւ այն ամէն ինչին, որ կը շրջապատէր դիրենքը:

- Մեւա՛յ... մեոա՛յ... առ ինչ կենդանական աշխարհ է, ծօ՛... առ ի՞նչ իրարանցում... - յաճախ կը տրտնջար Սնթուն:

- Աշխատիր... երտնելի, աշխատիր... գիտեմ հիմա կալուածատէր մեծ

հորդ ոսկորները կը բողոքեն ի տես իր փափկասուն թոռնիկին խղճալի այս վեճակին... գիտեմ, բայց աշխատիր... Քաֆէ Պրապիլ չէ հոս, ուր ամէն իրիկուն մեծ բերանդ բացած կը ճառէիր քու ըրած ու չըրած սիրազործութիւններուդ մասին... միշտ պարապ գրպանով:

- Լուէ, Ջալէ՛ն, լուէ՛ կ'ըսեմ, եթէ կ'ուզես բարեկամ մնալ ինձի հետ:

- Բարեկա՞մ - արեւելքի շուկաներուն մէջ բարեկամութիւնը կը ծախեն կանգունով... աշխատիր, ողորմելի, աշխատիր...:

- Ջալէն, մի՛ նեղեր տղուն: Կը տեսնես որ ան ամիսներէ ի վեր զերմարդկայինը ի գործ կը դնէ կասկելու այս լեռներուն: Ինչո՞ւ ձեռք կ'առնես զայն:

- Կը շնորհաւորեմ այլախորտութիւնը... որքա՛ն փափկասիրտ ես դարձեր:

- Մօ, ե՞րբ պիտի լրջանաս, ըսա Յակոբ, երբ լուրջ ես եւ երբ կը կատակես դժուար է ճշդել: Այոդ եւ ոչո՞ւ նորոջ է:

- Կը շնորհաւորեմ... Հիմա ալ բանասիրութեա՞ն սկսար: Գրական քննադատութեան կամ գրախօսականներու լարախաղացութենէն ետք սկսար բանասիրութեա՞ն, այն ալ մարդոց հետ՝ ճշդելու անոնց Այոն կամ Ո՞չը:

- Եթէ հայերէն պիտի խօսիք ես կ'երթամ, ըսա Անթուն ու ոտքի ելաւ:

- Այո, պարոն նախկին կալուածատէր, մենք գիշերուայ ժամը 10-էն հոգ միայն հայերէն կ'ընանք խօսիլ:

Անթուն առանց գիշեր բարիի հե-
ռացաւ: Հաւաքուած էին Մարտիկին
սենեակը: Մնացին երեքը: Երեք Հայեր
- Մարտիկ, Ջաւէն եւ Յակոբ:

- Ինչո՞ւ բարկացուցիր տղան, ը-
րածդ ճիշդ չէր:

- Գո՞ւն ալ Յակոբի փափկանկա-
տութենէն վարակուեցար, ըսաւ Ջա-
ւէն, լաւ էր որ հեռացաւ... Երբեմն ա-
ռանձին մնայու անդիմադրելի փափաքը
կուենեամ:

Մարտիկ չզատասխանեց: Գի-
տէր, լաւ կը ճանչնար Ջաւէնը: Ան այդ
գիշեր լուրջ էր: Մովորականէն աւելի
թեթեւալու իր ճիղը՝ ապացոյցն էր
այդ լրջութիւնն: Եւ լրջութիւնը Ջա-
ւէնի համար ուրիշ բան չէր, եթէ ոչ
Պայրոյթ, ասելութիւն, բխած շատ մը
խորտակուած ու չիրադրածուած բա-
ներէ:

Նոյնը կը գիտակցէր նաեւ Յակոբ:
Գիտէր թէ Ջաւէնի հետ պէտք չէ հա-
կանառել այդ գիշեր... մանաւանդ, որ
Ջաւէնի ձայնը դարձած էր ուսելի ան-
հրապոյր, աւելի չոր: Կարծէք քարա-
յին ու անկենդան բան մը կար այդ ձայ-
նին մէջ:

- Վերջի վերջոյ իրաւունք չունի՞նք
խօսելու մենք մեր լեզուով: Ինչո՞ւ այս
կաշկանդումը, գիշեր աստե՛ն մանաւանդ,
երբ իման եմ քանի մը բաժակ լեզու
լի դառնար... ու միայն հայերէնով կըր-
նամ բացատրել ինքզինքս:

- Բանազոտութեան պէտք չկայ Ջա-
ւէն:

- Ի՞նչ բանազոտութիւն... պահ մը
զգաստացաւ Ջաւէն ու շէշտակի նայե-
ցաւ Յակոբի դէմքին: Լաւ պիտե՛ս, ես
մտաւորականի կամ դրոց-բրոցի ոչ մէկ
յաւակնութիւն չունիմ: Ինքնակերտ
մարդ մըն եմ, բարեկամ մեքենաներու,
այդ ալ սորված եմ արհեստանոցներու
մէջ, տարիքի մը, երբ դուն ու Մար-
տիկ զպրոցի նստարանները կը մա-
լեցնէիք:

- Լաւ, իրար մի անցնիր, բան մըն
էր ըսաւ տղան, ինչո՞ւ կը յուզուիս:

- Ես յուզուի՞մ... ուր է բանազո-

տութիւնը, պարոն պատգամաբօս:

- Լեզուական հարցին մասին նման
ակնարկութիւն մը ունի Թրմարք իր
«Յաղթանակի կամարձին մէջ»:

- Ի՞նչ առիթով:

- Միբոյ պատմութիւն մըն է: Նա-
ցիներէն հալածուած դերմանացի բժիշկ
մը առանց ինքնութեան թուղթերու՝
քաղաքական տարազիր - պատերազմի
նախօրհակին Փարիզի մէջ կը հանդիպի
տարօրինակ, զի մըն ալ զգայապաշտ,
ծնունդով իտալացի կնոջ մը: Կը սիրեն
զիրար Փրանսերէնով: Ո՛չ կինը գիտէ
գերմաներէն եւ ոչ ալ մարդը՝ իտալե-
րէն: Քալուատողի սարպուած բաժակ-
ները կը ստեղծեն երկուքին միջեւ սէ-
րէն աւելի բարձր մթնոլորտ մը, աւելի
մարդկային բան մը: Եւ օր մը - վիզա-
սանին քմահաճոյքը հաւանաբար - կը
տանի կինը մահուան անկողինին...
մահամերձ է ան: Բժիշկ սիրահարը
քոյն է: Կիտախուփ են կնոջ աչքերը...
անվերադարձ մեկնումն է: Կը զգան եր-
կուքն ալ եւ ինքնաբերաբար կինը կը
սկսի խօսի իտալերէն... մարդը գերմա-
ներէն: Միբոյ վերջին խօսքերն են՝ մեկ-
նողի մը ու մնացողի մը միջեւ: Սրտով
ու հոգիով կ'ըմբռնեն զիրար: Կը խօսին
իրենց մանկութեան լեզուով, որովհե-
տե՛ս կ'ըտէ Թրմարք - Կան ճգնաժամային
պահեր, կան վայրկեաններ, ուր կարելի
չէ խօսիլ պարտք առնուած, երկրորդա-
կան կամ անսեփական լեզուով մը -
ահա այս է սիրելի պարոն Ջաւէն, հոս
է, որ քու եւ Թրմարքի տեսակէտը լեզ-
ւական հարցին շուրջ կը նոյնանան, այն
տարրերութեամբ միայն, որ քեզի հա-
մար ճակատադրական պահը քանի մը
բաժակ պարպելէ ետք կը սկսի, երբ
լեզուդ չի դառնար ու միայն ու միայն
հայերէն կրնաս խօսիլ:

- Աղուօր էր պատկերը, Յակոբ, հո-
գիդ սիրեմ, բայց չես գիտեր թշուառա-
կան, որ Թրմարքի «Վերադարձը» միայն
կարգացած եմ տարիներ առաջ՝ հայե-
րէնով: Թարգմանուած է «Յաղթանակի
կամարը» հայերէնի - ո՛չ, ուրեմն ի՞նչ
պէս կրնամ կարդալ: Իմ գիտցած անը-

լիբէնս ի զօրու է միայն մուկ ու կա-
տուի պատմութիւններուն։ Ուրեմն ուր
մնաց բանագրոց ըլլալու պարագաս...
խօսիք ամբարտաւան... խօսիք զբերու
մուկ։

- Լաւ, ինչո՞ւ կը բարկանաս, չէ՞
որ պիտի խօսինք։ Գիշերը երկար է։
Ղրկեցիր Անթուհը, որ հայերէն խօսիս։
Փոխանակ դո՞ւ մնալու Յակոբէն, որ
բեզի համար նիւթ կը ստեղծէ - զար-
մեք եւ զգայուն ու ամէն վայրկեան
մատակ ձիւ մը պէս կը խրխնջաս՝ վեր
ու վար ցատկելով։

- Կենացդ, Մարտիկ, - ըսաւ Զա-
ւէն ու պարպեց բաժակը, - վերջ ի վեր-
ջոյ դուն ալ մեկի պէս եղար. սովորա-
կան մարդ մը։

- Ինչո՞ւ սովորական... բոլորս ալ
մարդեր ենք ու կ'ապրինք մեր կեանքը -
այն կեանքը, որ սահմանած է իւրա-
քանիւրեքս։ Ոչ աւելի, ոչ պակաս։

- Լաւ, լաւ, հասկցայ։ Ի՞նչ կը դրէ
Յովհաննէս։

- Նոյն յանկերդը... շնորհ է բա-
լաս։ Վերադարձիր։ Քանի մը օր ար-
ձակուրդ առ... եկուր կարօտնիս առ-
նենք... Վահրիճեանը կը բարեւէ։ Վայ
եւ խերն եմ տնիճեր էս անիճեալ պա-
տերազմին...» եւայլն, եւայլն։

- Սիրեմ Յովհաննէսը, ըսաւ Զաւէն
ու մէկ ուժգով պարպեց բաժակը, տար-
բեր մարդ է - ոսկի սրտով, ոսկի հո-
գիտով, ոսկի մտքով։

- Ինչու չես ըսեր նաեւ ոսկի մար-
մընով։

- Դուն լռէ՛... անզգամ։ Գիտեմ
միշտ վերէն կը նայիս Յովհաննէսի
նմաններուն։ Մտաւորական չէ, հա՞,
որովհետեւ ընկեր Յակոբ Քարեանը
կրնայ բարձրանալ բեմ եւ հռետորական
ձայնով յուզել ներկաները, որովհետեւ
ընկեր Յակոբ Քարեանը կրնայ ժողով-
ներուն ընթացք տալ, տեսակէտ բանա-
մեծել, որովհետեւ ընկեր Յակոբ Քար-
եանը, որ կէս տարիքն ունի կօշկակար
Յովհաննէսին, սակայն արդէն լրջանի
մը հայ կեանքն է, որ կը զնկազարէ իր
ուղիղին ծանրութեամբն ու մտքին հա-

սուն իրատեսութեամբը, մինչդեռ 60-ի
դուռներուն հասնող Յովհաննէսը մնացած
է նոյնը - մի ինչ որ Արջ խումբի կամ
որեւէ խումբի պարզ շարքային, լատ-
լաս խմբապետ... Յակոբ, լաւ լսէ եւ
այս մէկն ալ սորովէ ինձմէ - Յովհան-
նէսը կիսազրազէտ մարդ մըն է, բայց
հականը մարդ մըն է, որ կը քալէ սե-
բունդներուն հետ, 20 տարեկանէն մին-
չեւ մազ ու մօրուք ճերմկցուցած 70-80
տարեկանները անոր հետ կը զգան ի-
րենք զիրենք այնպէս, ինչպէս պիտի
զգային իրենց հարազատ տան մէջ։ Ան
արձագանդ կը գտնէ բոլորին հողիւն-
բուն մէջ անխտիր։ Ինչո՞ւ, որովհետեւ
անոր հաւատքը դադարաբերու հան-
դէպ կու գայ իր արիւնէն, որովհետեւ
անոր մէջ գերիշխողը՝ մարդկայինն է
ու հայու տաք ու անուշ սիրտը, առանց
ստուերի, առանց դունաւորումի՝ պարզ
եւ յստակ մեր լեռներու արեւին տակ
տաքցած հայու սիրտը եւ այս մէկը չի
դար դուրսէն, զբերէն, մաքի ճար-
տար լարախաղացութիւններէն, ալ
ներսէն, ներսէն, կը հասկնաս այնպէս
չէ՞, սիրելիդ իմ Յակոբ Քարեան։

- Լաւ, Զաւէն, ճիշդ են ըսածներդ,
ս'ի՞նչ է առարկողը, բայց ուշ է արդէն,
բաժնուինք, ըսաւ Մարտիկ ու փորձեց
ոտքի ելլել։

- Նստիր, - ու Մարտիկի թեւէն
բռնելով իր տեղը նստեցուց զայն։

Զաւէն տարօրինակ զգայնութեամբ
մը կը վառէր այդ գիշերը։ Գարձած էր
զիւրազգայ ու ջղային։ Գիտով չէր, սո-
կայն ջիղկրու հրամայական մղումի մը
հետեւանքով անդիմադրելի պահանջը
կը զգար՝ կոտրելու, վերաւորելու
մէկը։

- Հոս նայիր Զաւէն, կատակ չեմ ը-
ներ... ուշ է, բաժնուինք, - ըսաւ Մար-
տիկ վճռական շեշտով մը։

Զաւէն պահ մը նայեցաւ Մարտիկի
դէմքին։ Անորոշ էր այդ նայուածքը -
աչքերուն մէջ նստած արիւնթիւն մը կը
ծածկէր իմաստը այդ նայուածքին։

- Լաւ Մարտիկ, բայց վաղը Ռե-
բաթ է, ազատ ենք բուլըրս ալ եւ կրնանք

քննալ որքան որ կ'ուզենք, եթէ այդ է մտահոգութիւնը:

Յակոբ լուռ էր եւ մտնաւոր ճիւղով մը իր նայուածքը կը փակցնէր՝ Զաւէնի նայուածքէն:

- Գրեւեմ, վաղը Ուզրաթ է, բայց կէս դիշերը անց է եւ իմաստ մը չունի այս խօսակցութիւնն ու այս խմբիչքը:

Զաւէնի մէջ կ'եռար արիւնը, այդ եռացման մէջ կային ետին զգուած քաղաքին կանչերն ու լոյսերը: Այդ եռացման մէջ կար հայ մարդու հայ ծնած ըլլալու ճակատագրականութիւնը, այդ ճակատագրէն բխող դառնութիւններն ու հրաձգութիւնները: Այդ եռացող արիւնը կը մղէր դիշերը շարութեան, շարութիւնը՝ կրեմն հազած հեղձանքի շապիկ, երբեմն ալ ուղղակի չրճիկ, խոտովարարի դիմակ: Յակոբ ծանօթ էր Զաւէնի այս անգուսպ ու յանկարծական, պոթիկացող խառնուածքին, մանաւանդ երբ ան խմած կ'ըլլայ քանի մը բաժակ: Այս էր պատճառը, որ Յակոբ կ'աշխատէր ինքզինքին անմեղ գառնուկի երեւոյթ առ: Կը խուսափէր նոյնիսկ Զաւէնին նայելէ: ան որ նայուածքին մէջ նըստած էր արդէն հեղձանքը, անոր նայուածքին մէջ նստած էր արդէն ճարտար լրբայ վերէն նայելու արհամարհանքը: Զաւէնի ծայրը դարձած էր աւելի փայտային, աւելի շոք, - այս արդէն կը պարզէր աւելի շարանալու տրամադրութիւն մը... այս մտածումներով տարած էր Յակոբ, երբ յանկարծ բարձրացաւ Զաւէնի ծայրը՝ անհրապոյր ու կցկտուր:

- Ընչու ես, Մարտիկ, իմաստ մը չկայ այս խօսակցութեան եւ այս խմբիչքին մէջ, մանաւանդ երբ կէս դիշերը անց է, սակայն հետաքրքրական է գիտնալ, թէ որ օրէն, որ թուականէն, որ ժամէն սկսած ես իմաստ փնտուել կամ իմաստ դնել կենքերն մէջ եւ կամ որ օրէն, որ թուականէն սկսած ես մտահոգութիւն ժամացոյցով: կէս դիշերէն ետք կամ առաջ: Ամբողջ տարի մը, երբ կը վազէր Եասկիի ետեւէն կամ երբ ան կը վազէր

քու ետեւէդ՝ շմտածեցիր երբեք իմաստին մասին: Զմտածեցիր երբեք ժամացոյցին մասին: կէս դիշերէն առաջ կամ ետքի մասին, որովհետեւ, որովհետեւ...

Դեռ գորովհետեւ լինելին վանկը շրթունքներուն վրայ էր, երբ սենեակին դուռը զարկին ընդհատ հարուածներով: Զաւէնի գորովհետեւը մնաց առկա սենեակին մէջ, Պահակապետն էր: Եկած էր յայտնելու թէ պաշտօնեաներու սկիւմբին մէջ քանի մը վայրկեան տառջ Անթուն ինչպէր ունեցած եւ ապտակած էր՝ լիբանանցի հաշուապահը՝ խաւանա նարմը: - զայն անխիղճ, դող, աւազակ իր իրով:

- Ո՛ր է հիմա Անթունը, - Հարցուց Մարտիկ:

- Պահակատուն տարին:
- Տնօրէնին լուր տուէ՞ք:
- Ո՛չ, ուշ է, չուզեցինք խանգարել:
- Ինչո՞ւ պահակատուն տարիք, - ըսաւ Զաւէն զպուստ բարկութեամբ:
- Վերջապէս հաշուապահը արտակէց, քանի մը պաշտօնեաներու ներկայութեամբ: Անդորրութիւնը խանգարելու պէս բան մըն էր ըրածը, յետոյ հաշուապահը բողոք ներկայացուց ընդհանուր ապահովութեան պաշտօնեային:

- Մարտիկ, բան մը պէտք է կարողադրես, եւ այս դիշեր իսկ, եթէ վաղը ինչպէր պաշտօնապէս տեղիկադրուի տնօրէնին, անխուսափելի է, Անթունը դործէ կը հեռացնեն, - ըսաւ Յակոբ, - վստահ եմ, Մարտիկ ձեւ մը գտնելու ես, որպէսզի այս հարցին մէջէն այդ յիմարը անվնաս դուրս գայ:

- Ընչու է, բայց այդ յիմարը ապտակած է ուրիշ պաշտօնեաներու ներկայութեան, եթէ նոյն իսկ փորձենք հարցը կարգադրել, ներկաներէն մէկն ու մէկը ձեւով մը կը տեղիկադրէ տնօրէնին եւ գիտէք թէ ինչ կը ստեղծուի այն տանն:

- Պիտի պայթեցնես դիս, - յանկարծ պոթիկաց Զաւէն: - Ո՞ր օրուան անձնական ջարտուղարն ես... աչքինքն պիտի ձգես Անթունը դործէ՞ հաննն:

նիթէ այդպէս է ես ալ կը հրաժարիմ եւ ինծի հետ կրնամ տասնեակ մը կարեւոր արհեստաւորներ հրաժարեցնել... մի մտնար, որ Անթունը մերն է, միասին եկանք, միասին ալ պիտի վերադառնանք, այդպէս չէ՞ Յակոբ, հողիդ սիրեմ զուն խօսիր... շուն շան որդի Անթուն, հազիւ տրամադրուած էի քիչ մը այս գիշեր, տն ալ քթէս բերաւ...

- Ժիշդ են Զաւէնին ըսածները, Մարտիկ, պէտք է ձեռք դնես:

Պահակապետը կեցած էր շուտարած եւ կարծէք ներքին հանոյքով կը հետեւէր իրեն անձնաօթ այդ լեզուին:

Կը նայէր Մարտիկին, բոլորին կողմէ սիրուած Մարտիկին, որ Տոքանի շրջանին մէջ թիւ երկու մարդն էր: Տնօրէնէն ետք ան կու գար անմիջապէս, որպէս անոր անձնական զարտուղարը: Եփոթութեան մէջ էր պահակապետը: Հասկցած էր որ բան մը կը պահանջուէր Մարտիկէն, բայց պահանջին ձեւը շատ տարօրինակ կը թուէր իրեն: Զաւէնը պարզ մեքենադէտ մը՝ արհեստաւոր, Յակոբը հաշուապահական ճիւղի պաշտօնեայ եւ անբացատրի կը թուէր պահակապետին համար, թէ ինչպէս ընկերութեան երեցագոյն անդամներէն մին՝ Մարտիկը, յանցապարտի պէս կեցած էր եւ պարզ արհեստաւոր Զաւէնի մը խօսքերուն մտիկ կ'ընէր եւ կամ անոր հետ սենեակին մէջ նստած խմիչք կը խմէր:

- Աճապարէ՛, Մարտի՛կ, քանի ուշ չէ, Յակոբն ու ես հոս կը սպասենք քեզի:

- Լաւ, լաւ կ'երթամ, Յակոբ հսկէ խմիչքին վրայ:

Մարտիկ դուրս ելաւ իր հետ տանելով պահակապետը:

Նախ զնայ հաշուապահին տունը: Հաշուապահը դեռ չէր քնացած՝ զգալիօրէն ջղախին վիճակ մը ունէր: Ամէն զնով կ'ուզէր հարցը մեծցնել... այդ տպիկար Անթունը վաճառել զօրծէ... Թող զոս մը ըլլայ բոլորին, մերջ ի վերջոյ Անթունի նման արկածախնդիր մարդ մը վտանգաւոր է պահել նման պատասխանատու շրջանի մը մէջ, յետոյ անկախ այդ գիշերուայ միջադէպէն, Անթուն ար-

տառոց դաղափարներ ունեցող մէկն է... հաշուապահը կը ճանշար զայն մայրաքաղաքէն... պատերազմի օրերուն թըլաւականը համոզուած նացի էր, իսկ հիմա չես գիտեր ինչ... ինք վաղն իսկ ցոյց պիտի տայ անոր, թէ ինչ ըսել է միւսոյ նախի մը հետ գործ ունենալը, բայց թող ազօթէ Մարտիկի միջամտութեան, մանաւանդ խաւանա Մարտիկը այս ուշ գիշերին եկած էր իր տունը եւ ստորնացուած էր իր յարգելի անձնաւորութիւնը՝ Անթունի պէս փողոցային անարժանի մը համար... խաւանա Մարտիկի սիրոյն կը ներէ եւ համաձայն է խնդիրը անուշի կապել եւ բողոքը ետ առնել... միայն կը խնդրէ խաւանա Մարտիկէն, որ Անթունը զայս եւ ներդուրթին խնդրէ իրմէ, իր տան մէջ... երկրորդ, ընդհանուր տնօրէնը, եթէ կողմնակի միջոցներով լսէ այս խնդիրը, կրնայ սխալ մեկնութիւն մը տալ հաշտութեան, կը խնդրէ սիրելի Մարտիկէն ձեւով մը վաղը առաւօտ իսկ հասկցնել տնօրէնին, որ միւսոյ նախմը ուզած է փակել այս հարցը խաւանա Մարտիկի հաւանութեամբ՝ պարզապէս աշխատանքի այս ծանր օրերուն, ըսի-ըսաներ շտեղծելու աշխատաւորութեան մէջ:

- Գիտէք պարոն Մարտիկ՝ մի՛ճակը փափուկ է... Թշուառական աշխատաւորներն ու արհեստաւորները, մայրաքաղաքի իրենց օրականներէն կամ մասնականներէն զոտապատիկը աւելի կը վճարուին այստեղ, սակայն միշտ զժգուհ են, նախանձ են, զատակարգային հարց կ'արծարծեն:

Այո, այո, Մարտիկը գիտէր այդ բոլորը, միւսոյ նախի պահանջները պիտի գործադրէր կէտ առ կէտ, եւ խորապէս շնորհակալ է, որ այդքան անյիշարտ դտնուած է միւսոյ նախմը:

Այս հատատուածէն ետք, Մարտիկ երկտող մը յանձնեց զուրսը սպասող պահակին:

- Առ Անթունը եւ հոս բեր: Պահ մը ետք, ներս մտաւ Անթուն ու ամօթխած սպասեց որ Մարտիկը կամ Նախմը խօսին:

- Անթուն այս հարցը փակուած է. պարոն Նախը բարի եղաւ ներողամիտ պանուիլ. նման միջազգայեք պէտք չէ կրկնուին այս շրջանին մէջ... մի մտանար, որ պարոն Նախը հօրդ ասարիքը ունեցող մարդ է:

Անթուն պատշաճ ձեւով ներողութիւն խնդրեց միտոյ Նախմէն եւ Մարտիկէն եւ դուրս ելաւ: Մարտիկն ու շանի մը սիկարէթ ծխելէ եւ ալէն ու ձախէն խօսելէ ետք հեռացաւ:

Գուրաը հազիւ ինքնաշարժին մէջ տեղաւորուած էր, երբ լսեց իր անունը: Անթունն էր՝ մութին մէջ կեցած, կը ուպասէր իրեն:

Պահակապետն ալ հետերին՝ Մարտիկ ջընց ճիւղը դէպի իր սենեակը:

- Հոգիդ սիրեմ, Անթուն, չվախաս, ես հոս եմ, ըսաւ Ձաւէն գրկելով Անթունը:

- Այս մասին ա՛լ մի խօսիք, հարցը փակուեցաւ ըսաւ Մարտիկ զիջ մը հրամայական շեշտով ու նայեցաւ պահուպետին: Պահակապետը ըմբռնեց Մարտիկի նայուածքին իմաստը ու գլխով հաւանութեան նշան տուաւ:

- Թշուառական կաշառակերը... միշտ արհամարհանք մը ունի կրտսեր պաշտօնեաներուն եւ մասնաւորապէս արհեստաւորներուն հանդէպ, եւ կը փորձէ իր երէց պաշտօնեայի մենաշնորհները ակումբին մէջ իսկ օգտագործել: Եւ իմ սեղանս է - եւայլն, եւայլն, բայց առաւ իր դասը, դեռ Անթունը չէ մեռած, թշուառական կաշառակերը, մայրաքաղաքէն գիտէի անոր ինչ ըլլալը - ուժեղին առջեւ զծնող, տկարին առջեւ առիւծ - Մարտիկ մի բարկանար, Անթունը գիտէ թէ ուր պէտք է դործածէ ապտակը... անշուշտ թէ համաձայն պիտի ըլլար հարցը փակելու, գիտէր թէ ինչ կ'ըլլար հետեւանքը հոս կամ մայրաքաղաքին մէջ, եթէ ոչ այսօր, բայց անկասկածօրէն վաղը, ամիս մը ետք կամ տարի մը՝ նոյնն է:

- Ըսի փակեցէք այս հարցը: Այս

մասին ոչ մէկ խօսք... զիս նեղ կացութեան մէջ դրած կ'ըլլաք:

- Անթուն, մոռցիր... ապտակ մը եւ մէկ ժամ պահակատուն... Յակոբ, այս մասին պատմուածք մը թխէ, արդիական նիւթ է, ինչպէս ջու բազմանկիւն ուղեղը... յանցանքը իմս է, պէտք է միք հետ մնայիր այս գիշեր, սիրեցեալն իմ Անթուն:

- Դեռ կը խօսի՞ս... լեզուամուտքնէ բռնուեցար, գեռ երկու պուաթ շիմած... հայերէն, հայերէն կ'ուզեմ խօսիլ... հեռացիր Անթուն... ինչ որ անկեղծօրէն կը ցուիմ այս դէպքին համար. Մարտիկ, չեմ ուզեր իմ անուղղային պատճառով՝ բարեկամներս նեղ կացութեան մատնել... կը ներեմ Մարտիկ:

- Մոռցիր ըսի... Յակոբ, մէկ-մէկ բաժակ լեցուր, խմենք մեծ յեղափոխական Անթունին կենացը...

Պահակապետը յարգալից կեցած էր անկիւն մը եւ ուշ ուշով կը հետեւէր այս խօսակցութեան:

- Բաժակ մըն ալ տուէք Հասանին:

- Ո՛չ, պարոն Մարտիկ, շնորհակալ եմ:

- Խմէ, մէկ գաւաթ միայն, գիշերը ցուրտ է:

Պարպեցին բաժակները: Պահակապետը արտօնութիւն խնդրելով հեռացաւ:

Գուրաը ցուրտ էր: Գարնանամուտի գիշեր: Ձմեռը հաւաքած էր հողաթափերը՝ դեռ կը յամենար ելքի գրան՝ ակնարկը յառած ետին:

Տոբանի բարձրութեան վրայ կրեք հայ տղաք եւ իրենց մէկ ընկերակիցը՝ արար Անթունը կ'ապրէին իրենց կեանքը այդ բարբարոս մենութեան մէջ - քաղաքը հեռու էր, հեռու էին քաղաքի լոյսերը... Տոբանի բարձունքին վրայ կրեք հայ տղաք եւ արար Անթունը կը լուսաւորէին իրենց կեանքը իրենց սեփական լոյսերով՝ ծամելով յաճախ ձանձրոյթը՝ անթափանց մենութեան, իրենց ակուններուն մէջ: Անցած էր տարի մը - անոնք երիտասարդ էին, բայց հեռու էին քաղաքի լոյսերը - իւրաքանչիւր

չիւրը անոնցմէ՛ ձգած էր բան մը այդ 300 մղոն հեռաւորութեան վրայ գրտնրող մայրաքաղաքին մէջ, Պէտք է աշխատէին.— կեանքի պարտադրանքն էր այդ... քաղաքի լոյսերը շտալ էին ուսանց համար, իսկ ժլատ ուրիշներուն.— այս տղաքը կը զանուէին վերջիններուն մէջ: Մարտիկ առաջին օրէն ձգած էր քաղաքը եւ եկած Տոքան: Երկու տարիէ ի վեր հոն էր՝ կապուած Տոքանի ջրաբերութեան, դեռ տարիէ մը հօգիւ վերջանային գործերը: Միւսները եկած էին տարի մը յետոյ, ընթացք առնելով Մարտիկի պնդումներուն: Այդ տարւայ ընթացքին երեքն ալ՝ Զաւէն, Յակոբ եւ Անթուն, քանի մը անգամ կարճ արձակուրդներով դաշած էին քաղաք, զայցած էին քաղաքի լոյսերուն: Մարտիկ ուղտի մը յամառութեամբ կը մնար կռուած Տոքանի քարածալներուն: Կը խուսափէր քաղաքէն, կը խուսափէր լոյսերէն... կը խուսափէր, որովհետեւ հոն էր Եսամինը... եւ Մարտիկ կը վախնար Եսամինէն...: Կը վախնար արդեւի ու մօի կանչերէն, Հաստատ որոշումով պիտի մնար տարի մը եւս... յետոյ կ'երթար: Մինչ այդ կրնար բան մը փոխուիլ իր մէջ... կրնար բան մը նըւազիլ իր մէջ Եսամինի վերաբերմամբ... ինչո՞ւ է, վերջ ի վերջոյ երեք տարիով աւելի ծերացած պիտի ըլլար.— երեք տարուան միջոցը՝ երիտասարդութենէ ծերութիւն մեծ անջրպետ մըն է:— Մարտիկ կը դիտակցէր, թէ Եսամինն ու ինք ինկած են անկարելի ջրապտոյտի մը մէջ: Եսամին կ'ուզէր կապուիլ Մարտիկին: Մարտիկ կ'ուզէր կապուիլ Եսամինին, բայց կար մեծ բայցը, այդ մեծ բայցը շէր դար Եսամինի անցեալէն կամ անոր ապրած կեանքէն, այսպէս կը դատէր Մարտիկ, ռակայն կը զգար ներանձնական ուժի մը յայտնումով, թէ իր անդիտակցականին մէջ կար արդեւք մը այդ անոյշ աղջկան հանդէպ... այդ արդեւքը կու գար իր շրջապատէն, կու գար կօշկակար Յովհաննէսէն, իր մտերիմներէն եւ մանաւանդ Տիապէն: Վերջապէս որոշ էր իրեն համար, որ նախ

քան Եսամինին հանդիպիլը, անոր բարեկամը եղած էր Տիապը՝ Մարտիկի մտերիմն ու գասընկերը Ամերիկեան վարժարանէն: Մարտիկ Տիապի քայլերով ճանչցած էր Եսամինը, երբ սովորական հանդիպումները տակաւ առ տակաւ փոխակերպուած էին սիրոյ:— Տիապ կուսահած, տեսած էր եւ աստիճանաբար բնմը ձգած էր Մարտիկին այն բաւարարութեամբ, որ երիտասարդական խոնգավառութիւն է՝ կ'անցնի: Ինք՝ Տիապ կեանքը ճանչցած էր շատ կանուխէն, ճամբորդած էր Անզիլա, Փրանսա, Գերմանիա... Մարտիկը անօթի է... Եսամինը լաւ աղջիկ է... վերջ ի վերջոյ ամէն մարդ իր կեանքի ընթացքէն պիտի ճանչնայ կին մը՝ կարճ պահու մը համար, թէ երկար, ո՛չ մէկ տարբերութիւն... ինք՝ Տիապ արդէն սկսած էր զգալ՝ ճանճրոյթը կեանքին եւ հասած էր տեղ մը ուր ուղղակի թէ անուղղակիօրէն սկսած էր մտածել ամուսնութեան մասին, տուն տեղ կազմելու մասին, մանաւանդ, որ Միքքա զայցող իր հածի հայրը սկսած էր այս ուղղութեամբ նեղել զինքը եւ ամուսնութեան հարկադրանքով, իրեն բաժին ինկած ժառանգութիւնը պայմանաւորել:

Մարտիկ դիտէր, որ Եսամին եղած էր շատերու հետ, մանաւանդ եղած էր Տիապին հետ: Զիչէ է, որ Մարտիկին հետ մտերմանալէ ետք եղած է միմիայն իր հետ, բայց կապուելու համար Եսամինին Մարտիկ կը դիտակցէր նաեւ, որ կար մեծ բայց մը, կար կօշկակար Յովհաննէսի ծանր սկիւրդը՝ ինչո՞ւ էր հոգիին մէջ:

Մարտիկի միտքը Տոքանի բարձունքներուն վրայ միշտ կը քալէր այս ճամբաներէն, կը քալէր կողմ ի կողմ, առանց նոյնիսկ ունենալու յենակ անթացուպիւր, կը քալէր կողմ ի կողմ անճարակ ուստատումներով...:

— Մարտիկ, այդ քածին ըրածը քմայք է... — Յակոբի բառերն էին, որ յաճախ կ'արձագանգէին Մարտիկի ուղեղին մէջ:

— Բժայժ է, քմայժ... Ինքզինքը կապած է ջեղի, պարզապէս իր կանաչ իտեթեան հրապոյրը առաւելապէս շարժելու... Նիւթապէս ապահովուած է... համաձայն իր կնքած պայմաններուն՝ լուսագոյն վճարուող երգչուհիներէն է։ Նիւթակահնի համար պէտք չղզար այլևս անկողինէ անկողին երթալու, ինչպէս որ ըրած էր իր սկզբնական օրերուն... երբ դարձաւ անուն մը՝ ուստիոկայանէն եւ րիմերէն՝ լրջացաւ, դարձաւ տրուետապիտուհի, դարձաւ ոսմանթիք եւ կը փորձէ ջեղ իր ստայնին մէջ ձգել եւ արգէն ձգած է։ Բաց աչքերդ... կը նկատես որ օրըստօրէ աւելի ժողովրդական սկսած է դառնալ այն սպաւորութիւնը ձգելով շուրջը, թէ մաքուր աղջիկ մըն է հ. ունի սիրող մը, հայ տղայ մը միայն, թէ Յասմին արուեստին աղջիկն է։ — զրամ չի փնտուր, ունի միայն ջեղ, կապուած է միայն ջեղի առանց շահադիտական հետապնդումներու։ Չէ՞ս նկատած, իր կեանքը, իր ապրելու կերպը փոխելէ հոգ՝ զայն

սկսած են հրաւիրել իջած բարձր դասուն պատկանող տիկիներու հաւաքովիներուն, որպէս երգչուհի, ինչո՞ւ չեն հրաւիրեր միւսները կամ ինչո՞ւ չէր հրաւիրուեր ինք նախապէս... որովհետեւ բողն ու երգչուհին կամ իրենց բացատրութեամբ բողն ու արուեստադիտուհին իրար խառնուած էին... հիմա բու ներկայութիւնը ծանր շուք մը ձգած է բողին վրայ... կը մնայ հիմա պայծառօրէն տեսնելի միայն արուեստադիտուհին... միայն երգչուհին... — դարձեալ Յակոբի բառերն էին, որոնք ինչպէս շատ մը բայցերու կարգին կը թուէին, կը շրջէին Մարտիկին հետ։

Յասմին՝ հեռաւոր մայրաքաղաքին շնորհայի եւ ծանօթ երգչուհին, իսկ Մարտիկ 300 մղոն հեռու անկէ՝ ինքզինքը յանձնած էր բայցերու անելին։

Մարտիկ կը վախճար մայրաքաղաքէն, կը վախճար անոր լոյսերէն, կը վախճար մանաւանդ Յասմինէն, իր Ծասմինէն...

Մարտիկ կը վախճար ինքն իրմէ։

(Շար. 2)

Լ. Պ.



ԱՂՈՒՈՐ ՄՐՏԵՐ

Ազուար սրտեր երբ միանան Ու ճոյնանան, կ'ամենահանան, Ազուար սրտեր երբ արբենան Ու մեղկանան, կը ժաղցրանան:	Ազուար սրտեր իրիկնային Թաց եղիամին ըսյրը ռանին, Մարգի վրայ գարնանային Վարդենիին գոյնը ռանին:
Ազուար սրտեր դաշտի հովին Եւ առուակին երգը ռանին, Երկնի վրայ աստղաբային Կամարային ձեւը ռանին:	Ազուար սրտեր երբ հեռանան Ու երբ մտնան, կը մահանան, Ազուար սրտեր չհեռանան Ոչ շնունան, ամենահանան...:

ՀԵՔԻԱԹ ՄԸ ԱՂՈՒՈՐ

Այսօր ես տրտում - գուցէ ամէն օր -
Կը փորձեմ յիշել հեքիաթն սկիզբէն
Ջար դուն պատմեցիր աշուն էր երբոր,
Երբ սիրոյ տղան մեկնած էր արդէն...:

Նարէն կու լայիր ու լացդ հաճոյ՜ մ'էր
Որ զիս կը տանջէր ըսելու քեզի,
Թէ հեքիաթն այդ սուտ պատմութիւնն էր մեր
Կեանքի դեռ չեկած ազուար երազի...:

Ուզեցիր այդպէս հեքիաթ հիւսելով
Խաբուած սէրէն հոգ կրկին ինծի գալ.
Աշուն էր այդ օր, ամէն բան գորով,
Ես սիրոյ տղան՝ մեկնած էր ա'լ...:

Սկիզբէն յիշել ես ա'լ չեմ կրնար
Պատմութիւնը մեր՝ հեքիաթ մը ազուար,
Բայց միայն կրնամ արտասուել երկար
Այսօր ես տրտում - ճանի ամէն օր - ...:

ՇԱՀՊԱՆ

ԱՐԱ ՍԵՒՈՒՄԵԱՆ

ՉԵՌՔԵՐ... ԺՊԻՏՆԵՐ...

Հիւսուածեղէնի մեքենաները կը դառնան:

- Ահա, հոս է քու տեղը, - կ'ըսէ հսկելը Սուրէնին:

Սուրէն տասնըւորս տարեկան է, նոր են բուսած պիտերը ու եկած է ուղիստեղու հիւսուածեղէնի գործարանի մը մէջ:

Փոխուած է կեանքը Սուրէնի համար: Հայրիկը չկայ, չկան դպրոցի զիբքերը, - չկան մանկական երազները...

Կայ մայր մը՝ ախուր, քոյրիկ մը՝ վախտ, մեռած երազները, ու յոյսէ՛ր, յոյսէ՛ր...

Հիւսուածեղէնի մեքենաները կը դառնան:

Կը դիտէ շուրջը: Ծառ են աշխատողները: Տղաք, աղջիկներ, ծեր ու երիտասարդ: Ու փոքրիկ աղջիկ մը, մեքենային մօտ նստած թիւր կը փաթթէ: Յոգնած դէմք մը ունի ան, ծանրացած, կոպիտ, ազօրուած ճակատ...:

Սուրէն կը յիշէ իբ փոքրիկ քոյրը, որուն համար ձգած է դպրոցն ու եկած աշխատեցու: Կը նայի աղջնակին աչքերուն ու կը հարցնէ՝

- Փոքրիկ աղջիկ, ի՞նչ է անուճդ:
- Աչիկն:
- Բանի՞ տարեկան ես:
- Տասը երկու:
- Հայրիկ չունի՞ս...:
- Ունիմ: Բայց դիտով է միշտ:

- Մայրի՞կ...:

- Հիւանդ է:

Ու Աչիկն աչքերը կ'իջեցնէ դարձող ճախարակներուն վրայ:

Մեքենաներու միօրինակ աղմուկին մէջէն՝ Սուրէն կը լսէ դպրոցին հին երգերը, կը յիշէ սեւ պեխով խիստ ուսուցիչը, կը լսէ զբօսանքի ժխորին մէջէն վաղող մանուկներուն անհող ճիւղերը, կը լսէ, կը յիշէ...:

Բայց կը դառնան մեքենաները: Մանր մթնոլորտին մէջ սպաննուած է պատանեկան ազատութիւնը: Միայն աբխուր ժպիտ մը՝ յոյսի նշոյլի նման՝ ազօտ լոյս մը կը նետէ շօքս դին...: Սուրէն կը թորթէ աչքերը ու կը ժպտի...:

- Աչիկն:

Նոյն ժխորը, նոյն ժպիտը ու կը դառնան:



Ու կը դառնան...:

Մեքենաները իրենց մետադեպ ալուսներով փչրեցին պատանիին օրերը, ամբիները ու լափեցին երկու երկար տարիներ:

Բայց Սուրէն կը դիտէր դարձող անիւները ու կ'երազէր...: Միտքը թեւեւ առած կը թռչէր վարդազոյն յոյսերու ետեւէ: Միտքը անհանգիստ՝ կը սպասէր աշխատանոցի վերջին սուլոցին:

Կը վազէր դուրս աշխատանոցէն։
Հեռաւոր թաղ մը, ոսկեգոյն մազերով
ու կապոյտ աչքերով աղջիկ մը կը սպա-
սէր իրեն...։ Անո՞ւնը։ Անու՞նը երբեք
չգիտցաւ։

Ան ալ տասնըվեց տարեկան էր։ Կի-
րակի առաւօտ մը Սուրէն տեսաւ աղ-
ջիկը։ Պերճազեղ տան մը պարտէզին
մէջ՝ կարճ տարատով ու մաղերը տուած
Հովին...։

Գեղեցիկ էր...։ Մազերը ալիքներ
էին ոսկեգոյն, աչքերը՝ ծով մը Հան-
դարա, թիթեանիկ մը՝ այդ ծաղիկնե-
րուն մէջ՝ առանձին...։

Սուրէն խաչոյր ու սեւ աչքերը կեզ-
րոնացուց աղջկան Հանդարա աչքե-
րուն...։ Պոռվուեցաւ ծովը աղջկան կու-
պերուն տակ։ Ու երկու ժպիտներ պար-
տէզին ցանկապատին ձողերուն մօտ դըր-
կեցին դիրար։

Սուրէնի սիրոյ առաջին ժպիտն էր,
տաք ու վախտ երազներով պարուր-
ւած...։

Ու այլեւս, ամէն օր, երեկոյեան
ժամը վեցին, Սուրէն պարտէզի ձողե-
րուն մօտն էր։ Կը ժպտէին իրարու։ Ու՝
այդքան, այդքան...։

Ք

Ձմեռ էր։ Երկինքը տարածեր էր
ամպամած թիւերը քաղաքին վրայ։

Բայց ո՛չ անձրեւը, ոչ ալ փոթո-
րիկը կրնային սպաննել Սուրէնի սրտին
մէջ ծնած սիրոյ առաջին ծիւղերը։

Երեկոյ մը, երբ կ'անցնին ձողերուն
մօտէն, ձայն մը խզեց պարտէզին լուռ-
թիւնը։

- Պիտի մսիս, աղջիկս, մտիբ ներս։
Ու քնքոյլ ձայն մը՝ կարկաչի նման...
- Այո, մայրիկ...։

Սուրէն ցնցուեցաւ։ Ուրեմն Հայ էր
կապոյտ աչքերով ու ոսկեգոյն մազերով
այդ աղջիկը։ Ինքը՝ երազներուն մէջ
միշտ Հայերէն էր խօսած Հետը։ Բայց
լուսաբացին, կասկածը ցրուած էր
յոյսերը...։

«Այո, մայրիկ»։ Սուրէնի Համար
ամբողջ աշխարհ մը պահուած էր այդ
երկու բառերուն մէջ։ Երազի մը կին-
դանացման առաջին երկու քայլերն էին
անոնք...։

«Բայց, գիտէ՞ թէ ես ալ Հայ եմ»-
մտածեց Սուրէն։

Յաջորդ օր, Հայերէն երգ մը սու-
լելով անցաւ պարտէզին մօտէն։

Աղջիկը նոր ժպիտով մը ընդունեց
տղուն նոր երգը ու պարտէզին ծանր
դուռը բանալով ելաւ դուրս։

Փողոցին ծայրը մօտեցան իրարու ու
աղջիկը Հարցուց Համարձակ։

- Հայ ես, չէ՞...։

- Այո՛, իսկ դո՞ւն, - թոթովեց Սու-
րէն։

Աղջիկը խնդաց։ Կարճրեցան Սու-
րէնի երեսները, - Համարձակ չես - ը-
սաւ աղջիկը - ըսէ, ի՞նչ է անունդ։

- Սուրէն։ Իսկ քո՛ւկդ։

Չար ժպիտ մը գծուեցաւ աղջկան
չրթներուն վրայ։ Սուրէն նշմարեց ա-
նոր աչքերուն մէջ փոփոքտա ու կրթոս
ալիքներ ծովու...։

- Նատիա կոչէ գիս, - փսփոսց՝
չարժելով երկար թարթիչները, - բայց
Նատիա չէ անունս։

Պնդաց անՀոգ ու փսփոսւ Սուրէնի
մօտէն։

Դանդաղ քայլերով, ձեռքերը մխր-
ճած տաքատին զրպաններուն մէջ, Սու-
րէն բռնեց տան ճամբան։ Ուրախութիւն
մը կը կայտուէր սրտին տակ, տխրու-
րութիւն մը տնորու կը զսպէր թո՛ւնը
Հողմոյն...։ Սիրե՛լ, անծանօթ բայց
երջանկաբեր զգացում...։ Կը զգար, թէ
սիրաբ կ'ուռի ու աստղերը կը փայլեն
ամպամած երկնքին վրայ...։ Կը զգար,
թէ անձրեւի կաթիլները, զարնանային
բոյրեր էին ամբարած իրենց մէջ, քա-
մին զեփիւս մըն էր միայն ու իրեն կը
թուէր, թէ զեղեցիկ է մմեռը, աւելի
գեղեցիկ, քան բոլոր զարունները աշ-
խարհի...։

Սիրե՛լ...։

Ձեռքերը մխրճած տաքատին զըր-
պաններուն մէջ, կը քայլէ...։ Նա-

տիտ'... Բայց, ո՛չ, այդ ժպիտներէն ուրիշ անուն մը պիտի ծնէր, բարի ու ջնջոյշ անուն մը... Ինչո՞ւ... :

Ձմեռնային քամիին սուլոցը, մեղմ նուազի մը նման կը խաղայ Սուրէնի սիրահար հոգևոսն թերթուն հետ : Կը տանի մտածումները դէպի երազ աշխարհ մը, ու ան կը տեսնէ ոսկեծամ աղջիկը՝ պարտէզի խորքէն... Կը մօտենայ անոր :

Մուշը ծածկած է պարտէզը... Ծաղիկներ՝ պոյնզպոյն ու երազ ծաղիկներ՝ գլուխներն դուրս ցցած մշուշին կը ժպտին երջանիկ... Աւայդ փունջին կեդրոնը ծաղիկ մը կայ... ամենալաւը բոլորէն ու անոր ժպիտը ամենաբարին բոլորէն... Կը սեղմէ արհեսուն մէջ րսուերը հարցումին, կը մօտեցնէ սրբտին... Աւրառ մը, դադարիք մը կը փախի չրթներէն՝ «Անահիտ է անունս» : Կը լսէ երաժշտութիւնը երազին, կը մեկնի մշուշը, ծաղիկները կը ննջեն... : Աւայդ բոլորին փոխարէն՝ կանչ մը կը լսցնէ Սուրէնի սիրահար սիրտը... : «Անահիտ... Անահիտ...» :

Ճ

- Ես դիտեմ թէ ինչ է անունդ, - Ըստե Սուրէն :
- Գիտե՞ս... :
- Այո, Անահիտ է, Անահիտ :
- Անահիտ : Ուրիշ՞ գտար այդ հինցած անունը, Ես այդպիսի անուններ չեմ սիրեր :
- Սուրէն չպատասխանեց :
- Փամը վեցն էր : Ձմեռնային ամպոտ ու մութ երեկոյ :
- Նատիա՛, այսօր աւելի հեռուները երթանք... :
- Ուշ է, Սուրէն : Գետք է վերադառնամ տուն :
- Երթա՛նք, խօսինք մեր մասին, Նատիա՛, ըսելիք մը ունիմ քեզի :
- Նատիա հարցադան նայեցաւ տղուն : Այո, Երազած էր այդ պահը, ալ ինչո՞ւ մերժէր... ու չերթար հեռուները... :

- Երթա՛նք, Սուրէն : Անհանդարտ ու անհամբեր արտերով քաղցին անիտս :

Հասան անմարդարնակ, փլված, մամռոտած պատերով տնակի մը մօտ :

Նատիա նստաւ խոշոր քարի մը վերայ :

- Ըսէ՛, Սուրէն, - փսփաց՝ տկար ձայնով մը :

Սարսուռ մը անցաւ Սուրէնի երակներուն մէջէն : Նատիայի ձայնը կը դողար... Ուրեմն... ուրեմն... :

Մօտեցաւ ու վարանոտ ձեռքերը դրաւ աղջկան ուտերուն : Նատիա, սիրահար աղանձակի մը նման, գլուխը թեքեց դէպի աջ : Ա՛հ, ինչո՞ւ չ'անպարէր ոյս անհամարձակ տղան, ինչո՞ւ աչքերը չի մօտեցնէր աչքերուն ու չրթները... :

- Նատիա՛, Նատիա՛, պիտի ըսէի քեզի թէ... :

- Ըսէ՛, Սուրէն, ըսէ՛, շո՛ւտ... :

Աղալանք մը կար իր ձայնին մէջ : Սուրէնի համար հանելի էր աղջկան տառապանքը... «այսօր մը նման ջնջոյշ ու մեղմ... :

Սուրէն բռնեց աղջկան ձեռքերը ու տարաւ չրթներուն... Վերադարձաւ երաժշտութիւնը երազին, մշուշին մէջ թողուած՝ ծաղիկները բարի, ու ժպիտներ, ժպիտներ անբիծ, սպիտակ... :

Ա՛հ, այս խենթ տղան... այս անփորձ տղան... Ինչո՞ւ չի նշմարեր տենչանքը Նատիայի չրթներուն, ինչո՞ւ չի տեսներ բոցը աչքերուն... :

Սուրէն, շոյանքի նման մեղմ հպումներով, կը համբուրէր Նատիայի փափուկ ձեռքերը : Նատիա ուղեց աւելի մօտ ըլլալ Սուրէնի չրթներուն, ու չրթները մօտեցուց անոր ձեռքերուն :

Համբոյր մը Սուրէնի ձեռքերուն ու Նատիա ցնցուեցաւ : Հեռացուց չրթները ու հարցուց կասկածոտ.

- Ձեռքերդ ինչ կը հոտին, Սուրէն, ինչո՞ւ... :

Սուրէն պատասխանեց ու թոյլ տըլաւ որ Նատիա շոյէ ձեռքերը :

- Ինչո՞ւ այսպէս կոչու են ձեռքերդ, Սուրէ՛ն:

- Որովհետեւ դպրոցական չեմ, նատիա...:

- Հապա՞...:

- Գործաւոր...:

- Գործաւոր...:

ձիչ մը ու նատիա քաշեց ձեռքերը: «Գործաւոր...»:

Իսպառ արձագանգեց գիշերուայ լըռութեան մէջ ու ցրուեց բարի երազները...:

- Վերադառնա՛նք,- ըսաւ նատիա կտրուկ:

Վերադարձան:

Ու պարտէզի ձողերուն մօտ, ուր ժպիտներ դրկած էին իրարու, ծնած էին յոյսեր ու ծաղկած՝ երազներ, պարտէզին ձողերուն մօտ, պահ մը նայեցան իրարու:

- Վազը ժամը վեցին, նատիա՛...:

- ...

- Կ'անցնիմ պարտէզի պատին տակէն...:

- ...

- Ու դուն կը հետեւիս ինծի...:

- ...

Սուրէն ուղեց բռնել նատիայի ձեռքերը: Երկել իր սէրը: Երկարեց ձեռքերը...:

- Մի՛, մի՛ դաչիբ ինծի, գործաւոր տղայ:

Ու նատիա փախաւ Սուրէնի մօտէն: Ան՞՞նը...:

Սուրէն երբեք չգիտցաւ աղջկան անունը: Նատիա՞ էր, թէ Անահիտ: Բայց, երազային էակ մըն էր ան, մազերը ալիքներ էին սոկեզոյն, թիթեռնիկ մը այդ ծաղիկներուն մէջ առանձին...:

Քնքոյշ էր ան, երազ ամպի մը նման: Բայց... կոչու էին Սուրէնի ձեռքերը:

Իսկ սի՞րտը, որուն հոգը:

Ճ

Կը դառնան մեքենաները: Կը կոչտանան Սուրէնի ձեռքերը ու թախիծը կը սեղմէ սիրտը:

Այլեւս չի սպասեր աշխատանոցին վերջին սուշոցին:

Ո՞վ, ո՞վ պիտի կարենայ զգալ Սուրէնի սրտին տխուր խաղերը, ո՞վ պիտի կարենայ բռնել ձեռքերը ու չզգալ, թէ իւզոտ ու կոչու են անոնք:

Մեքենաները կը դառնան: Սուրէն կ'երկարէ ձեռքերը գործիչներու փոքր սեղանին վրայ, կը դիտէ ու կը մտածէ. - «Մեռա՞ծ ձեռքեր»...:

- Ի՞նչ է, Սուրէն, ձեռքերդ կը դառնան,- կը փսփոսայ ձայն մը տկար:

Սուրէն կը վերցնէ աչքերը: Ալիսն է:

- Ըսէ՛, Ալիսն, ինչպէ՞ս են ձեռքերս, աղուս՞ր՝ թէ սպիղ:

- Աղուս՞ր...: Արհեստաւորի, աղամարդու զօրաւոր ձեռքեր:

Սուրէն կը ժպտի: Այնքան բարի է Ալիսնը, այնքան անփոքր:

- Տե՛ս,- կ'ըսէ Սուրէն՝ բանալով ափերը,- ի՞նչ կոչու են ձեռքերս, հաստ ու իւզոտ...:

Ալիսն կը բանայ ափերը: Հապա ի՞՞մ ձեռքերս:

Նմանութիւն մը կայ շորս ձեռքերուն միջև: Միեւնոյն կնիքները, միեւնոյն դիծերը, միեւնոյն ճամբով նոյնպէս իրարու:

- Ալիսն, քու ձեռքերդ աշխարհի ամենազեղեցիկ ու մաքուր ձեռքերն են...: Հաւատա՛ խօսքիս,- կ'ըսէ Սուրէն անկեղծութեամբ:

Ալիսն կը կախէ աչքերը ու կը կարմրին թուշերը:

Առաջին անգամ ըլլալով՝ Սուրէն կը նշմարէ թէ նախկին փոքրիկ Ալիսնը չէ ան: Անցած են տարիները ճախարակներուն վաղքին հետ, ու Ալիսն տասնըփնգ տարեկան սիրուն աղջիկ մըն է դարձած:

Ճ

Սուրէն ու Ալիսն այլեւս երեկոները միասին կ'երթային տուն: Կը խօսէին կեանքի դժուարութիւններու մասին, հիւանդ մօրը մասին...: Ու միշտ լաւա-

անս, միշտ յոյսերով բեռնաւորուած կը յաճնուէին իբրորմէ:

Դանդաղ քայլերով, ձեռքերը միւր-ճած տարատին գրպաններուն մէջ, Սուրէն կը բռնէր տան ճամբան: Ուրախ էր թէ տխուր:

Աշխէ՛ն...

Տխուր աղջկայ մը ազատը անունը միայն:

Սիրե՛լ...

Ի՛նչ տարօրինակ գղացում Սուրէնի համար...

Կը զգար՝ թէ կը հալին աստղերը ամառնային երկնքին վրայ, կը զգար՝ թէ սիրտը կը մաշի կրծքին տակ... Ա՛հ, ինչո՞ւ ջինջ չէ ամառնային զով դիշերը:

Սիրե՛լ...



Կիրակի: Երեկոյեան ժամը եօթը: Սուրէն ու Աշխէն կը պարտին: - Աշխէ՛ն, այսօր աւելի հեռուները նրթանք...

Աշխէն չի հակառակիր ու Սուրէն կ'առաջնորդէ զինք անմարդաբնակ, փրէփրած, մամոտած պատերով անակի մը մօտ...

- Նստէ այս խոշոր քարին վրայ, Աշխէ՛ն:

Աշխէն կը նստի ու կասկածոտ կը հարցնէ.

- Ըսելի՞ք մը սննդ ինծի, Սուրէն:

Սուրէն չի լսեր Աշխէնի ձայնը: Բայց, հին ու դողացող խօսքեր՝ յանձնուած ամառնային զեփիւսին, փեսա-աբուղ մարդարտածաղիկներու նման կը հասնէին իրեն...

Սուրէն կ'ուզէր յիշել անունը...: Անո՛ւնը, ա՛հ, անուն մը ունէր այդ աղ-ջիկը:

Կը մօտենայ ու ձեռքերը կը դնէ Աշխէնի ուսերուն...

- Լաւ բան չէ, Սուրէ՛ն... չէ՛...:

Սուրէն կը դրկէ աղջիկը, կը սեղմէ թեւերուն մէջ...

- Երթանք, Սուրէ՛ն...

- Այո՛, երթանք...: Երթանք այն պարտէզը, ուր մշուը ծածկած է ծաղիկները...: Ա՛հ, ինչ լաւ է մթութիւնը, երազային էակ մըն ես դուն, մաղերդ ալիքներ օսկեզոյն, աչքերդ ծով մը հան-գարտ...: Թիթեռնիկ մըն ես դուն, թիթեռնիկ մը...:

Աշխէն կը զգայ Սուրէնի զոյգ աբ-ցունքները իր այտերուն վրայ...: Ուրեմն... ուրեմն...

- Այդչափ շա՛տ կը սիրես զիս, Սուրէն...:

Ու Աշխէն կը սահի Սուրէնի թեւե-րուն մէջ: Կը շոյէ անոր կոշտ ձեռքերը:

- Սուրէն, ի՛նչ գեղեցիկ են ձեռ-քերդ...:



Ձեռքերը դրած գործիքներու փոքր սեղանին վրայ, Սուրէն կը դիտէ անոնց կոշտութիւնը: Իսկ ճախարակներու վազերն հեռ, կը բացուի ժպտալ Աշխէնի շրթներէն...:

Ու կը դառնան մեքենաները:

1965

Ա. Ս.



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆ

ՅՈՒՍԱԴՐԻԶ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ



Վարդէս Պետրոսեան Հայաստանի մէջ վերջին տասնամեակին յայտնուած արձակագիրներէն է, որ Հոն Ժանօթ դէմք մըն է արդէն ևս Հոս անձանօթ մը չէ:

Իր դիրքերը, մանաւանդ առանձին պատմութեանը, ահապէս ազմուչ հանեցին հայրենիքին մէջ, իսկ արտասահմանի ընթերցողը, վեցնօթ տարիներէ ի վեր, հեւ ի հեւ կը հետեւի աւոր էջերուն: Պետրոսեանի գործերէն երեքին ծանօթ ևնք մենք ևս մեր գրադարանին մէջ ունինք իր «Ամաւարտ Դիմատուներն» անուանաւորը, որ թէ՛ իբրև ոճ, թէ՛ իբրև ոգի, յուսադրելի հանգրուան մը կը հանդիսանայ երբտաւոր գրողի տի կենսութեան մէջ: Հոն տիրապետող գրական ուսանդութիւններէն չէրուներ կա-

տարող ևս ակնարկը մեծ հետանկարներու սեւեւանաւ երիտասարդ մըն է Պետրոսեան, ևս իր անհանգստութիւնը՝ սիրելի:

Վարդէս Պետրոսեան Հայաստանի այն բախտաւոր գրողներէն է նաև, որուն քանի մը անգամ առիթ տրուեցաւ «կարմիր գծից» դուրս գալ ևս այցելել Պիտերբուրգ, Սուսսերիա, Մարսը, Սուրբու, Լիբանան, Իտալիա, Քուրքիս ևս Գանատա: Այս յանձնարարի շրջապատները, կասկած չկայ, մեծ անդրադարձ պիտի ունենան իր գրչին վրայ, որովհետև, ինչպէս ինքը կ'ըսէ՝ «Սեփական ծագովորիմ Խալիվայու Խամար անհրաժեշտ է հասկանալ այլ ժողովուրդներն, սեփական երկիրը գնահատելու Խամար անհրաժեշտ է անցնալ այլ երկրներն»:

Իր այցելած երկիրներէն վերջինը Գանատան եղաւ, ուր երիտասարդ մտաւորական մը՝ Վերիտ-Արմէն, զբոյս մը ունեցաւ հեաը, որ Մալիի վերջերուն լոյս տեսաւ «Յուսարեքի յուրուական երեք թիւերուն մէջ»: Զրոյսը ընդհանրապէս կը դառնայ մեր ժողովուրդի արտաձեւութուն, սակայնպէս ու երազներուն շուրջ ևս կը ջուլայնէ երիտասարդ գրողներն հաստատութիւնը հաստատող լախախուսութեան մի քանի պայծառ գիծեր: Հայութիւնը երկու մասի բաժնող արուեստական հասկացողութիւններուն դէմ գեղեցիկ ընդդիմութեամբ մը կայ զրոյցին մէջ ևս երբտաւորէ մը քերին վճարական յովանդակութիւն ստացած նոյնքան գեղեցիկ պնդում մը: «Մեծ? Յոյն ժողովուրդն եմք»:

Յիշեալ զբոլորն մէջ, հարցում մը եղած է նաև Վարդանի մասին ևս կայ պատասխան մը: Կարգումը:

- Ի՞նչ է ձեր կարծիքը Վարդանի մասին: Պատասխանը:

- Վարդանն ամազգից կարդացել եմ երկու համար: Ձկիսելով հանդերձ խորագրերնքի սլըզբաւմային շատ հայեացքներ, գտնում եմ, որ զաւայնուամեկայնի, լուրջ գործ է, քե՛ս քրտ երբաւտարակիչները իստիսմներ չեն, սկզբունքներ աւմնն ևս պաշտպանում են, ինչքան էլ իս եւսամայն չգտնուեմ քրտնք: Միայն կ'ուզէի որ գրականութեան ևս արուեստի գեանաւարքեան մասնակ, քաղաքականութեան դիրքերից չմեկնեն:

Ուրիշներուն սկզբունքները յարգելու այս արտոնագրութիւնը յաճախուէլ չէ կոմունիստական դաստիարակչութեան մէջ սովոր կազմած մարդոց մաս, ևս Վարդանի Պետրոսեան առջեւազն կ'ուրարացնէ մեզ իր ցուցաբերած ոգիով:

Սկզբունքային տարբեր հայեացքներ ունենալու իրաւունքը ոչ ոք կրնայ արգիլել ուրիշին: Նոյն ծուլարանէն անցած ևս միեւնոյն պաշտօնը կատարելու սահմանաւ պատասխաններ չենք, մա՛րդ ենք, տարբեր խանութեք, միտալորտի, դաստիարակչութեան տէր ըլլալու հիմնական պատճառներով տարբեր հասցումներ կրող մարդեր, այսուհանդերձ բոլոր մարդերէն կը պահանջուէ, որ, պարկեշտութեան պայմանով, յարգեն ուրիշին հայեացքը և կատարուած նուաճումներուն առիթով մտնան հայեացքը:

Մասաւարական այս անգիր օրէնքին համար՝ մեր մշտն պայքարը կարճատև չէ եղած ևս է

միջին այլո՛ց չէ եղած: Բիւր առիթներով երկու ընթացակարգ ըսած ենք, որ քաղաքական դիրքը տարբեր բան է ու քրտկան դիրքը՝ տարբեր: Այս կէտին մէջ մեզ մեղադրելու խիստ պատճառներ զժողաւր թէ գտնեն մարդիկ: Հետուի չեքթանք: Մեր այս թիւին մէջ, մենք ինքիւր ունեցած ենք, օրինակ, Սիլվա կապուտիկանի և Գուրգէն Մահարիի հետ: Նայց ո՛չ Սիլվա կապուտիկանի պիտեբական ներարկումները և ոչ ուլ Գուրգէն Մահարիի կոմունիստական սէքերուն աշխատանքի նսնդամաները պատճառ կրնան ըլլալ, որ անպիտանանք անոնց զբաղան վաստակը: Հարկ չկայ փաստեր կուտակելու:

Միայն թէ, մեր ժառանգութեան մէջ կուտակականութեան դիրքերու ինչուր ազգացութեան կուտակ Վարդանի Պետրոսեանը կրնա՞յ նոյն համարակիցեամբ խոտել իրենց դիրքերուն ևս արժեքափերուն մասին: ՎԵՌՄՔ անցն ժողովարդն ենէ, բայց հակառակ այդ հիմարութեան, հայաստանի ընթերցողը հետաւոր ծանօթութիւն անգամ չունի հայ զբաղանութեան կարգ մը կարկառուն գէմքերուն մասին, ևս տար պատճառը, ուղի՞ղ գիծով, կու զայ ՎԵՌՄՔ քաղաքականութեան դիրքերից:

Ընդ որ պարզանկերուն, փոխուած բան մը կայ այս երկուտարդին ու իր սերունդին հակութեանութեան մէջ: Ընդհանրապէս սղիտա տարածքին դրոյ անտեսուած ու ճգմուած տեղերն մէկը, որ երկուտարդութեանց եղաւ շուրջ յիտուն տարի, սկսած է բարձրացնել իր դրոյիւր ևս տարիկէլ իրենց օրերը վաղուց տարած հիւսնքի զարացումները ևս միջին ծերութեան ծեր ունակութիւնները:

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԵՍԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՇՈՒՆՉԸ

«Քո ամպլուան տարերքն էր...»,-
 առաջին է խոսում Չարենցն ինքն իր հետ
 1928 թուին՝ իր «բանաստեղծական ար-
 ևեստ» ծրագրային շարքի բանաստեղ-
 ծութիւններից մէկում: Եւ իսկապէս,
 եթէ փորձելու լինենք Չարենցի բանաս-
 տեղծական խառնուածքը բնորոշել մի
 քանի բառով, ապա կենտրոնական տեղը
 կը բռնի «տարերքը»: Այդ գիծը այս
 կամ այն խտութեամբ անցնում է նրա
 ամբողջ ստեղծագործութեան միջով:
 Ճիշդ է, կեանքի վերջին տասնամեակում
 Չարենցն աւելի ու աւելի տարուեց խո-
 հականութեամբ, մի ներքին յեղափո-
 խութիւն ապրելով, երբ, ինչպէս գրում
 էր նա 1929 թուին՝ «Ես այն շեմ ալիւս
 բանաստեղծութեան մէջ»:

Ել չի՛ հոնդում սիրտս վայրենի,
 Ինչպէս դաշտերում ճժոյգ սանձարձակ -
 Գզուեց ինձ սիրով մի ձեռք հայրենի,
 Եւ ես մի գիշեր իմաւտում դարձայ:

Բայց այդ եւ Հետագայ տարիների
 շարենցեան խոհականութիւնը սովորա-
 կան, անկիրք, տեսանելի եւ անտեսա-
 նելի մտապատկերներով սնուող ու նը-
 բանց հիման վրայ կառուցուող, զուտ եւ
 անաւին, անդորր ու անշահ խոհակա-
 նութիւնը չէ, այլ տարերքի ծովից ան-
 ցած, ինքն իր աչքին ընկած եւ բարձրա-
 ցած մարդու, իր բոլոր թրթուռն նեար-
 ցաթելներով կեանքի ու տիեզերքի հետ
 կապուած բանաստեղծական բեղուն ան-

հատականութեան ապրող ու նպատակա-
 սրլաց խոհականութիւն:

Չարենցի աւելի քան քսանամեայ
 գրական կենսագրութիւնը, անշուշտ, ու-
 նեցել է իր յաջորդական փուլերը: Ամէն
 մի փուլ ունի իր բնորոշ առանձնաշառ-
 կութիւնները: Այդ փուլերը կարելի է
 մօտաւորապէս բաշխել կարսեան նախա-
 փորձերի, 1915-1917, 1918-1919, 1920-
 1921, 1922-1925, 1926-1930, 1932-1934
 եւ Հետագայ թուականների միջև: Ի-
 բրաքանչիւր փուլում աչքի են ընկնում ու-
 ղողակի նիւթեր, որոշակի ձեւեր, կըլ-
 ռոյթ եւ ընկալումներ: Սակայն ամե-
 նուրեք երեւում է նոյն կենսագրութիւն,
 շրջապատի երեւոյթներին շերտութեամբ
 արձագանգող, բայց միշտ հեռու-հեռու-
 ներ մղող բանաստեղծական վառ, ան-
 հանդիստ, զոհողութիւնների եւ առու-
 սյանքի պատրաստ անհատականութիւնը:

Ընդունուած խօսք է, թէ «բանաս-
 տեղծ ծնում են եւ ոչ թէ դառնում»:
 Այդ իսկ արամբանութեամբ՝ Չարենցը,
 կամօքն Ատուծոյ, անշուշտ ծնեալ բա-
 նաստեղծ էր: Այդ երեւում է դեռեւս նրա
 աշակերտական շրջանի գրական փորձե-
 լից, ինչպէս եւ Հետագայում իր ման-
 կութեան մասին Չարենցի գրած երկե-
 րից: Իսկ երբ դա այդպէս է, ապա
 բանաստեղծութիւնը նրա համար պար-
 զապէս ճակատագիր էր, որից խու-
 սափել չկար, այլ ոչ թէ ընթացիկ
 ընտրութեան հարց: Եւ Չարենցը
 սկսեց ստեղծագործել վաղ պատա-

նեկան ասրիքից: Այն ժամանակ-
 ալ րանաստեղծութիւնները աչքի են
 ընկնում շեշտուած յոռեակութեամբ,
 թախիծով, կարօտով, հեռաւոր ձգտում-
 ներով: Ոմանք դա բացատրում են այն
 տարիներին իշխող խորհրդապաշտական
 գրական ուղղութեան ազդեցութեամբ,
 ոմանք էլ այսպէս ասած գոցիտակտն
 պայմաններովք եւ նոյնիսկ կարծես թէ
 դաւաճական քաղաք կարսի գորշ միջա-
 վայրով: Մինչդեռ ամենապարզ քա-
 ցաբութիւնն այն է, որ Չարենցը ապ-
 րում էր ներքին անման տաղնապ ու
 տառապանք, նրա հանճարը օրուուր ձե-
 ւաւորում էր եւ նա բնազդաբար որո-
 նում էր կեանքի անսահմանութեանը
 կապուելու յուսալի ուղիներ: Պէտք է
 ուրախ լինել, որ Չարենցի մանկութիւնն
 աւ պատանեկութիւնը անցաւ Կարսի
 «գորշ միջավայրում» եւ նա բաւարար
 ժամանակ ունեցաւ բնականոն կարգով
 աճելու, ինքնորոնջութիւն ծրարելու եւ
 թելերն ամբարցնելու: Այլապէս դժուար
 է հաւատարմ, թէ ինչ կը ստացուէր,
 եթէ նա, առանք, ծնուելու եւ ապրելու
 լինէր այսպէս կոշտած գլուխաւոր պո-
 զոտաներում»:

Որ սեղ զայլ տեղ թախիծն ու յո-
 ռետեսութիւնը Չարենցի ստեղծագոր-
 ծութեան համար մնացուն եւ վերջնա-
 կան յատկանիշներ չէին, այլ միջանկալ
 ու նախապատրաստական անխուսափելի
 օղակներ, ցայտուն դարձաւ հետագա-
 յում, երբ հանդամանքները նպաստեցին,
 որ նա իր ստեղծագործ թեւերը լայն
 բացի ու ճախրի գէթ երևակայու-
 թեամբ: Տանութեամբն այս պատանի Չա-
 րենցը ինքնաբերաբար մղումով մասնակցեց
 Հայ կամաւորական շարժմանը, գտնուեց
 Արեւմտեան Հայաստանի աւերակ ճանա-
 պարհներին եւ բնակավայրերում ու վը-
 կայ եղաւ համազգային ողբերգու-
 թեանը, իսկ այդ զրեց ճիւղիկէական
 ստապելը: Այնտեղ եւս անպատմելի
 թախիծ ու յոռետեսութիւն կայ, բայց
 ոչ թէ անձնական շափանիչով, այլ հա-
 մազգային աւ համամարդկային: Պոէմը
 իր ձեւով էլ մի թուիչ էր Չարենցի

ստեղծագործութեան մէջ:
 Չարենցն այնուհետեւ իրիքի բեր-
 մամբ ընկաւ Ռուսաստան՝ Մոսկուա:
 Բնականաբար, նա շարունակեց ստեղծա-
 գործել նաեւ այնտեղ, նորանոր յուրի
 սկօսներ բացելով: Շատերը առհասարակ
 մեծ կարեւորութիւն են տալիս Չարենցի
 Մոսկուա գտնուելուն եւ ուսական յե-
 զափոթական շարժումները թողած աղ-
 զեցութեանը: Այդ առթիւ թերեւս աւե-
 յորդ չէ ընդգծել, որ Չարենցի կեանքն
 առհասարակ անցել է հիմնականում հա-
 կական միջավայրում: Միջին հաշուով
 ընդհանուր տոմար Ծ-Յ տարիների բա-
 ցակայութիւնը որեւէ արժատական հեւջ
 չէր կարող թողնել նրա բնատուր մտա-
 յութեան եւ ստեղծագործութեան վրայ:
 Որ Չարենցը 1918 թուին կոմկուսակցու-
 թեան շարքերն է մտել եւ ծառայել Կար-
 միր Բանակում՝ զաւ եւս այնքան էլ մե-
 ծակելու իրադարձութիւն չէ: Այն պայ-
 մաններում մի անտէր-անտիրական պա-
 տանի կարող էր ճմանել» ուղած շար-
 քերը եւ ճճառայելք ուղած բանակում:
 Իսկ չէ՞ որ կորհրդային Ռուսաստանում
 կոմկուսակցութիւնից բացի այլ կուսակ-
 ցութիւն եւ կարմիր Բանակից բացի այլ
 րանակ չկար: Հետեւապէս, այդ փա-
 տերի նշանակութիւնը թէեւ չի կարելի
 անտեսել, բայց չի էլ կարելի շափազան-
 ցել:

Սակայն կայ մի պարագայ, որը
 արժէ գէթ թեթեւակի զննութեան առ-
 նել: Չարենցը իր ստեղծագործութեան
 մէջ շրջադարձային փուլ է համարում
 «Մոմա» պոէմը (1918 թ.), որտեղ տ-
 յարանօրէն փառարանում է յեզափո-
 խութիւնը, այլ խօսքով՝ ըմբոստութեան
 ողին: Եւ առհասարակ այդ շրջանի եր-
 կերը, մասնաւորապէս «Մարտիները ին-
 յապարուած» հռչակաւոր պոէմը, աչքի
 են ընկնում թուան թափով, մարտական
 պոթոսով, լայնաշունչ ընթացքով: Այն-
 տեղ արդէն երեւում է բուն Չարենցը իր
 նախնական, բնական վիճակում: Արդեօք
 դա հետեւանք էր Չարենցի ներքին աճ-
 ման, արտաքին ազդակների ներգոր-
 ծութեան, թէ՞ պատահականութիւն էր:

Տիրող մթնոլորտը չէր կարող, անուշտ, անմասն մնալ: Իայց հիմնականը կարելի է համարել այն, որ Չարենցը հոգեբանօրէն պատրաստ էր դրան եւ առիթի էր սպասում եռացող տարերքին խառնուելու: Նա բանաստեղծօրէն էր ընկալում աշխարհն ու աշխարհի երեւոյթները, եւ ամէն բան, ինչ որ սնունդ էր տալիս նրա յայտաթոք շնչառութեանը, կենսադաշտ եւ հորիզոն բացում, համապատասխան վիթխարի պատկերներ տրամադրում: Հրապուրում էր նրան եւ հարազատանում այն շարժում, որքան որ չէր խախտում բանաստեղծմարդու ներքին ամբողջութիւնը, կառուցուածքն ու ոգին:

Բանաստեղծական հրապուրանքից բացի, թերեւս նշանակալից դեր ունեցած լինի նաեւ զաղափարական հրապուրանքը: Յայտնի է, թէ ինչ ճեղքեր բացեց 1917 թուի ոռուական հոկտեմբերեան յեղափոխութիւնը բուն Ռուսաստանում, շրջապատում եւ առ հասարակ աշխարհում: Յայտնի է, թէ ինչ մեծաշփոթ խոստումներով եւ կրակոտ նշանախօսքերով ծնուեց այդ յեղափոխութիւնը՝ յանուն աշխատանքի եւ աշխատաւորութեան ազատագրման, ընդգէմ շահագործման ու ճնշման: Եւ զարմանալի չէր լինի, եթէ առանց այդ էլ իր ամբողջ էութեամբ անկեղծութեան մարմնացում հանդիսացող Չարենցը հաստատար այդ դեռեւս չստուգուած նշանախօսքերին ու իր ձայնը հնչեցնէր յանուն դրանց յայտնակի: Չպէտք է մոռանալ, որ Չարենցից ասանապատիկ սուելի փորձառու, պատրաստուած եւ զգաստամիտ մարդիկ իր ժամանակ առանց դիմադրութեան կախարդուեցին յեղափոխութեան հրապուրիչ նշանախօսքերով, նրա թակարդն ընկան, իսկ հետագայում թէ իրենք զոհուեցին եւ թէ տասնեակ միլիոնաւոր անմեղ մարդկանց ողջակիզման ու հարիւր միլիոնաւոր զանգուածների ստրկացման կամայական մայ պատճառ դարձան: Յամենայն դէպս, Չարենցի հրապուրուելը այն ժամանակ չէր կարող բխել զուտ զոգմատի-

կական զաղափարախօսութեան դրոյթներէց, այլ միայն մարդկային հասարակութիւնը աւելի արդար հիմունքների վրայ կառուցուած տեսնելու ներքին, միանգամայն հասկանալի մղումներից:

Չարենցի ստեղծագործութեան թափը բազմապատկուելու մէջ վերջին տեղը չէր կարող բռնել եւ ազգային գործօնը: Արդարեւ, մի դարերով ճնշուած, չին ու նոր բարբարոսների հարուածների տակ կքած, արեւի տակ իր արդար բաժնեց պրկուած տաղանդաւոր ու շինարար ժողովրդի երկտասարգ զաւակը ինչպէ՞ս կարող էր ինքնիրեն ներկայացած առիթը յօգտագործել եւ գէթ շիկացած բանաստեղծական խօսքով շխարհնել բոլոր հին ու նոր աշխարհակալ յաւակնոտ տէրերին: Այս առելով, մենք նկատի ունենք նաեւ Չարենցի հետագայ տարիների նոր-նարեոյթ երկերը: Եւ առանց չափազանցութեան երկիւղի կարելի է ասել, որ Չարենցի հզօր եւ ամպրոպաշունչ խօսքի մէջ ինքնարեքրարութիւն եւ բնազդաբար արտայայտում էր նաեւ հայ ժողովրդի սրտում երկար ժամանակ կուտակուած դառնութիւնը, զայրոյթը, թեւաւոր քողերը եւ հողեկան գերագոյն պոթիկումը:

Այն, որ Չարենցի ստեղծագործութեան մէջ ազգային ենթահողը, մտաբնութիւնը եւ նոյնիսկ գիտակից նպատակաւարցութիւնը պատահական երակ չէր, այլ մշտաբնուած ներկայութիւն, երեւաց 1920 թուականի բազմաթիւ երկերում, երբ առաջին գլծ քաշուեց քնարական խոհականութիւնը, սրտի գործին ու ջերմութիւնը, երբ երկերի ձեւն անգամ նկատելիօրէն սեղմուեց, խտացաւ, բիւրեղացաւ, իսկ բովանդակութիւնը անհամեմատ աւելի լիցքաւորուեց կենսական զաղափարներով: Բաւական է յիշել «Ես իմ անուշ Հայաստանին», սրտեղ բանաստեղծը երդման պէս հանդիսաւորութեամբ յայտարարում է. «Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արեւնաքամ վէրքերը մեր - էլի՛ ես որք ու արնալիտ իմ Հայաստան - ես՛րն եմ սիրում»: Այդ Հայաստանը սրտով ու արուեստով սիրող Չարենցն էր, որ կրում էր իր մէջ

նաև զժամանակի շունչը դառնալուց սե-
ւեռուն դաղափարն ու մտահոլութիւնը:
Բայց ժամանակն էլ, բնականաբար, իր
պատուէրներն ունէր:

4

Չարենցն իր հալորդականութեան
բերումով ի բնէ հակուած էր արձագան-
դելու ամէն մի կենսական երեւոյթի,
չարժման, դաղափարի: Բայց ի՞նչը կո-
րող էր աւելի առատ սնունդ տալ այդ
ձգտմանը, քան իր սպրած ժամանակը
ևւ անմիջական միջավայրը: Ուստի ըստ
էութեան ոչ ոք Չարենցի չափ չէ արձա-
գանդել ժամանակի իսկապէս հրատու
ինդիքներին ու նրա չափ յարգորներ չի
կարդացել այդ ուղղութեամբ: Չարենցի
երկերը չի են այդ բնոյթի խորհրդածո-
թիւններով, մենախօսութիւններով ու
կերպիւսութիւններով, բանաձեւերով:
Չարենցը բաղմամբիւ բանաստեղծութիւն-
ներ է գրել բանաստեղծութեան մասին,
դրական արուեստի ու գրողի անելիք-
ների մասին: Նա իր ներքին սապնապ-
ները արտայայտել է յաճախ չափածո-
յով՝ սպաւինելով գրանաստեղծի իրա-
ւունքի՝ քիչ թէ շատ անձեռնմխելի հե-
րուարութեանը:

1929 թուին Չարենցը գրում էր այս
հանրայայտ տողերը՝

Թէ ուզու՛մ ես երգը լսեմ՝
Ժամանակիդ շնչի՛նք զարձիր -
Կապուի՛ր մեարդով իւրաքանչիւր
Քո օրնի՛նք աւ քո զարիմ,
Կեանքը սիրի՛ր լիանկնիւմ
Ու մի՛ դաւիր քո քնարիմ:

Սակայն ամբողջ դժուարութիւնը
կայանում է քնարի եւ տուեալ դարի եր-
բեմն հակամարտ լահերը հաշտեցնելու
մէջ: Չարենցը ըստ երեւոյթին լաւ էր
հասկանում այդ: Նոյն բանաստեղծու-
թեան մէջ նա արեւացնում էր, թէ չկայ
զարին ձուլուելուց աւելի քանհուն ու
զժուարին մի գործ: Նա քննադատում է

ևւ իր երբեմնի ուսուանութեամբու-
թիւնը ժամանակի փրփրածին նշանա-
խօսութիւնն ու «փորձում ազատուել այդ
մարմանից», թէկուզ... թէկուզ՝ խոս-
տովանում է նա՝ «Առաջալուսւմ գուցէ
ցաւեմ, քանզի դա ե՛ւ հեշտ էր, ե՛ւ
պարզ, ե՛ւ անվնաս, ե՛ւ շահաւէտ...»:

Բայց ի՞նչ ասել է ժամանակի
շունչը, Ո՞րն է այն հրաշադրած միջոցը,
որի շնորհիւ հնարաւոր է դառնում ան-
շատել միմեանցից շրջապատի բազմային
ու մերձեկին, իսկականն ու կեղծը, «չն-
շաւորն» ու «անշունչը»: Ո՞րն է դարի,
ժամանակի ճշմարտութիւնը: Ինչպէս հին
ու նոր բաղմամբիւ այլ երկրներում, խոր-
հրդային պայմաններում եւս կային ու
կան տիրողներ ու տիրուողներ, դահիճ-
ներ ու զոհեր, պարտաբոյժներ ու ճոր-
տեր, դաղափարի նահատակներ ու մե-
ծապատիւ պնակալէզներ, եւն., եւն.:
Արդեօք դրանցից ո՞ւմ խօսքը եւ իղծերը
պէտք է համարել ժամանակի շնչի, ու-
ղու մարմնացում: Ըստ էութեան՝ առան-
ձին վերջերս ոչ ոքի, այլ ընդհանուր
միջնուրբի հանրազումարով է զլափ-
ւում» ժամանակի շունչը: Ուրեմն, «Ժա-
մանակի շունչը» ինքնին արդէն առաձ-
գական հասկացողութիւն է, որի հողի-
նակութեանն են դիմում, ըստ պարտ-
պաշի, թէ պահի տիրողները եւ թէ բազ-
մաստիճան ըմբոստները: Շատ չծաւալ-
ւելու համար, որպէս ընդհանուր եղբա-
կացութիւն ասենք, որ ժամանակի շունչ
ասելով՝ զեղարուեստական դրականու-
թեան, մանաւանդ բանաստեղծութեան
մէջ, ըստ երեւոյթին պէտք է հասկանալ
կեանքի ճշմարտութեան տարիզութիւ-
նը՝ տուեալ ժամանակի, դարի ընձեռած
հնարաւորութիւնների շրջանակում: Մտ
ձօտաւոր բանաձեւում է սոսկ: Չենք
կասկածում, որ սերիչ բանաձեւումներ
եւս կարող են լինել:

Միեւնոյն հասարակութեան մէջ սո-
վորաբար շրջանառութեան դրուած նշա-
նախօսքերը թէեւ ձեւով նոյնն են, բայց
տարբեր իմաստ են ձեռք բերում տար-
բեր մարդկանց մօտ: Վիճիմեան դարի՞ն
պաշտօնական դաղափարախօսութեան ու

քաղաքականութեան կերտողներն ու երկրպագուները լայն առումով զօրամակի շունչը՝ զտնուած էին կրեմլեան հրամանադրերի անմտունջ կատարման, ժողովրդական զանգուածների ներքին թզկաման ու թշուառութեան, ժամանակակից ստրկատիրութեան հիմունքները ամբացնելու մէջ եւ անողոք հաշուեկարգար էին տեսնում մարդկային արժանապատուութեան, դադարաբան ու կենսական վսեմ ըմբոստութեան, ինքնուրոյն անհատականութեան տմէն մի դրոսեւորման դէմ մնչպէս որ այդ գերապատանկան ըմբոստումն անէր իր ամենեւեւան քիմեալ պահակախումբը, այնպէս էլ ժողովրդի ընդերքից անընդհատ ծնուած էին ըմբոստներ եւ այս կամ այն մեւով նահատակուած Դրանք թուրուզին տարրեր փաստեր էին, տարրեր ճակատներ եւ տարրեր իրականութիւններ, ինչպէ՞ս կողմնորոշուել, — ահա մի խնդիր, որ մտահոգում էր ամէն մի գիտակից մարդու եւ ամէն մէկը ըմբոստանում էր իր մեւով, պայքարում իրեն մասշնի միջոցներով: Ինքնին հասկանալի է, որ ամէն մի իսկական բանաստեղծ էլ առաջին հերթին ժողովրդական կողմնակալութիւն է եւ կամ ինքնախարէութիւն: Հետեւապէս եւ ապրող բանաստեղծները չէին կարող անմասն մնալ այդ կենաց — մահու պայքարին:

Դատելով Չարենցի ստեղծագործութեան բոլոր տուեալներից, նա ազատասենցներէ՝ ոգու ճորտութեան դէմ ըմբոստացողների հետ էր, երբ զրուած էր.

«Ես մարդ եմ, պոէտ ու քաղաքացի. եւ ինչպէս նորսր շուայտ Հոտուած Պատրիկների հետ չի՛ գտնել Յաշի — Այնպէս ես այսօր, լեմբեման դարում, Չի՛մ կարող լինել բոնախալ դասի՝ Պատրիկների հետ... Հագա՛ր քիլիքով կարգուած եմ ես այս հսկայ պայքարին — եւ մահաուամի այս մահապարհին ես ամէ՛ն տանգամ տարել եմ սիրով»:

(1929 թ.)

Չարենցը որպէս արուեստի մարդ, առաջին հերթին այդ ասպարէզի կաշկանդումներն էր զգում եւ տեսնում ու ըմբոստանում դրանց դէմ: Քաղաքացիական ըմբոստութիւնը, կարեւի է ենթադրել, դրա հետեւած է եւ բխում է դրանից ու ոչ նախորդում: Նրա ըմբոստութիւնը խորքում ընդհանուր դադարական է: Ծիչը է, Չարենցն իր դանդառներն ուղղում էր որոշ անանուն մարդկանց, որոշ անանուն քննադատների դէմ եւայն: Բայց եթէ իսկապէս այդ մարդիկ ու քննադատներն էին որոշողները, թէ ինչը պէտք է անել եւ ինչը ոչ, ու իրենց զայտնիք խտուրտեան համար պատիժ չէին կրում, նշանակում է նրանք որոշ չօրով իշխանութիւն էին եւ այսպէս թէ այնպէս արտայայտում էին վերին իշխանութեան կամքը, թէ եւ, ինչպէս յայտնի է, նրանք էլ հետագայում բնաջնուեցին զանգուածային կարգով: Իրականութիւնը շատ անելի բարդ եւ ողբերգական էր, քան թուած էր հանգամանքների ճնշման ստիկ քաղաքացիական հաւատարմութեան տկոսից մտովին չհեռացողներին: Չարենցը ոչ կարող էր հաշտուել ոգու կաշկանդման հետ, ոչ էլ հրամարուել սկզբունքային պայքարի՝ յանուն իր ներքին ստեղծագործական արտութեան, քանզի՝

«Ապրիցիր դու ըմբոստ մի դարում — եւ ոչինչ քեզ յար չքուաց, Դու տեսար մօտիկն ու հեռուսն — եւ ոչինչ քեզ յար չքուաց, Դու տեսար փլուզումն ու գարթումը, ամասամ հիմերի կործանումը — եւ, բացի պայքարից, աշխարհում քեզ ոչինչ յար չքուաց»:

Նա ուզում էր ինքը լինել եւ իր ճանապարհով դնալ, չաղարտել իր դէմքը: Ինքն իրեն անընդհատ խրախուսում էր. «Քայլի՛ր, քայլի՛ր չո ճանապարհով, դու ո՛չ Գէօթէ ես, ո՛չ Վերհարեն — դու լո՛կ Չարենց ես, միայն Չարենց»... ու վարանտո: Կամ ահաւասիկ, —



«Ներքեւում ահա, լերամ լանջիմ,
Ուր կան խարոյկներ ու արօտներ,
Ինչպէս ցնորքներ ու մտեր շնչիմ -
Ձգում են նեղիկ արահետներ:
Մարդիկ են ահա այնտեղ յաճում
Եւ արածում են այնտեղ գառներ, -
Բայց ուղի՛ն, ուղի՛ն քո մահացու
Արահետներին դու չխառնես»: (1929 թ.)

Ձարենցը բարձրաձայն յայտարարում էր, թէ՛

«Ձի՛ կայրոյ լինել մեր սգին գերի
Սերտած խօսքերի, կուտած մտքերի -
Թէ ապրում է նա ու շնչում է դեռ՝
Ձգտելու է նա անհաս սփերի»:

կամ էլ՝

«Ձե՛մ ուզում գծալ ես ճամպարեով,
Ուզեով ձեր այդ՝ զարմանալի հեշտ,
Գերադասում եմ ուղի՛ն քարփարտ,
Որով շարունակ ընթացել եմ ես»:

(Շար. 2 եւ վերջը յայտրոյ բիւով)

*Մի ամբողջ ժողովածու կարելի է
կազմել Ձարենցի այն երկերից ու համա-
պատասխան հատուածներից, որոնք նա
բարձրաձայն մարտնչում է յանուն ար-
ւեստի իր ըմբռնման եւ, վերջին հաշ-
ւով, նաեւ յանուն մարդկային անհատի
ու ողու ազատութեան: Բանաստեղծի
եսը յամառօրէն պաշտպանում էր իր
ինքնութիւնը, տուայտում «անշահա-
ւէտ», բայց ճակատադրական վերելքի
ճանապարհին եւ միտամանակ փայփա-
յում «ժամոհմի շունչը դառնալու» իր
վազմի երազը: Քանզի «ժամանակն» էլ
մարդու եւ բանաստեղծի համար մի տե-
սակ ճակատագիր է եւ ընտրութիւն չը-
կայ: Սակն մարդ կապուած է իր ժամա-
նակին եւ չի կարող հրատարակել նրա-
նից: Բանաստեղծի համար իր ժամանակը
հէնց ինքն է, իսկ «ժամանակի շունչն»
էլ այն ամէնը, ինչ որ ինքը արժանի է
համարում պատմութեանը յանձնելու:*

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ



ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒՆ

ԿԱՇԿԱՆԴՈՒՄՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒ ՏԱԿ

Գրագէտը՝ բանուոր — Գրականութիւնը՝ գործիք — Արուեստը՝ փրակակազմայի միջոց — Գրագէտին վերիվայրումները — Ժամանակակառու եւ եամեմտակամ ազատութիւններ — Գրագէտը ստեղծողական պահանջներ — Գրաբանութեան ծիծաղատարժ չափազանցութիւններ — Գրականութեան մակարոյծներ — Իրաւ գրագէտին մաքողական ստեղծական անկտրելիութիւնը:

Գ.

Լենինկրասի բանաստեղծներէն Ս. Օրբով, սովետական դրագէտներուն վերաբերմամբ ջոյց տրուած գնահատանքի եւ ջննդատութեանց ալիքատր վերիվայրումները մատնանշելով, հետեւեալ պատկերաւոր ձեւով կը ներկայացնէր զայն —

«Նայուածք մը նետնմէ մէկէ աւելի ալիքներու կատարներուն, որանք դեռ երկէ բարձր էին: Քննադատները վեր կը վերցնէին իրենց փողերը ու կը փառաբանէին. էիչ ետէ, իրենց աւելիները դուրս քաշելով, ոտիկաններու նման սուլելու համար...»:

Առնենք «Փրակաւոր» խմբագիր, ճրուչիւնէն ետք գործի գլուխ անցած Ռուսիանձեւի արտայայտութիւնները, Նոյն տարուան մէջ, 1966 Փետրուարէն Սեպտեմբեր, Ռուսիանձեւ փոխիկոխ կը գործածէ մտեցման երկու տարբեր ձեւեր, մէկը գուտ արուեստագիտական, միւրը պարտիական, ոտիկանական. թէեւ ճիշդ է, բաւական նուրբ ձեւերով, ինքզինք կարելի եղածին չափ քիչ հերքելով, բայց եւ այնպէս, բացայայտ է Պարտիայի պահանջը եւ իր զիջումները այդ պահանջին:

Այսպէս, 1966 Փետրուար 21-ին, «Փրակաւոր» մէջ, խմբագիրը՝ Ռուսիանձեւ կը գրէր. «Իրական ստեղծագործ աշխատանք կարելի է կատարել միայն փնտուելով, փորձելով, ազատ-

րէն արտայայտելով եւ տեսակէտներու բախումով»: Սակայն նոյն տարուայ Սեպտեմբերին, «Փրակաւոր» թիւ 252-ի մէջ կը գրէր.

«Իր ստեղծական պատասխանատուութեան գիտակցումը հսկայական նշանակութիւն ունի սովետական ամբողջ մտաւարականութեան համար: Դա յատուկ նշանակութիւն ունի այն ջոյկատի համար, ինչպիսին է գեղարուեստական մտաւարականութիւնը: Գեղարուեստական կերպարների մէջ արտայայտելով ստեղծարար ժողովուրդի կեանքի բոլոր կողմերը, ներգործելով նրա զգացումների վրայ, նրա գիտակցութեան վրայ, գրականութիւնն ու արուեստը չեն կարող անտարբեր չէզոքութեան դիրքեր գրաւել արդի աշխարհի բոլոր անկիւններում ծաւալուած հակադիր դասակարգային ուժերի մեծ պայքարի նկատմամբ: Իրադարձութիւնների անադուր ըմբացքը անխնայօրէն ցրում է ափոլիթիութեան եւ չէզոքութեան պատրանքը: Յետեւելով կեանքի անեղծ փաստերի, հասարակական գարգացման գիտական տեսութեան աններքիչ եզրակացութիւնները վրայ, պարտիան մերժում է, այսպէս կոչուած, «Մաքուր» արուեստի, կեանքի կտրուած գաղափարը»:

(«Գրական Թերթ»,

17 Սեպտեմբեր 1966-ին)

Կրեային իրարու հետ հաշտ երթալ ազատ արտայայտութեամբ եւ բախումներու կարելիութիւններով իրական ըստեղծագործ աշխատանքը եւ Սեպտեմբերի խմբագրականին մէջ առաջ շրուած աշակէս կողուած «մաքուր արուեստին» պարտադիր մերժումը համայնավարական շարժանիչներով հարցերուն ժողովներուն համար, սակայն հիմնական հարց մըն է՝ ազատ ստեղծագործութեան վարժարուեստագէտներուն եւ գրագէտներուն համար :

Նոյն Ռուսիանմէւ 1966 փետրուարին կը գրէր՝ «Պարտիան պէտք է արմատախիլ ընէ ամէն տեսակի միջամտութիւն գրական գործերու մէջ, որ կու գայ անկարող պաշտօնեաներէ, կամ ամաթեօրներու կողմէ» :

Իսկ Սեպտեմբերին .

«Ներկայ գաղափարակամ պայքարի սրման պայմաններում պատմութիւնը սովետական իւրաքանչիւր մարդուց պահանջում է բարձրացնել իր ասցիալական պատասխանատուութեան զգացումը :

.....

«Անա թէ ինչու պարտիան սկզբումբային քննադատութեան է ենթարկուած եւ կ'ենթարկի անպատասխանատուութեան ամէն դրսեւորում :

.....

«Նավտական մտաւարակամութեան ուժը կամունիստական աշխարհայեացի վրայ խարսխուած, նրա բարձր գաղափարաբանութեան մէջ է, նրա հաւատարմութեան մէջ՝ քանզի որ դասակարգի արմատական շահերի նկատմամբ, որոնք դարձնել են ամբողջ սովետական ժողովուրդի շահերը, համաշխարհային ասպարէզում նրա դասակարգային յըստակ դիրքորոշման մէջ է, նրա ինտերնացիոնալիզմի մէջ է : Դա է նրա պարտականութիւնը : *Եւ այլն, եւ այլն :*

Այս մեծ շարունակութեամբ մը ահա, որ հզեկարուեստական մտաւարակամութիւնը, նոյն Ռուսիանմէւի գրչին սակ, Սեպտեմբերին, կորոնցնելով Փետրուարին մեռ թերած սահմանումը

«Ստեղծագործ աշխատանք կատարողի, կը դառնայ «ՋՈՒՍՏ» :

Իսկ որովհետեւ, ի վերջոյ, Սեպտեմբերին դրողը Փետրուարի Ռուսիանմէւն է նոյն ատեն, եւ տեսանքի է պայքարը տոկմաթիքներու եւ յատկապէս պաղափարներու հետեւորդներու մէջը : Պարտիայի տոկմաթիքներուն տուրք վըճարող նոյն այդ յօդուածին մէջ իսկ, վերջաւորութեան տեղ մը երեւան կու դայ գրագէտներու պահանջը, արուեստագէտին օգի, ազատ շնչուած օգի պահանջը, երբ Ռուսիանմէւ կը գրէ, խօսելով «Ինքնատիպ խմբագրութեան ժողովուրդական ձեռք, թէ կը սխալէ» կը գրէ : «Իրականութեան ստուրաս կողմերի պատկերումը ու քննադատութիւնը իրօք այդ կողմերից չեանոյ՞ ստանալ» է նշանակում : Ռուսիանմէւ կը գտնէ . թէ «նման քննադատութիւններ չեն կարող օգնել մեր գրականութեան», թէ «նրանք սկզբումբայինութիւնը նենգափոխել են անհանդուրժողականութեամբ, համակողմանիութիւնը՝ կանխակալութեամբ եւ միակողմանի մտնցումի :

Այս բոլորին հետեւումբով, բարեսցական քննադատութեան փոխարէն քուտացուել է ոչնչացնող քննադատութիւն, այդ այն ժամանակ, երբ մեր քննադատութիւնը պէտք է հանախորհի, միացնել այն ամէնը, ինչ ծառայում է կամունիզմի գաղափարներին, եւ ոչ թէ բաժան բաժան անի դրանք : Մեմք գործ ունենէ դժբախտաբար, ոչ այլ ինչի . եթէ ոչ անվիճելի ճշմարտութիւնների մտացումն հետ, որոնց մասին խօսել է վ. Իլիենիը՝ «... Գրական գործը ամէնից քիչ է ենթարկուած միջանկիակամ հատարեցման, փոքրամասնութեան նրկատումը մեծամասնութեան տիրապետութեան... Անա այս գործում, աճշուշտ, անհրաժեշտ է անլի մեծ տարածութիւն ազատելի անձնական մտածողութեանց, անհատական հակումներին . մտքի եւ երեւակայութեան, մեքի եւ ռավանդակութեան համար» : Եւ եթէ «կամունադարձութիւնը անբաշխտընի է տնտեսական քաղաքականութեան»

թեան մէջ, ապա այն մանաւանդ անհամ-
դարժելի է գազափարական քաղաքա-
կանութեան բնագաւառումս :

*Մահօթ չէ սակայն դատաւարութեան
ժանրամասնութիւնները, ամբաստան-
եալներուն կեցուածքը, դատաւորներուն
ևւ դատախազներուն զիմաց տնոնց ժը-
տաւորականի բարձր կեցուածքը: Կարե-
լի չէ դատաւարութեան ժանրամասնու-
թիւնները ամբողջական ձեւով տալ այս
յօդուածին մէջ, սակայն արժէ որ ծա-
նօթանանք Սինիսիական վերջին խօսքե-
րուն (*): Կը մէջբերենք քանի մը հատ-
ւածներ իր արտայայտութիւններէն.*

- Դատախազութեան ամբաստանու-
թիւններն ու պատճառաբանութիւնները
չտպաւորեցին զիս: Կը մնամ կայած իմ
սկզբնական տեսակէտներուս: Դատախա-
զութեան պատճառաբանութիւնները ա՛յն
տպաւորութիւնը կ'առաջացնեն, թէ գո-
յութիւն ունի ամբողջ կառուցուած
պատ մը, որուն վրայ բացարձակապէս
անկարելի է որեւէ տպաւորութիւն գոր-
ծել, կամ ճշմարտութեան հասնիլ:

Դատախազութեան փաստարկութիւն-
ները նոյնն են, ինչ որ ամբաստանագրի
փաստարկութիւնները, կամ հարցաբն-
նութեան ժամանակ բազմիցս լսածու
փաստարկութիւնները, նոյն, եին մէջ-
բերումները, կրկնուած կրկին ու կրկին:

(*) 1906 Փետրուար 10-ին ռկաւ Սինիս-
վաքիի եւ Տանիլի դատաւարութիւնը, Մակը-
ւայի մէջ, ռուսական համապատասխան գե-
րագոյն դատարանին աչիւ: Դատաւարութիւնը
գաղտնի էր, դռնփակ, փոքր սրահի մը մէջ՝ ուր
հազիւ 200 հազի կարելի էր տեղաւորել: Մաս-
նաւոր երաւերներ ունեցողները միայն ներս ըն-
դունուեցան, ոստիկանութեան մանրագնիմ ին-
նաւորներէն հոգ:

Հակառակ այս գրաւորութեանց, դատաւար-
ութեան ռզգրութիւնը Մակըւայի մէջ ամբող-
ջացուելով, արտասահման համաւեցու գաղտնի-
ութիւն: Դատաւարութեան մասին հատուածներ լայս
սեռան կ'անտանի «Մշակ», Թէէէկրաֆթի 17 Ապրիլ
1906-ի թիւին մէջ, ուրիկ առած ենք վերի մէջ-
բերումը. Սինիսիական խօսքերէն:

Մայրաքաղաքէն դժուար է նման մըթ-
նուրտ մը պայծառացնել: Ո՛չ աւաղիւր
տրամաբանութիւնը, ա՛յ ալ ստեղծու-
գործ աշխատանքի բնութեան մասին
տրուած բացատրութիւնները կրնան որ-
եւէ տարբերութիւն առաջացնել:

Դեռ սկզբնական հարցաբնութեանց
ժամանակ իսկ անդրադարձայ, թէ դա-
տախազութիւնը հետաքրքրուած չէր ա-
տոնցմով, այլ միայն ընտրուած մէջբե-
րումներով, որոնք կը կրկնուէին կրկին
ու կրկին:

Մտադիր չեմ գազափարներն ար-
գելու, կամ դատախազութիւն մը տալու
կամ գլուխս պատին գարնելու, կամ որ-
եւէ բան փաստելու: Բացարձակապէս
անօգուտ պիտի ըլլար ափիկա:

Շատ անկեղծօրէն կը հուստամ, թէ
գրականութեան հետ կարելի չէ վարուիլ
օրէնքի տարազներով: Վերջ ի վերջոյ,
արուեստագիտական պատկեր մը իր էա-
րեան մէջ իսկ է. յաճախ հեղինակը ինքն
իսկ չի կրնար պարզել գայն:

Համիլթի իմաստը, կամ Մաքսիլթի, ան-
գամ Շէյքսպիրին հարցնէինք (Եւ ինք-
զինքն համեմատած չունիմ Շէյքսպիրի
հետ, ոչ ոք կրնայ երազել իսկ նման հա-
մեմատութիւն մը ընել) թէ ի՞նչ էր
Համիլթի իմաստը, կամ Մաքսիլթի՝ ան-
բարոյացնող չե՞ն անոնք արդեօք, կամ
յաւայեօք, կը հուստամ թէ Շէյքսպիրն
իսկ պիտի չկարենար ճշգրիտ պատաս-
խան մը տալ:

Դուք, փաստարաններդ գործ ունիք
լեզուին հետ, որը որքան կարն ըլլայ
այնքան ճշգրիտ կ'ըլլայ: Գրականութեան
լեզուին գալով, ինչքան տարտամ ըլլայ՝
այնքան ճշգրիտ կ'ըլլայ»:

*Աշխարհ ընդզգեցաւ տրուած ծանր
պատիժներուն համար. ընդզգեցան մին-
չեւ անպամ արեւմտեան աշխարհի հա-
մայնաւար կուսակցութեանց ղեկավար-
ներէն ոմանք:*

*Կեանքը սակայն Մովսէսական Ռու-
սաստանի մէջ, ընթացաւ ա՛յնպէս, ինչ-
պէս պարտիան որոշած էր որ ընթանայ,
առանց մազաչափ իսկ ազդուելու արտա-
քին աշխարհի հանրային կարծիքէն. ախ*

սինքն թաղեց զէպի աստիճանական խըստացումս :

Իրտացումը հասաւ իր լրումին Համայնավար կուսակցութեան 23-րդ համագումարին, 1966 Ապրիլին :

Պրն. Պրէմենեւ շէր կրնար աւելի յըստակ կերպով ներկայացնել պարտիայի հեցուածքը հանդէպ Սինիաձսբիի, Տանիէլի պարագային, թան 23-րդ համագումարէ մէջ իր ունեցած ելոյթով, երբ իր յայտարարէր՝ «Դժբախտաբար մեր մէջ ունին կարգ մը գրչակներ, որոնք փոխանակ օգնելու ժողովուրդին, իրենց յատակ գործը բրած են սեւցնի մեր վարչաձեւը, վարկարկելի մեր հերոսական ազգը: Անշուշտ, նմաները բացառիկ փոքրամասնութիւն մը կը կազմեն (Իրայն), և ոչ մէկ պարագայի կ'արտոյայտեն մեր ասեղծագործ իմանիկեմցիայի սպրումներն ու մտածումները, որ մարմնով ու հոգիով միացած է պարտիային թւ ժողովուրդին: Նման ուրացակներ եւ ոչ մէկ կերպով մտահոգ են իրենց ընկերակարանցան հայրենիքի շահերով :

Սովետ ժողովուրդը, պարզ է, չի կրնար անտարբեր մնալ նմաններու ամօրայի արարքներուն հանդէպ եւ կը վարչի անոց հետ ա՛յնպէս, ինչպէս արժանի է որ վարուին :

Ինչ որ ուշադրաւ էր 23-րդ Համագումարին մէջ, ա՛յն էր, որ թուրք ճառերուն մէջ ալ, ամենաօրթնուքս ու ամենապահպանողական տեսակէտները արտայայտուեցան արուեստի եւ գրականութեան մասին: Այսպէս, հանրածանօթ յետադիմական Կ. Մ. Մարքովը, դրողներու միութեան թարտուղարը, ցաւ յայտնեց, որ անցնող վերջին տարիներու ընթացքին՝ պարտիան շատ մեղմ վարուած է գրողներու հետ, փոխանակ մարդկութեան գոնանք պարտիայի յատուկ ոգիով, և թաւարարութեան է ձեռն թաւով, որ ասդանդք զտնէ ինքն իր փրկկութեան ճամբան, և յուսացած է, որ ան յետագային իրեն պիտի զտնէ ուղիղ մտապարհուն: Պրն. Քանորով, Մոսկւայի պարտիայի թարտուղարը, որը

ընտադատութեանց ենթարկեց «Նովի Միր» եւ «Եմուսք» թերթերը, որ ատշերներն սեւեռած են մեր ղժուարութեանց ու իխաններուն վրայ և որոնք միկեպտիկ ու ապագադասկան կեցուածք մը ունեցած են, սովետական իրականութեան հանդէպ :

Ամենաբաւան յարձակումները եկան ղօրայար Ա. Ա. Էփիլեի կողմէ, որ տղետ դիմադրականութեան ջաղագական մասին վարելն է, և որ որտաց՝ մկաքագական և մանր պարտուական փտախտին դէմ, որ երեւան կու դարթատ իրեն ճերք տարբեր դրօշներու ատկ. կամ աւելի ճիշդ պատրաստկներով սանդժագործական ազատութիւն, այսպէս ասած՝ պայքար անհասի պաշտատուներէ հետեւանքներուն դէմ, և այսպէս ասած՝ պատմական ճշմարտութեանց եւ ղէպերու ճշգրտութեան պաշտպանութեան համար: Անոնք, որոնք նման պատմականութիւնը կը մըշակէին, կը միտէին սովետական իրականութիւնը սեւցնելու, ուրտույտ սովետ ժողովուրդի, պարտիայի եւ բանակի հերոսական պատմութիւնը, և մեր հերոսական անցեայի, պնիւ ու վեհ ներկայի հանդէպ թաւաւար կրտածները սերժանտներ :

Անհատապէս այն շէ, որ ղինուրտական մարդիկ գրականութեան վերտբերմամբ հեղինակուող կարծիքներ յայտնեն. այլ ա՛յն, որ երեւոյթապէս ամենայն լրջութեամբ ունկնդրած են դիրենք ներկաները: Միթէ՞ ուրտերը այնքան անտպահօթ հաստարակչութեան մը մէջ կը ղանուին, որ մինչեւ անպատ ամենանազապի ղափերով իոկ անցեայի միին փամանակները ներկայացրնելու փորձ մը (Մուժենիցիի դործը) կամ ամենափակ շրջանակի մը մէջ, ամենակրեակայական մտածումները (Մինիաձսբի) անգամ կրնան ապանալիք մը աւ վտանգ մը համարել իրենց ամբողջ սիստեմին համար, և պահանջել որ միակամ մտածողութիւն մը պատասխանուի այդ ղողորին... :

Աւելի ամօթայի եզաւ մեղաւկցու-

Թիւեր անոնց, որոնք զբաղէտներ էին, զործակից գուհեր էին, ինչպէս օրինակ Շոտլանդի պարագային, որ համազու- մարին մէջ անհրաժեշտ համարից յայտարարել, թէ Սիւնիաժաքի եւ Տանիէլ բախտաւոր էին, որ կըցեր էին կեանքերնին ազատել, եւ որ ամօթ կը զգար բոլոր անոնցմէ, որոնք այդ զբաղէտները պաշտպանելու էլած էին:

23-րդ այդ Համազումարէն ետք, սովետական ամբողջ տարածքին վրայ, բոլոր իրաւ զբաղէտներուն կը մնար, ձեռք ձեռքի տուած բանուոր-զբաղէտներուն, զործիք-զբաղէտներուն, փառաբանել պարտիան եւ իր անսխալականութիւնը, սոցիալիստական իրապաշտութիւնն ու կոմունիզմի կոտուցումը:

Մարզը, անհասը, անձնական ազբումները, զգացումներն ու մտածումները անգամ մը եւս պիտի դատապարտուին լուծման. թուփակները միայն պիտի խօսին ու պիտի կրկնեն տոկոս-թիքներու հրահանք սլոկանները:

Գարտիայի համար ոչինչ փոխուած է, զբաղէտներն ու արուեստագէտները ինքնին արժէք մը չեն իրեն համար. անոնք պէտք է ծառային քաղաքական նըպատակներու միայն, միայն համայնա-վար կուսակցութեան, ամէն հարցի մէջ:

Սակայն... հակառակ բոլոր սաստե-րուն, հակառակ բոլոր տասը տարուայ դատապարտութեանց, բոլոր Սիւպերիաներուն ու գնդակահարութիւններուն, կարելի չէ եղած, կարելի չէ ընդմիջտ խեղդել ազատ արտայայտութեանց պահանջը. հացին չափ կարեւոր, ոմանց համար հացէն աւելի կարեւոր ազատութիւնը մարդուն:

Եթէ կարելի ըլլար... Ստալինի մը տիրապետութենէն ետք Վոդնեսեւցիներ, Էստուչէնկօներ պէտք չէ ծնէին: Ազատութեան ծարաւէն կը պապակին սովետական վարչաձեւին տակ ապրող բոլոր ժողովուրդները. մանաւանդ անոնց հողիին ու մաքին արտայայտիչ եզրող զբաղէտները, իրաւ զբաղէտները, Այդ ծարաւը կտրել կարելի չէ հրահանգներով. միակ միջոցը յազեցնելու զայն,

ամբողջական ազատութիւնը տալն է:

Տոկոսութիւններն ու պիւրոքրութիւնը իրենց հացի ու դէրժի պայքարը կը տանին, տեւարար խեղդելով, խեղդել փորձելով զբաղէտներու ազատութեան ճիւղ: Սակայն, մարդկութիւնը առաջ տանողները տոկոսութիւնները չեն, պիւրոքրութիւնները չեն՝ խեղդուող ճիւղերն են. որովհետեւ անոնք մարդկային անձկութեան ճիւղերն են, անոնք միայն կը խօսին տառապող մարդուն. տառապողները մեծամասնութիւն են, ժամանակը ի նպատ անոնց կ'աշխատի: Եւստուչէնկօները հարիւրաւոր են այսօր, իրենց ունկնդիրները՝ տասնեակ հազարներով: Վաղն անոնցն է:

Իր «կամիստաս կեմագրութեան մէջ, Եւստուչէնկօ կը գրէ, ակնարկելով է. Էհրէնպուրկի «Մատցաւալ» գրքին, ու բառին.

«Համաձայն չեմ «Ստացախայ» դար-արածքին, որ Էհրէնպուրկ ք-ք-ու ձեռքով մը փակցուց իմացական այս ամբողջ նար ընթացքին: Ստացախայ մը կրնայ տեղի ունենալ նաեւ ձմեռ ժամանակ, եւ իրեն կը յաջորդէ ամբողջակամ ստոեցում մը կրկին: Արդ, մեր գոյս-վիճակը նման չէ ատոր:

«Ինձի համար, այդ ժամանակաշրջանը կարելի է սահմանել միայն Գարուն բարով: Գարունն ալ կրնայ դժուարի ըլլալ: Կրնամ առաւօտները որոշ տանցումի ենթարկուիլ. պազ հովերը երբեմն կը շարունակեն փչիլ: Քայլ մը դէպի ձախ կ'առնէ, քայլ մը դէպի աջ, քայլ մը դէպի ետ: Ձմեռը, տեսակ մը կը կառչի գարնան, փորձելով ուշացնել անոր գալուստը, գարգացումը: Կը գգաք սակայն, որ ձմեռուայ ընդ որ այդ յոր-ձակումները դատապարտուած են անգորութեան:

«Յետապահ կրնանք եմ, որոնք երբեք չեն կրցած արգիլել գարնան գարգացումը, եւ լաւ եղանակին ծաղկումը»: («Կանխահաս կենսագրական», էջ՝ 142-143)

1965-ի ընթացքին, պարտիայի դէր-քաւորումը հանդէպ զբաղանութեան եւ

զրազէտներուն, Հեազհեաէ իստացաւ, եւ ներողամիտ թոյլտուութեան զերջէն անգաւ դատապարտողի գիրքին:

1965 Հոկտեմբեր 19-ին, Հեազգրական գործակալութիւնները կը տեղեկացնէին, թէ երկու ուսւս զրազէտներ ձերբակալուած էին, արտասահման զըրկած ըլլալուն համար, իրենց զրուութիւններէն ոմանք եւ կեղծ անունով հըրատարակած ըլլալուն այնտեղ: Հեղինակներն էին Անտրէ Մինիազի, որ Ապրահամ Թէրց անունով գրած էր, եւ Իւրի Տանիէլ:

Ապրահամ Թէրց, կամ Անտրէյ Մինիազի, «Նովի Միք» զրական ամսագրի գրական թնտղատներէն մին էր, Պորիս Փասթէրնաքի բարեկամներէն: Ապրահամ Թէրց կեղծանունին տակ՝ Սովետական Ռուսաստանէն դուրս զըրկած ու հրատարակած էր «Դատը կը սկսի», «Ընկերակարական իրապաշտութիւնը» (*) եւ «Սատոյցի կտորը» գրութիւնները:

Իւրի Տանիէլ, Նիքոլա Արզաք ստորագրութեամբ գրած էր իր գրութիւնները:

Երկուքն ալ սովետական առօրեայ կեանքի մթնոլորտը կը ներկայացնէին իր ո՛չ վարդազոյն գոյներով:

1965 Նոյեմբեր 9-ին, յայտնի կ'ըլլար, որ զրազէտները պիտի դատուէին «Հակասովետական գործունէութիւն» ամբաստանութեամբ:

Մանօթ է ընթերցողներուն դատաւարութիւնը, եւ տասը տարուայ բանտարկութեան դատապարտութիւնը, որ կը տրուէր ըստ դատարանին ոչ թէ իրենց գրածներու պարունակութեան համար, այլ սովետական օրէնքով արգիւտուած ըլլալուն արտասահման զաղանօրէն գրութիւններ զրկելը:

Ինչպէս ամէն Հողին մէջ, այնպէս ալ սովետական Հողին մէջ, մեռելները կը դառնան շունչ, կը դառնան կեանք: Ա-

(*) Տես, «Բագին», 1966, Ապրիլ եւ Մայիս:

նոնցմէ ճառագայթող ջերմութիւնն է, որ կը տաքցնէ Հողը, կը Հալեցնէ սառոյցը, ու արեւին կը բերէ ծիւ մը, ծաղիկ մը: Այդպէս է մանաւանդ, երբ մեռնողները մարդկային ջերմութիւնը ունին իրենց սրտին մէջ, եւ ըմբոստացումը՝ անմարդկայինին զէմ:

Մայակովաքի, Թոյլթոյ, Փասթէրնաք, Ջարենց Հողին տակ շնն այլեւս ծաղկած են անոնք, Հարեւաւորներու, Հազարաւորներու սրտերուն մէջ ու կը պատգամեն, ինչպէս Ջարենց կը պատգամէր:

«Ձի՛ շղթայուի մարդու ոգին ո՛չ մի կապով արտաքին, Եթէ դարի, ժամանակի գրան առնի իր կագին: Կը բարձրանայ ու կը կանգնի նա հաւատով անտառն եւ կը մնայ գալիք կեանքում՝ անխորտակ ու անագին»
Ո՛չ, չի՛ շղթայուիր մարդու ոգին:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ.

(Շար. 5 եւ վերջ)

ԱՂԲԻՒՐՆԵՐ

- 1.- Է. Եւտուշէնկօ «Կանխահաս կենսագրական», հրատարակութիւն Ժիւլիաք (Փարիզ):
- 2.- Լոնտոն Թայմզի «Լիթերերի Սըվիլեմք» յուելուածական հրատարակութեան 30 Ապրիլ 1964-ի, 18 Մարտ 1965-ի եւ 28 Ապրիլ 1966-ի թիւերը:
- 3.- «Սըրվէյ» անդէրէն պարբերաթերթը, որ սովետական կեանքին նուէրուած է եւ ունի բացառիկ թիւ, միմիայն զրական շարժումներուն յատկացուած:
- 4.- «Էսփրի» պարբերաթերթի 1964-ի 7-րդ թիւը եւ 1965-ի 6-րդ թիւը:
- 5.- «Լէ Թան Մատերմ» պարբերաթերթի 1964-ի Հոկտեմբերի թիւը:
- 6.- «Գրական Թերթ»էն դանազան թիւեր, ինչպէս նաեւ այլ պարբերաթերթեր եւ օրաթերթեր:

Կոմարներ

ԽՕՍԳ ԺՈՂՈՎՐԴԻՍ

(ՖԻԼԱՎՄԵՆՏՆԵՐ)

Որանի էին փրկութեան կի՛ք
 Քո հերոսները՝ որդոց որդի,
 Եւ այն մե՛ծ էինք ու միայն մե՛նք՝
 Որ իյած մի նար, հօգը մարտի,
 Մեր Հայաստանին բերեցինք կեանք,
 Ու դու՛րս քաջեցինք ռախ տակից,
 Երբ լուս մեռնում էր պատերի տակ
 Գողթական դարձած ողջ մի երկիր...
 Իմ Հայաստանը, խոցուած անկերք
 Տէրերից օտար եւ սեփական,
 Ծաղոյնի տակ դաշնակցական՝
 Մուստուած երե՛ք տէրերի մէջ,
 Աւերիկեան իսկի յարք հագած,
 Արիւծի խոսքած կաթով ծայած,
 Աւիւծի համար բրիտանական
 Մէկ անգամայ կեր հագի՛ւ հաշուած,
 Թուրք կիսադուսնի թրով մարթուած
 Ու հագա՛ր անգամ խեղդուած, խարուած

Եւ դրա՛ համար, դրա՛ համար,
 Երբ քո նախնուած, խանութեան հողին
 Իցու անձրե՛ւը Նայերերին,
 Եւ պարզեց սեռեր իր փրկութեան
 Քեզ, քո ներկային, քո անցեալին
 Նա՛ ծիածանը Հակոբերեանի, -
 Դու, ի՛մ ժողովուրդ, ինչպէս տարով
 Մարուած հողի է ընդունում ջուր,
 Խոր ներծծելով նրան իր բիւր
 Մակտիկներով, արմատներով, -
 Ճիշդ այնպէս էլ դու՛ ընդունեցիր
 Քո ողջ էութեա՛մը, հոգո՛վ, մարմնո՛վ
 Իշխանութիւնը՝ դեռ նոր յառնալ,
 Որ հիւ՛նքից շրջե՛ց աշխարհն անձիր...

(«Բարի Նրթ», 1957, էջ 314)

ՀՈՎՈՒՆ ԲԵՐԱԾԸ

Պոյ՛ր սխեմային որում քա-
 նասեղծական երկու հասուած-
 ները, ստանա՛նք մը առաջ,
 մեր լն-րդ էջին վրայ գոյս ըն-
 Եայած շեօս՝ ժողովարկեան զե-
 րուածին առաջին եւ վերջին
 ժամերը կը կազմեն: Յիշուե-
 ցաւ, որ ՎՍՍԲ կայարաններ
 (1936) ժողովածուէն դուրս չը-
 պրտուած են անոնք, ու, ինչ-
 պէս պիտի հաստատէ ընթերցու-
 մը, զանազան նաւարու՛մը յան-
 լում բերած է բանաստեղծութեան
 սրահին: Այս բանաստեղծու-
 թեան ճշմարտութեան կը զան-
 էին նաեւ հասեցեալ սողորդ,
 որոնք, իրենց կարգին, ենթադ-
 րուած են մէկտարին սրբոր
 տեսեստեղծում:

Բայց եւ ձեզ եմ յիշում մայր,
 Գեզ, ճրուսե՛ն ննգալ,
 Ինչ, գառնած Ձերչի,
 Որ նշան է՛ք յանի

Վե՛ր սրբորից վերին
 Ի՞նչու կամեցան այս լոյս
 մանկան վրայ:

Այս նոյն բանաստեղծութեան
 նա՛յն այս անձեւ ու անորին
 ժառանգու զմեարկելով, օրին,
 ՎՍԻճարեքոյ տարեգրքը հարց
 կու տար. ՎՊՍՍՍ տարի բանաս-
 տեղծութեան գրած ա. բառատու-
 թին հասնող բանաստեղծի մի
 վայել վերջապէս ի՛նչ մտածու՛մ,
 ի՛նչ տարու՛մ, ի՛նչ խորնար-
 կայ վերին տողերում մէջ, որ
 յանու՛մ բանաստեղծութեան խո-
 նարեղինք մեր գլուխները:

Ոչինչ կար ու օրին մտց:
 Իր այս մկրտութեանը՛
 Միլիոն Գապտուկեան կը հաս-
 տատէ մեր երկնուան սրբաշու-
 թիւնը ու հովուի բերած անար-
 ժեքը, անհեթեթը, հովուի բուր-
 բերածները հովուի կու տայ:...

ԱՐԴԱՐ ԸՆԴՎՁՈՒԾ ՄԸ...

Ընթացիկ տարուան ամենէն աղակիւի գերքը, անտարակոյս, Գուրգէն Մահարիի «Այրուող Այգեատաններ»ը եղաւ: Կենսատու աղտուկ մը չէր, ի նպաստ գրագէտին չէր, յարուցուած աղմուկին պատճառը գործին խոցելութիւնն էր:

«Այրուող Այգեատաններ»ը կ'ընդգրկէ Սահմանադրական շրջանին վանի ներկայացուցած կեանքը, տարիւնան հերոսամարտը, թողթանակը, յողթանակին յաջորդող կարճատեւ ազատութիւնը եւ գողթը:

Այս գէպքերուն հետ, ինչպէս ծանօթ է, հնդկական ներկայացուցած է նաև գլխաւոր գերակատարները՝ Արամը, Իշխանը, Վրամեանը, Արմեանակ եկարեանը, Կայծակ Առաքելը, Պուլարացի Գրիգորը եւ վաճառական դասէն վերջուած շարք մը կատաղի պահպանողականներ:

Մահարին չէ կրցած պահել դրագէտի շէգըութիւն կոչուած էական պայմանը եւ սանձարձակ կամայականութեամբ մը մեկնաբանած է գէպքերը, մարդոց արարքները, միջոցառումը, հանդամանքները, յանդիմով բարոյի վերաւորական արդիւնքի մը: Այս կամայականութիւնը պատճառ դարձաւ, որ ընդգրկուէ ըլլայ համատարած:

«Քաղցին»ի նախորդ թիւով մենք տուինք այդ խնդրին գերաբեւոյ Հայաստանի դրոշմներու քարտեզաբանութեան գիտողութիւնը, սօր Մահարին

«Ոչ բնորոշ յատկանիշներով է օժտուի վէպի կերպարներին. դրամով իսկ վիրաւորելով հայ ժողովրդի արժանապատուութիւնը»:

Փարսուղարութիւնը կը դանդաղ տակաւին, որ «Այրուող Այգեատաններ»ուն մէջ՝

«Պատմական քաղուս դէպքեր ենթարկուել են կամայական, անբարեխիղճ մեկնաբանութիւններ: Վէպում առաւ տեղ եմ գտել անհաշիւ քամաքամներ ու երգներ, անպատշաճ սրբաբանութիւններ, չարաքարացուող գաւեշտ»:

Գրողներու քարտեզաբանութեան այս գիտողութիւնները ընդ տեսած էին «Վրամեան Թերթ»ի 19 Մայիսի թիւին մէջ, իսկ «Արմենիտ» օրաթերթի քաղած մէկ լուրէն կը տեղեկանանք, որ

«Մայիս 17-ին, Պետական Համալսարանի մէջ հաստատուած անլիք քանակութեամբ մտաւարականներ, երեկոյեան ժամը 7-էն մինչև 11,30, քննուած են գրախոյրը Մահարիի եւ եկած այն եզրակացութեան, որ պատմական խնդարներումներով լի գարծ մըն է տրուածը, որմէ ներկայիս կ'աշխատի օգտուի մեր քշմամին, զենք դարձնելով իր յայտարարութիւնները հայութեան դէմ»:

Մայիս 17-ի ժողովին եզրակացութիւնը եղած է, հաւաքել սպառած բոլոր «Այրուող Այգեատաններ»ը եւ խորոյկի յանձնելը:

Մենք, ինչ խօսք, գէտ ենք այս եզրակացութեան ու եզրակացիչ գիտարկին: Մահարին ունի իր կուսակցամոլութիւնն ու կողմնակալութիւնն զգրած մնացած առանձին ու գեղեցիկ էջեր, որոնց աւթով ճիշդ չէ ու խղճի գէտ է խորոյկահանդէսներ սարքելու որոշումը: Այրուող ժառանգ շատ կան «Այրուող Այգեատաններ»ուն մէջ: Փորձենք մի քանի նմոյշներ տալ այրուողի մասերէն:

ՄԵՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ ԵՒ ՈՉ

ՄԵՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

Ի բնութենէ շնորհուած խմորը մեծութեան առաջին պայմաններէն է անշուշտ, բայց բնատուր շնորհքին հետ ենթակային ունեցած վարժունքէն շատ քան կախում ունի: Ըսել կ'ուզենք, որ մեծէքը իրենց արիւնին հետ բերած մեծութեան տուրքերով չեն անած սխայն, իրենց անկեղծութիւնը բաժին ունեցած է անժան ընթացքին մէջ:

Հետուն չէրթանք: Մեր մաքին մէջ մեծ բանաստեղծը Չարենցն է եւ ոչ մեծ բանաստեղծը՝ Մահարին:

Չարենց իր խառնուածքին ենթակայ բանաստեղծն էր, ինքն իրմէ ձերբազատուիլ զիտէր, զիտէր այլակերպիլ ու իր յափշտակութեան մէջ հաշիւ չէր կրնար խառնել:

Մահարին, ընդհակառակն, ինքն իր անձէն ու այդ անձին մէջ բոյն դրած կիրքերուն ենթակայ եղաւ միշտ եւ բնաւ չկրցաւ հայ մարդու մը պարզութեամբ ու անհուստութեամբ մտնելու մեր պատմութեան վերջին զէպերուն ու զէպերը վարող անձերուն:

Չարենց եւ Մահարին: Մեծը եւ ոչ մեծը: Ու հասակներուն տարբերութեան պատճառներէն մէկը —

Հայոց պատմութիւնը, վերջին դարուն, ունեցաւ մեծապայծառ դէմք մը, Քրիստափոր Միքայէլեան, որ արիւնարբու սուլթանէն միանգամայն ազատելու համար արիւնաքամ իր ժողովուրդը, մարդակերը զժողովին կեր դարձնող շքեղ տեսիլք մը ունեցաւ, «զժողովի հանճարին դիմելով» ուխտե՛ր ըրաւ եւ գլուխը վարձուց զզժովի մի գոռ մեքենայ, բայց, դժբախտ փորձի ժամանակ արքայից հետու նա պայթեց: Եղիշէ Չարենց այդ յոացումը եւ անոր կապուած պարագաները ջերթուածի նիւթ դարձուց եւ կտակեց մեզի իր ժողովուրդին վերջերով սաղուած մարդու մը վսեմ բարախումը:

Կեանքին հանդէպ, ազգին հանդէպ, կատարուած զոհողութիւններուն հանդէպ ուրիշ էր Չարենցին կեցուածքը, վերաբերումը, արդարութիւնը: Մեծութիւն մը ըստ ինքեան կռուի գիտէր Չարենց, կատարուածին արժէքը գնահատելի գիտէր ու քանկատար մնացած ուխտին խռովքը անտարբեր չէր կրնար ձգել իր անարատ էութիւնը: Պարագան նոյնը եղաւ Քրիստափորը զիւցաներգելու իր յորդ արամագրութեան առիթով եւս:

Կու տանք Չարենցի այդ ջերթուածին վերջին մասը, զիմացի էջին:

Ահաւասիկ նաեւ նոյն հարցին վերաբերող Մահարիին տողերը —

«Գործի վերջը Երեւան գործի սկզբում, երբ իրենց նախահայրն ա' մեծ առաջնորդը, մի ռուսի պատրաստեց, դժոխային մի մեքենայ, որը պիտի արձայնում սուրբան Համիդին դժոխք ազարկէր: Պայթեց ռուսըր, եւ փոխանակ սուրբանին դժոխք տանելու, իրեն տարաւ, ըստ բալոր պեմ-դումներին դրայտ: Անվթար մնաց արնոտ սուրբանն իր գառի վրայ, նրա փոխարէն կտոր-կտոր, ծուրկ-ծուրկ եղաւ դժոխային գործերի առաջնորդն ու մասնագէտը... Այս սիտի ըլլար իրենց գործի վերջը, նաեւ իրենց գործի վերջը:

«Այս պիտի ըլլար»: Բայց սրբազան մեռելներուն դիմաց՝ ա՛յս պիտի ըլլար հայ գրագէտի մը գրութեանումը, այս քրքի՛նը պիտի ըլլար, այս փառութիւնը, այս բթութիւնը:

Մեծագործակցութիւնները մեծարող մեծ ոգին կը թեւաւորէ տա-զանդը, փոքրորդութիւնը թեւաբեկ կ'ընէ անպամ թռչելու ընդունակները...»

ՄԱՀՈՒԱՆ ՏԻՍԻԿ

(ՀԱՏՈՒԱԾ)

Այսպիսի քնիչքով հատու ծասացաւ երբ նա մեր առաջ –
 Ոկրքում տեսանք մե՛նք միայն սպառի եւ մսի մի կոյտ.
 Կարծես մէկը առել էր մի խուրձ սպարներ եւ խառնել էր իրար,
 Իսկ յետոյ – իրարու կապել, խառնելով ազդրեր ու գլուխ:

Երբ մի քիչ երկար նայեցինք սկզբի ու մսի այդ կոյտին –
 Տեսանք, որ կմախք է դա մի՛ գլխի տեղ – երկաթեայ մեքենայ,
 Զեռները տեղերից պակած, գլուխը հագցրած ոտին,
 Իսկ սրտի փոխարէն – կրծքում պոզպատեայ զսպանակ դրած:

Ներքեւից, ճախ ոտի մօտից, գլուխը նայում էր վերեւ.
 Աչքերից շանքեր թափելով, ատամները բռնելով իրար.
 Ի՞նչ ոտի մտոներով մի պահ նա գունատ նակարը բերեց –
 Եւ այսպէս նա խօսեց՝ ներքեւից ցատու՛մով նայելով մեր վրայ.

– «Ո՛վ դուք, որ մտել էք ահա այս մոռյլ անտառը Ահի, –
 «Նայեցէ՛ք հասնել կմախքիս եւ գլխիս՝ պոկուած իր տեղից. –
 «Աշխարհում որո՞նում էի ես խօսեր կոտի ու մանի,
 «Եւ գլխի փոխարէն ունէի մեքենայ՝ շինուած թիթեղից: –

«Ես սրտի փոխարէն ունէի իմ կրծքում պոզպատ զսպանակ,
 «Անծանօթ էր կեանքում ինձ համար ամենայն վարանում ու ան.
 «Մեր երկրի արի այրերից կազմեցի ես մե՛ծ մի բանակ,
 «Եւ մեր սեւ դրօշի վրայ գրեցի «Հայրենիք կամ Մահ»:

«Գնացին նոքա, այդ արի զինուորները, երկիրն Աւետեաց,
 «Տիրում էր այնտեղ բանութիւն, ե՛ւ ռնիլ, ե՛ւ կեանք անագաւ.
 «Գնացին նոքա՝ սրբելու մեր շէմքից նախտինք ու լաց,
 «Բայց երկիրն արեամբ ողորկեց տագնապած Արքան այն գագան:

«Հանելով բարբարոս հարշաներ – նա բանդեց մեր շէները բոլոր,
 «Մեր մանկանց արեա՛մբ արբեցաւ՝ թափուած որջում արժունի, –
 «Եւ ահա վրէժով լցուած, դժոխքի հանճարին դիմելով,
 «Ուխտեցի բնայլ մի բաժակ բռնակալ Արքայի արիւնից:

«Ես գլուխ դարձրի այնժամ դժոխքի մի գոռ մեքենայ,
 «Բայց, դժբախտ վարձի ժամանակ, Արքայից հեռու նա պայթեց, –
 «Եւ խփեց – խորտակեց նա ինձ... Իսկ Արքան կենդանի մնաց,
 «Եւ իբրեւ դելի սրիտուր, նախնիրներ նիւթեց ու ջարդեր...»

«Եւ մնա՛ց նա կենդանի... կենդանի՛ր՝ նա մնաց... վա՛յ ինձ...
 «Աշխարհից հեռացայ ես այսպէս՝ իմ ուխտը թողած անկատար...
 «Եւ ո՛չ մի կարիլ չիմած արիւնից այն ճրէշ–Արքայի՛
 «Ես կեանքից ընդմիշտ հեռացայ... Եւ չունե՛մ հանգիստ ու դադար»:

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

« ՀԱՅՈՒՅ ՄԱՅՐԵՐ, ՎԱՅՈՒՅ ՄԱՅՐԵՐ » ...

Յեղափոխութիւնը իր ընթացքին մէջ մի քանի յանցանորներ պատ-
ժեց եւ Մահարին ի նպաստ յանցանորներուն կսկծաց շարունակ եւ անա-
բար դատապարտեց յեղափոխութիւնը: Մահարին նոյնիսկ պատուական
արկածները վերադրեց յեղափոխական բռունցքին եւ այդ թիւրիմացու-
թիւնը ստեղծեց մէջը բարպոյթ մը, որուն ճշումին սակ ապրեցաւ ամբողջ
յիսուն տարի: Մանրամասնութիւնը անձնական է, այսինքն հետաքրքրա-
կան չէ:

Բայց եթէ ներքի է անձնական պարագաներուն հետ կապուած թիւ-
րիմացութիւնը, ներքի չէ սակայն վսեմ կեցուածքները խեղաթիւրեալ ձե-
ւով ընդհանրացնելու եւ ողբալու մոլութիւնը, որ ի վէպս եւ յանդէպս կը
կիրարկուի «Այրուող Այգեատաններուն» մէջ: Մահարիի խեղաթիւրումնե-
րուն ենթարկուած երեսօթներէն մէկը հայ մօր կերպարն է: Այսպէս.

«Արիւնով սկեցցին իրենց գործը, իսկ արիւնով սկսած գործը միայն
արիւնով կը վերջանայ: Կային ոսկովիքաներ, կային գործիչներ՝ Աւետիս-
եան, Պետո, Մարտիկ, բայց նրանք երբեք ձեռք չբարձրացրին հայի վրայ:
Ո՞վ կը մտածայ 1896 թուականը, Յունիսի երեքը, օրն Երկուշաբթի: Ո՞վ
կը մտածայ Սեմերճեան եօթ եղբայրների մահատակութիւնը: Իսկ նրանց,
եօթ կորին եղբայրներին, մի հայ մայր էլ ծնել: Հայրն՝ մայրեր, վայր՝
մայրեր...»:

Այս շնորհ մարերը, վայր մայրերն ու անիթով մէկ անգամ միայն
չէ վայած Մահարի, վայած է քանի մը անգամ, լուխույն ան. դիմ քաշե-
լով հայ մայրը աշխարհի մայրերէն գանազանող հական յոկանիչներուն
վրայ:

Ահա Մահարիի վայրցներէն վայ մը եւս.
«Մայրեր են ծնել նրանց եւ նրանց օրորոցի վրայ օրորոցի երգեր են
երգել. խեղճ մայրեր, որոնք իրենց որդիների մէջ տեսել են հայրենի տան
ապագայ սիւները, ծախշեալ հայրենական օջախի: Ու երբ եկել է այդ ապա-
գան, նրանք, այդ որդիները, թողիլ են տուն եւ օջախ, գնացել են մութ
մի աշխարհ նրան զգալափարներ» հասցնելու, բողած մայրերին արցունք-
ների մէջ... Մայրեր, խեղճ մայրեր»:

Բայց մեր մայրերը Մահարիին ներկայացուցած ողբերգական կեն-
դանիները չէին, իրենց գաւակներուն հանդէպ տածած սէրէն աւելի խո-
րունկ սէրեր ապրող հակներ հղած են անոնք բոլոր զարեւուն. յեղափո-
խական փոթորիկաւ օրհրուն թէ խաղալութեան փորձութիւններուն մէջ,
հայ մայրերը զոհողութիւններուն գեղազոյնը յանձն տուած են այն զգա-
ցումին առջեւ, որ հայրենիքի սէր կը կոչուի, ցկզկային արժանապատու-
թիւն կը կոչուի, կ՛անըքն մէջ աստուածային բաներ հաստատող կամք կը
կոչուի:

Տուեալ ժամանակաշրջանին մէջ, զարմեալ, տարբեր պահ մը կ'ապ-
րէր հայ մայրը, տարբեր հոգեբանութիւն մը կ'ապրէր, Մահարիին ողբով
ներկայացուած խեղճութիւնը չէր, Վարուժանով ներկայացուած ըմբոս-
տութիւնը էր հաւանարար, թուրք լուկուսէ մը վէրք ստացած գաւազը ներս
չընդունող պոթկուսէ, ան՝ որ աչքին մէջ հեռ ու մէջըր փայլա ունեցող
Ալիէն ահաբեկ որդւոյն պիտի պտտար՝

- Իսկ դու՞ն ալ հայ ես, եւ մէջդ ըլլայ
Թող իմ մկրտոս, իլս, ի՛նչ որ կ'ազնու... դաբս: -

Այս մէկը Վարուժանին ներկայացուցած հայ մայրն է, կայ նաև ա-
նահուն բանաստեղծին, Վարդուրդին ներկայացուցածը, Ֆետայիին կտե-
ւէն սմբողջ թոքերով պոստոցող եւ տմբողջ ցեղին ապրումը դրսևեարող
մայրը:

Այ Ֆետայիներ, ջան Ֆետայիներ,
Ձեզ հետ տարէք իմ տղէն,
Ձեզ հետ ապրի, ձեզ հետ կտուի,
Ազգին մատաղ իմ տղէն:

Մահաբին փոխանակ մեր ցուին, մեր խոցուած արժանապատուու-
թեան ու անհաւարուած իրաւունքներուն մէջ, մէջէ՛ն դիտելու հայ մայրը
եւ մեր պայքարներուն անոր բերած շոնդայից մասնակցութիւնը դիցազ-
ներդելու, սովորական արարածի մը վերածած է զայն եւ անսովոր դեղեց-
կութիւններու անհաղորդ անձի մը պարզունակութեամբ կ'ողորայ՝ «Հայոց
մայրեր, վա՛ր՛ց մայրեր...»:

Ուրիշ խնդիր մը, կամ երկու խնդիր նոյն ատեն -

Մահաբին զանհաշիս բամբուսանքներու ենթարկած է Արամը եւ,
ինչպէս անահեք, ողբալի արարածի մը վերածած է հայ մայրը: Տանք պատ-
մութիւնէն ուրիշ օրինակ մը, ուր միտամանակ կ'երեսայ մէկուն ուժը եւ
միւսին զոհարելութեան անասնանի կամքը:

ԹՅՌ-ի ճարտարագրական օրերուն, Երեւանի թատրոնի լէնին մէջ,
հսկայ քաղաքութեան մը նեղակաթութեան՝ Արամ ճառ մը կը խօսի եւ ականա-
տես մը կը նկարագրէ պատր, խոսողը, ունկնդիրը:

«Բնութիւն վրայ, ձեռքերը շարժելով եւ առիւծի բաշղախը քայտահա-
րելով, կը խօսի Արամը: Անոր յազթ մարմինը վնասեամ իջկերով կը
չափշփէ բնութիւն փոքրիկ տարածութիւնը. դառնիք կը լսէ խոսք լուսութեան
մէջ: Հոնտարական կարգութեան գուրկ այդ մարդը, իր անկեղծութեամբ
եւ երկարաժամ տրամաբանութեամբ կայսրդած էր թուրքը: Արամին ան-
դորբանքիանը երբեմն կը խամզարուէր այս ու այն անկիւնէն պաշկազդ
հեղեղանքներով:

Պարզ էր Արամի լեզուն եւ միտքը՝ յստակ: Ժողովուրդին հասկնայի
դարձուածքներով. կատարեալ մերկութեամբ, մերկայացուց զատն իրա-
կանութիւնը:

- «Եթէ հայ մայրերը շոհարերն էրենց զաւակները, կորուած է
բոլորիս թէ կ'անջը եւ թէ պատիւը. հասած է ժամը, երբ հայ կինը պէտք
է դէպ իր կողման բարձրութիւնը եւ կատարէ իր սուբը պարտականու-
թիւնը»:

Արամի կողմ անարձագանգ չմնաց: Բեմ կը բարձրանայ այնտեղ պա-
նու մը եւ խօսքը ազդելով Արամին՝ կը քաջագոյնէ հեծեծագին:

- «Երեք գուակ ունեմ, երեքն ալ հայրենիքին մատաղ. ցաւում եմ
որ անկիւն չունեմ»:

Այսպէս էր այն ատեն մեր փեսանքը, զանհաշիս բամբուսանքներու
ենթարկուած այս մարդուն ճմաբն էր ախրապետողը, ողբալի արարածի
մը վերածուած հայ մօր գուհարութեան շոնդութիւնն էր որէնքը, երկու
այս ներկայացուցչական ախարներուն միացեալ ճիւղերուն արդէնքն էր
Հայաստանը, ուր, այսօր, խղճի կոտորակալ հանգստութեամբ, մէկուն
աստուածային կամքը կ'ուրանայ Մահաբի, միւսին աստուածային լքնա-
յարբումը կ'ուրանայ եւ անվերջ կը վայէ...

ԿԸ ՄԵՌՆԵՄ, ՄԻԱՅՆ ԹԷ... []

Նկարագրելով իր կրտսեր տիպարներէն մէկը, մակերեսներէ ընթացող իր որդեգրած նոր սեռով՝ Մահարին կը խորհրդածէ.

Նրա դէմքն այսօր այնքան ոգեշնչուած է, որ քուտ է, քէ ուր որ է, պիտի կանգնի, ձեռները խաչաձևի կրծքին եւ արտասամի.

Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ...

Մահի, մեռնելու այս տարօրինակ պրոպագանդը. կարծես մարդիկ նետուել են մեծ գործի ոչ թէ մյա համար, որ սպրնեմ պայծառ, լիարժէք կեանքով, այլ որպէսզի մեռնեմ, անպայման մեռնեմ, այլապէս, առանց մեռնելու ի՞նչ յեղափոխութիւն... Չէ, պէտք է բարձր լինի յեղափոխական սգու ջերմաստիճանը, զոմէ առնուագն... Թափուղ արեան ջերմութեան համաչափ:

Հայրենիքի, ազգի, մարդկային տարրական իրաւունքներու ի խնդր մահը արհամարհող կորիճները հեզնող հոգեկան այս այլասերումը աւելի արդար բնորոշումով ներկայացնելու համար՝ վճռական բառեր չեն պակասիր հարկաւ, բայց գրապէտին հանդէպ ունեցած մեր յարգանքի վերջին փշրանքը կ'արդիւնէ մեղի բերա ըլլալու ամէն մղում:

Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ...

Մարդիկ երգելով կ'ուզէին մեռնիլ, որովհետեւ ապրելով չէին կըրնար երգել, մեռնիլը պայման էր գրեթէ: Սիւսմանթոյի կուռի հանած մարդերը, կամ աւելի ճիշդը Սիւսմանթոն իրենց Լահուէն քաջքող ընտիրները հարսանիքի չէին երթար, անհասարակ կուռներ մզելու կ'երթային, ու կ'երթային ազամարդու պէս, իրենց տրդարութիւնը պոռայէն, երգելէն, երգելով կ'ուզէին մեռնիլ, որպէսզի, ո՛վ գիտէ, երգը իր թեւերուն առնէր Հոգիներուն կրակը եւ զայն նետէր ուրիշներու սրտերուն, դառնար կտակ, զուգրեման հաղորդութիւն, ծաւալէր, յարուցանէր արժանապատուութեան թաղուած զգացումը եւ լուսաւորէր մոռցուած հայրենիքին դէմքը:

Մահարի այս հեռանկարը անտեսելով, կը շարունակէ.

Այնքան մեծ է այս անպայման մեռնելու, անպայման նահատակութեան մտայնութիւնը, որ մարդիկ անկարող են քարզ տալ մեռնելու սովորութեանը, մինչեւ անգամ այն դէպքում, երբ նրանք արդէն հասել են իրենց Ապստակին, այսինքն՝ երբ արդէն պէտք է ոչ թէ մեռնիլ, այլ ապրիլ, երբ այնչափ կարիք չկայ այն ու վայն սնելու Հայաստանի համար: Իսկ յեղափոխութիւնը, յեղափոխութիւնը... չէ՞ որ այդպիսով կը վերջանայ յեղափոխութիւնը...

Ու երգում են այսպիսի երգեր.

*Նպատակիս հասնեմ միայն,
Թող գիտ հանեն կախազան,
Կախազանից խեղճուկ ձայնով
Պիտի գոչեմ — ձկն, Հայաստան...»:*

Ինչ ահաւոր սովորութիւն, մեռնելու սովորութիւնը: Ազատութիւն ձեռք բերելուց յետոյ էլ մարդիկ պատրաստ են կախազան բարձրանալ, որպէսզի հնարաւորութիւն ունենան կախազանի բարձունքից զոչելու «Այս, Հայաստան»:

Բանաստեղծ մը իրաւունք ունի՞ր տրդեօք ժողովրդական երգի մը ուղին անտեսել եւ տառին հետ աշուխի կատակներ ընել: Երգը, պարզ է, երգում մը կը բովանդակէ ու երգումին այդ տեսակը անծանօթ չէ նոյնիսկ սովորական մարդոց: Մարդու մը նպատակը կրնայ աւարտիլ զայն կենսագործած վայրկեանին իսկ, իսկ յիշատակական մթնոլորտի մը մէջ հայրենիքի փրկութիւնը նպատակ ըրած մարդը իր կեանքին մասին չի մտածեր այլեւս, ապրիլը կը ձգէ ուրիշներուն, անոնց՝ որոնց համար ճամբայ ելած էր: Ձահողութիւնը այսպէս կ'ըմբռնուի, մեծերը այս ըմբռնումով նետօրին իրենք զիրենք կրակներու մէջ, բարձրացան կախաղան:

Բանաստեղծներուն, ի հարկէ, չխաթարուածներուն, անծանօթ չէ այս ըմբռնումը եւ ապրումին վսեմ մարդկայնութիւնը: Ձիւննք այդ աղերակական խոսնուածքով օժտուած բոլոր բանաստեղծներուն անունները, շիշինք նոյնպէս դաղափարական տարբեր համոզումներու տէր բանաստեղծներուն կտակները, յիշինք կոմունիստական կաթով սնածներէն երկուքը միայն, Մահարիին շատ ծանօթները՝ Եղիշէ Պարենցը կրկին եւ Հասօ Մահեանը:

Եղիշէ Պարենց իր կարօտով, երգիչի երազներով ձև նայիրեան իմ կրօնի վերջին սիրով՝ դեռ 1920-ին կը ներկայանար կախաղանին առջեւ ու լուսապայծառ անօրիջ մը հաստատող մարտիրոսի մը լուսալուծեամբ կ'ընէր:

Թո՛ղ ոչ մի գոն չպահանջուի ինձնից բացի,
Ուրիշ աստիք կախաղանին քող տօտ չգամ.
Եւ քող տեսնեմ իմ աչիքի մէջ կայտուածի
Իմ ո՛րք երկիր, լուսապսակ քո ապագամ:

Իրենց կեանքը ընծայարեբերով՝ ուրիշներուն լուսապսակ ապագաներ կերտողներ, այո՛, շատ կան եւ կեանքին բովանդակութիւն տուող մարդերը ասոնք են եւ ոչ թէ զոհողութիւնները մատի փաթեթոց դարձնող սման, ատանադոյն լեզուախաղերը:

Ահա եւ ճնայիրեան դարպա բարդիքին առջեւ եւ բարդիքին դարբուրեան համար քանդակուած Համօ Մահեանի կամքը.

Ես երգիչ հրի, սրի, շահ չունեմ քո սիրուց գառ,
Քեզ նման կամայ կեանքով, քեզ խամար ելած մարտի,
Կը մեռնեմ, միայն թէ դու դարբնում ազատ խշշաս,
Իմ հեռու, հեռու՛, հեռու, նայիրեան դալար քարդի:

Մահ իմացեալ անմահութիւն է, ըսաւ հեռուոր Եղիշէն ու կուրի ելաւ. մահ իմացեալ անմահութիւն է, ըսաւ մերձաւոր Եղիշէն ու կախաղանին մօտեցաւ, մահ իմացեալ անմահութիւն է, ըսաւ անոնց ոգիին ժառանգորդը ու ճկեանքից թանկ բանը՝ իր կեանքով փրկելու համար՝ չփարսնեցաւ ըսել:

Կը մեռնեմ, միայն թէ դու դարբնում ազատ խշշաս:
Մեր պատմութեան էջերէն կարմիր թելի պէս անցնող այս ոգին գընահատելու իմաստութեան փոխարէն՝ թող ներուի ըսել, իմաստականութիւն մը կը զարգացնէ Մահարի եւ հասարակ խորհրդածութիւններով կտակ կը կազմէ:

Բարեբախտաբար Մահարիի նմանները շատ չեն մեր պատմութեան, մեր իրականութեան ու գրականութեան մէջ:

«ԱՄԿԱՎԱՐՆԵՐԸ ՀԻՄՆ ԶՈՒՆԷԻՆ, ԱՆՀԻՄՆ ԷԻՆ»

Ռամկավարներուն «Հիմն» շունենալու եւ «անհիմն» ըլլալու մահա-
րեակուն այս հիմնադրումին մասին տեղամ մը գրուեցաւ թէեւ, բայց բու-
սաբանքը սարմազ խողարհուին ղէմքին նոր լոյս սփռելու մասանիչ հանդա-
մանք մը ունի անիկա, ունի նոյնպէս անհամոյ հետեւանքներու առիթ տը-
ւող մեր փութկոտութիւնը բացայտող խորք մը, ու ճիշդ այդ պատճառ-
ներուն համար կ'ուզենք «Բաղին» ընթերցողներուն հետ ներկայացնել
իմպրո:

Այսպէս...-

«Յիսնամեակի ուարտին», քաղաքիս «Զարթօնք» որսթերթը խոն-
բու ընդարձակ շարք մը արձանագրեց եւ «Այրուող Այգեստաններէն» նա-
խապէս սպասած մէկ-երկու հմոյշներուն նայելով՝ անվերապա հասնու-
մասութեամբ մը գրեց.

«Հայկական Հանրապետութեան ամենէն անուանի գրագետներմ Գուր-
գէն Մանսրի պատրաստ ունի վէպ մը, որուն թիւքն է վանի Ալայիկեան
գիւցագնամարտը: Անտիպ է այս գործը, եւ անիկ շատ փառք հառաւանդանի
հրատցուեցան միայն հանրութեան. կը յուսամք, որ շատով առիթը կ'ու-
նենամք բնթշննելու զայն առանձին հատորով»:

Վէպը լոյս տեսաւ ու թէեւ յուսահատութիւնը ընդհանուր եղաւ եւ
ընդլցումը՝ Համապարտած, բայց «Զարթօնք», շինք գիտեր գիտակցաբար՝
թէ անդիտակցաբար, հաստատութիւն մտաց իր տուաջին խանդավառութեան եւ
սկսաւ իբրեւ թերթի հրատարակել «Այրուող Այգեստաններէն» ամբող-
ջութիւնը:

Արտագրեւք հատուած մը իր թերթինն.

«Ենչպէս յայտնի է ամբողջ աշխարհին, հնչակեանների հիմնը «եւ-
նաւար երկիր»ն էր, ռամկավարները հիմն չունէին, անհիմն էին, անելի
շատ՝ նրանց ունեցած հիմնը ոչ թէ հիմն էր, այլ ողբ, դա՛ «Սեպաւի մօր
երգն» էր.

Եւրալու սիրտս եարար ե՞րբ ժրի,

Ի՞մ ազիզ բալից խաբար ո՞վ բերի:

- Այդ ի՞նչ կուսակցութիւն է դրանց կուսակցութիւնը, - ասել է Ա-
րամը, - որ հիմնի փոխարէն ողբ է երգում... ողբերգական կուսակցու-
թիւն...»:

Չենք կարծեր, որ ռամկավարները նախատեսուած ախորժակով մը
ըմբռնիչներն այս դժուարամարտ բաները: Սպասելի է, սակայն, որ ջիւ
մը անելի լաւ ճանչան Մահարին:

«Ռամկավարները Հիմն չունէին» ըսելով կը վերջանար ամէն բան,
ընթերցողը կը հասկնար, որ ռամկավարները Հիմն չունէին:

Բայց «Ռամկավարները անհիմն էին» իսկող բողոքովին ուրիշ նշա-
նակութիւն մը ունի Մահարիի մտքին մէջ, թերեւս ալ ո՛չ մէկ նշանակու-
թիւն ունի, որովհետեւ Մահարին գրէն է որքան իր կերթերուն, նոյնքան
եւ սրամտութիւններու փորձութեան չկարենալ դիմանալու իր շնչուած
ակարութեան:

Բայց այս անգամ Մահարին ներկայացնելու գործը մենք կը ձգենք
ռամկավարներուն, որոնք «հիմն չունէին, անհիմն էին...»:

ԵՐԹԻՆ ԱՆԳԱՄ ԵՐԹԱՆԱՍՈՒՆ ԱՌԱԻԵԼ ՄԷԿ

«Արաքսական աստծն առում է յիմարի եօքսմուսն սյալը ներիլի է, իսկ խելօթի եւ ոչ սեղը: Սնապեանի սխալ- ները վազուց են անցել եօքսն անգամ եօքսմուսնից: Նրան յի օգնի ոչ ներիլը, ոչ էլ դատարարսիլը»:

Չակերտուած վերի տողերը կը պատկանին Հայաստանի քննադատ- ներէն Վազգէն Մնացականեանին եւ ունեւած են «Գրական թերթ»ի այս տարուայ 9 Յունիսի թիւին մէջ լրջ տեսած յօդուածէ մը, որ խորագրը- ւած է՝

«Մուռ մարդու ստուերը ուղիղ չի լինի»:

Յօդուածին ամբողջութիւնը ուղղուած է այս էջը ստորագրողին գէտ եւ առիթը մեր Հրատարակած «Ես այդ շունն եմ» գիրքն է:

Քանի մը տարի առաջ՝ նման պատկերով մը Մահարին փորձած էր ներկայացնել մեզ, իր գայրոյթը վերնագրելով՝

«Մապառուտրիմ գերեզմանն անգամ չի օւղղի»:

Մեր ընթերցողները բառ բառականին կը ճանչնան Մահարին, իսկ Վազգէն Մնացականեանին հանդիպելու երկու պատահութիւն ունեցած են միայն: Անգամ մը Պօրխ Փասթերնաքի գէտ գրած իր ծանրակշիռ յօդու- ածին առիթով, իսկ ուրիշ անգամ մը, մեր եւ Պոյաճեանին դէտ, Կ. Չար- եանի հանրայայտ գայթակղութիւնը պաշտպանած ատեն:

«Ես այդ շունն եմ»ի մասին շատ խօսած չէ Վազգէն Մնացականեան: Ետտ մտիկեան է զայն ստորագրողին դէմ: Ամէն պարագայի, մենք մեղի թոյլ չենք տար այդ մասին խօսք բանալ: Գիրքը Հրատարակ Հանուած է: ու մեր Հասկացողութեամբ, Հրատարակուած գիրք մը հեղինակէն չի պատ- կանիր այլեւս: Հեղինակ մը կրնայ միայն Հրատարակուած գործին աք- դիւնքը վայելել կամ կրել հետեւանքը: Լաւ գրուածին վայելքը, վատ գր- ւածին պատիժը:

Բայց կայ պզտիկ նրբութիւն, ի՞նչ նրբութիւն, կայ խօթութիւն մը, կայ յարաբերականութեան աղէտը: Արդարեւ, գործի մը գնահատանքը յարաբերական է այսօր, այսինքն՝ լաւին հաւատալէ առաջ՝ կարեւոր է ճանչնալ լաւ ըսողին ինքնութիւնը, վատին հաւատալէ առաջ՝ անկարելի է անտեսել վատ ըսողին շարժառիթը: Այո՛, գիրք մը գնահատելու արարքը բարաբերական է հիմա, ու իր ստացած դատարարականութեան հետեւանքով, «Անգի հետի, մեզի ղեմի» վարդապետութեան ծառայելու իր յօժարամտու- թեամբ՝ Վազգէն Մնացականեան քիչ փաստեր չէ կուտակած այդ տխուր յարաբերականութեան հաշւոյն:

Մենք գիրութեամբ ու հանութեամբ չենք գրեք այս տողերը: Բաղ- մաթիւ անդամներ խուսափած ենք Վազգէն Մնացականեանի ելոյթները թւ- շազգութեան հանելու աւանելի ստիպումներէն: Բայց, կը թուի, թէ ան- վամի մը համար անհրաժեշտ է ներկայացնել իր սխալագործութիւններէն մէկ-երկու բնորոշ ու գիմարո՛շ նմուշներ:

Իր առիթով յիշեցինք Փասթերնաքի «Տոբար ժիվիտ» եւ յիշե- ցինք Կ. Չարեանի պարագան:

Ձգենք սակայն «Տոբոբ փլվակօսն» «ծառայուն զբարտու-
թիւն» համարելու իր մտուցքը, ձգենք նոյնպէս Հեղինակին «սապատաւոր
ծերութիւն»ը թիրախ դարձնելու իր Հելտանքը ու թարմացնենք միջոցու-
թիւնները ի մասին Կ. Չարեանի գայթակղութեան, որը հնարաւորութիւն
է տակ Սնայեանին ու Պոյանեանին պայթել ձայնէն ու աչէն, ողբալ աչէն
ու ձայնէն ու հայնոյնի բոլոր կողմերէն: Իր պաշտպանողականին մէջ պի-
տի ըտէր տակաւին, որ Պոյանեանը

«Միջնադարեան անէծքի, մանաւանդ տգիտութեան երկու երկար-
տակ է արձակել գրագէտի դէմ, իսկ Սնայեանը Հիւանդութիւնը ունի»

«Եզովի այն բայր մտաւորականներին, որոնք յարգելով պատմու-
թեան երիտասարդութիւնը, ճան տարեց հասակում են ընդունակ փրկել
արւեստի պատիւը, առանց վարամուտի ձեռք բարձրացնել սեփական մտ-
լորութիւններ վրայ եւ ազ ու հացի արութեամբ մօտեմալ իր ժողովրդին»:
Ու պաշտպանողականին ամէնէն ուշագրաւ մասը.

«Ամէն ինչ, ե՛ւ հայրենիք վերադառնալը, ե՛ւ վէպի վերամշակումը.
պատկառելի գրողը կատարել է իր սրտի ու խղճի թելադրանքով»:

«Պատմութեան երիտասարդութիւնը», «արուեստի պատիւը», «այ
ու հացի սրբութիւն» եւ «սրտի ու խղճի թելադրանք»: Ընթերցողը ծա-
նօթ է Կ. Չարեանի կատարած գրական սեղանայանութեան եւ ի նպաստ ա-
նոր արտասանուած սա Հանդիսաւոր բառերուն մէջէն դժուար չէ կազմել
քննադատ վաղից Մնացականեանի չափանիշներուն ողջ եղբրականութիւնը:
Մեղաւորին ելայթներէն պղտիկ նմոյշներ մէջբերելով Հիմնաւոր-
րենք մեղաւորին բառերու անհուն եւ անյոյս այդ մտածմաները:

Կ. Չարեան, իր «Նալը լերամ վրայ» վէպին առաջին տպագրութեան
մէջ՝ մեզ շքնապատող այլամերժներուն, Հայոց Հայրենիքին, Հայ գիւղա-
ցիին ու տանիկին ակնարկելով, կ'ըսէր.

Ա.-

«Հայերը եկան. զինուեցին, կռուեցին, վերաշինեցին, բազմացան...
Գիտեմ. որ անկախ մի Հայաստան, քան տարուայ մէջ կը լինի ճախտմի
առարկայ... Գիտեմ, որ արւայի անապատները ցորենի դաշտի կը վերածի.
իր ժայռերից տաւ ու քանդակ դուրս կը բերի. իր ալքատութիւնը, երգի
ու վէպի միջոցով, բարձր մշակոյթի կը փոխի եւ իր տուած անհամար գա-
հերի ասկորներից ահաւոր գէնքեր կը պատրաստի... Գիտեմ եւ վախում
եմ...»:

Բ.-

«Այս երկիրը միշտ էլ այդպէս է եղել. մա կլլել է իր թշնամիներին,
յարմարեցրել իր պահանջներին, հայացրել նրանց»:

Գ.-

«Հարցը նրանումն է, որ հայ գիւղացու մէջ, նրա արտաքին կաշտու-
թեան հտեւ. նրա անգիտակցական խորքում, արձանագրուած են մտոր-
կային մտքի եւ բարձրագոյն հոգեկան թախչմանի բոլոր կարողութիւն-
ները»:

Դ.-

«Տանիկը, որ բարձրագոյն ուսում է ստանում՝ այլասերում է: Նա

վախում է մշակույթից, որովհետև հասկանում է, որ մշակույթը – երբ արտաքին անբավարարիչ ձև չէ – մահացու է իրեն համար: Եւ շատ հասկանալի է. մշակույթ ստեղծելու համար պէտք է կարողանալ այլափոխուել, հագնալ Վերածնունդի, քաղաքացիական, կենսական մարտիչներ տալ եւ այդ արժեքներով ապրել: Իսկ նա՛ վարժ է ֆանդելու, այրելու»:

Մեր առհասարակ ուժը տեսանելի զարժանող, Հայոց երկրին իւրա-յատուկ նկարագիրը կարկառու, հայ գիւղացին բնութագրող եւ թուրքը սեւազրոյզ վերի պարբերութիւնները, չորսն ալ, «նալը լնրամ վրայ» վէպի Հայաստանեան տպագրութիւնէն զուրս շարած է Կ. Ջարեան, նոր չափերուն յարմարելու համար յանձն առած է հազար ուրացում, ու ահա, քննադատ մը, Հայաստանի սրտին վրայ շնչող յիսնամեայ մարդ մը, փոխանակ տառապելու այդ կոմակորութեան կամ ստիպումին համար, «պատմութեան երիտասարդութիւն» կը տեսնէ այդ ողբերգութեան մէջ, «արւեստի պատիւը» փրկող մարդու ժե՛սք կը տեսնէ, «այդ ու հացի սրբութիւն», «արտի ու խղճի թելագրանք»:

Կարելի չէ Ջարեանի պարագան իր ամբողջական ծայրերով ներկայացնել հոս: Երկրորդ անգամ ատոր պէտքը զգացող ալ չկայ: Անդրազարծանք դայթակղութեան գայն հովանաւորող մարդուն ողին, կողմնակալութիւնը, կուսակցամոլութիւնը, դրական չափանիւններուն խախտութիւնը բացայայտելու անհրաժեշտութենէ մը մղուած: Վերի նմոյշներուն օրինակով կատարուած ամբողջ վէպ մը պայթակղութիւնը պաշտպանութեան տակ ասանելու փութկոտութիւնը սիրտ կ'ուզէ անշուշտ եւ քաջութիւն կ'ուզէ եւ այս քաջն է, որ նոր յոգուած մը գրած է մեզի դէմ, պնդելով, որ

«Մուռ մարդու քուները ուզիլ չի լինի»:

Անշուշտ, մեր անձին վերաբերող այս ոճն ու ոգին առանձին նշանակութիւն մը չունին: Պիտի ուզէինք սակայն, որ մարդիկ փաստերուն առնչութեամբ պարկէշտ բլլան եւ կիրքը, դոնէ՛ այդ վայրկեանին, ասնձրի քիչ մը: Մտածում մը ներկայացնեն ամբողջութեամբ, զայն չանջատե՛ն իր մթնոլորտէն, պահեն կատայցը եւ ապա միայն թափ տան իրենց եռանդին, զարնեն, փշբեն մոխրացնեն ապա՛: Դժբախտաբար, վաղգէն Մնացականեանի յոգուածը զուրկ է այս հիմունքէն: Վաղգէն Մնացականեան, ի մասնաւորի քաղաքական տարբեր համոզում ունեցողներուն հետ հոգած ատեն, պաղարին դասողութեամբ տող փոխելու սովորութիւն չունի արդէն: Վայրկեան առաջ կ'ուզէ իր հակառակորդին անձին ուզողն սլաքը, այս պարագային մեզի, այսինքն «Բշուռակալսն»ին, որուն

«Գիրքին վերնագիրն էլ անկեղծ խոստովանութիւն է՝ «Ես այդ չունն եմ» եւ

«Հայրենիքի աշքերին ուղիղ նայելու, նրա հետ «հին ու նոր» հաշիւներ մտքերու վերջին միջոցը հաշիւն է»:

Այս քանով չի բուարարուիր Մնացականեան, թռիչքներու կը ձեռնարկէ տակաւին, կը հասնի մինչեւ Պրազիլիս, մինչեւ Մեքսիկա, եւ այդ հրկիրներու դրողներէն մեր հայրենիքի մասին քանի մը սովորական խօսքեր մէջբերելով՝ բողջատութիւններ կ'ընէ ու հարց կու տայ՝

«Մի պահ կողմ-կողմի դրէք օտարին եւ Սնայեանին եւ կը տեսնէք, բէ ա՛լ է ԻՍԿԱԿԱՆ ՕՏԱՐԸ»:

Այս մեկի խօսքերը, սրամիտ ըլլալ ուզող այս ծիծաղաւարտ փորձաբը, ածան վերագրումներ ընկնու եւ նոյնքան ածան բողոքատուութիւններու արդիւնքը Հաղօրդելու այս դիրութիւնները, մեր կարծիքով, արդար մարդու եւ քրտուր մարդու արարքներ չեն:

«Մուռ մարդու ստուերը» ստուերագրող իր ընդարձակ ճապագութեան մէջ՝ Վազգէն Մնացականեան Հայրենիքի հասկացողութիւնը սովորական կարգերուն հետ չփոթելու արմատական թիւրփմացութեան մը վերայ կռթնած՝ դուրս կու տայ այնպիսի խեղճութիւններ, որոնց հեղինակը ոչ ոք պիտի ուզէր ըլլալ: Ու ստոր պատճառը բարդ չէ: Երբ մարդոց բուն մտածումը, իրական ապրումը եւ պարտականութեան մը կամ մոլութեան մը ճշունտով թուղթին յանձնուած տողերը վէճ ունենան իրարու հետ, արդիւնքը տարբեր չի կրնար ըլլալ:

Վազգէն Մնացականեան կ'ըսէ.

«Ու եթէ հարկ համարեցիմք յօստ բանալ նրա գրքի մասին, ապա նկատի եմք ունեցել միայն ու միայն ընթերցողի շահը»:

Գիրք մը, ճի՛շտ է, կրնայ վտանգել ընթերցողին շահը, ու ընթերցողին շահը պաշտպանելը պարտքն է սակէն քննադի, պայմանաւ սակայն, որ ընթերցողին բան մը բռնուի, մարդու մը հասցէին հայհոյելով ընթերցողը բուարարած ըլլալու պատրանքով չօրօրուի քննադատը: Վազգէն Մնացականեան բան չէ ըսած, հայհոյած է միայն, կը ցաւի՛նք:

Կը ցաւինք մանաւանդ անոր համար, որ այս մարդը միշտ աննախանձելի ու միշտ անժողանդ մնայու դատաւարտուած սովական արհեստաւոր մը չէ: Բոլորովին սպարդին քննադատ մը չէ Վազգէն Մնացականեան: Խելացի էջեր չեն պակտիր անոր թուղթերուն մէջ: Հայաստանի քննադատներուն մօտ ասուղուած տկարութիւնն է իր տկարութիւնը, որ կը ցցէ զլուխը սակէն անգամ, որ արտասահմանի կողմը դառնայ: Արդարեւ, Հայաստանի քննադատները, բոլորն ուլ, այս կողմ դարձած ատեն, անճանաչելի կը դառնան, կամ բոլորովին կը կուրծնան, կամ անգամ չնդեայ բաներ կը տեսնեն: Կրնան, օրինակ, ջատագովական մը ստորագրելի է հաշիւ Սիտակի մը ու նոյն դիրութեամբ մուկելիլ Օշականի դէմ: Կամ սնչութիւն մը դրոսատելով իրենք զիրենք կը դատապարտեն, կամ կ'ոչընչանան կիրքի մը մոխրակոյտին մէջ: Վազգէն Մնացականեան բացառութիւն չկաղմեց ու վերջին իր ելոյթներով սկսու շատ յիշեցնել տխուր անցեալի մը գրականութեան մէջ սպրդած ա՛յն ստուերը, որ կը կոչուէր Հրայհայ Գրիգորեան: Հայաստանի մէջ սպրդող Գրիգորեանի հանգուցեալ մը տայնութիւնը ատենէ մը է վեր սկսած է երիւնալ Մնացականեանի էջերուն մէջ, ու լաւ պիտի ըլլար, եթէ այս վերջինը քիչ մը մտածէր կուսակցական շափանիչներով առաջնորդուած իր նախորդին անփառունակ վախճանին: Իրական կիրք մը չէ իր ելոյթներուն տուն տուող պատճառը: Իրական կիրքը անպայման պիտի կրնար թեան մը ծնունդ կու տայ եւ արդիւնքը այսքան չի ճապաղիր: Իր կիրքը արհեստական կիրքն է, անպայման հակառակորդին դէմ բան մը ըսելու մոլուցքը, որ կը խեղճացնէ եւ կրուածքը եւ դրոսողը:

Պ. Ս.



ԲԱԳԻՆԻ ՖՈՆՏԻՆ

Օր. Սիրվարդ Զարբեան (Պրագիլ, Սան-Փաւլօ), 50 էջ. ռսկի կը նուիրէ «Բագին»ի փոնտին

Ռուրէն Կաւար (Ատիս-Ապապա), 25 տար կը նուիրէ «Բագին»ի փոնտին

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԹ ՍՏԱՅԱՆՔ

- 1.- Կեանքը Հին Հոնովաքիան ճանապարհի վրայ (վէպ) - վառան Թաթուրեան - Երեւան, 1967
- 2.- Գիտելի կեանքը - Թղտակեան - Երեւան, 1967
- 3.- Եղբայրերը Ձեռնարկի տեսիլ (վէպ) - Ստեփան Ալազանյան - Երեւան, 1967
- 4.- ԼԱԶԱՐԵԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Վ. Ա. Գիւլյան - Երեւան, 1967
- 5.- ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ (Գ. Խատար) - Հրաչեայ Բոչար - Երեւան, 1967
- 6.- ՃԱԿԱՏԱԳԻՐՆ ԸՆՏՈՅ (վէպ) - Սուրէն Այվազեան - Երեւան, 1967
- 7.- ԽԱՌՆԱՓՆԹՈՒՐ (օրագոյց) - Յովհաննէս Ղուկասեան - 1967
- 8.- Կեանքի ՀեՏ (պատմաւածագներ) - Ժորժ Բարսեղեան - Թեհրան, 1967
- 9.- ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ՏԱՐՕՆԻ ԵՂԵՆԻՆԻ (հնամեծ ռուսագրասիրտներ) - Ալան Տարսեղեան - Սան Ֆրանցիսկօ, 1967
- 10.- ՊԻՏԻ ԶԱՐԶԱՐԵՄ ԲԱՌԵՐԸ - Գեորգ Աննան - Պէրու, 1967
- 11.- ՊՈԿՈՒԱԾԻ ԹԵՐԹԻԿՆԵՐ (Սէր, Յոյս), պրակ Ա. - Խ. Եզանեան (Խ. Զաւէն) - Թեհրան, 1965
- 12.- ՍԼԱՔՆԵՐ ԵՒ ԳԷՄՔԵՐ (Բ. Խատար) - Սեդրա Բ. Թէրզեան (Ս. Կոսմ) - Պուէնոս-Այրէս, 1967

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՒՍԲ
ՀԱՏԱՎԱՀԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ :-

G. SASSOUNI

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban